ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**75**-րդ տարի) **Թիվ-4** (1650) Ապրիլ 2021

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Դատապարտված ենք այլ կերպ ապրելու (էջ 1-2)

2- Հայ դատ

Անի Մելքոնյան
Հայկական հարցից Հայ դատի պայքար (էջ 3-9)

Գէորգ Յակոբճեան
Ճանաչո՞ւմ, թէ՞ կանխարգիլում (էջ 10-11)

Անի Ոսկանյան
Հայերի հողազրկումը որպես Օսմանյան կայսրության պետական քաղաքականություն (էջ 12-14)

Դերենիկ Կարոյի Մելիքեան
Ռազմական գործողութիւնները Հիւսիսային Իրանում եւ քրիստոնեայ բնակչութեան (հայերի եւ ասորիների) կոտորածները. 1914-1916թթ. (մաս 1-ին) (էջ 15-16)

3- Հասարակություն

Մարի Հովհաննիսյան
Ժխտումն ընտրություն է , որն ունի առաջացման մեկ պատճառ՝ կամք (էջ 17-19)

4- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայկական պետության «զրոյական կետը» բազմաթիվ հնարավորություններ է պարունակում հայ ժողովրդի համար (էջ 20-21)

Արա Նռանյան
Առանց գիլյոտինի առաջընթաց չի լինում: Էվոլյուցիո՞ն, թե՞ հեղափոխական զարգացում (էջ 22-25)

5- Տարածաշրջանային

Հարցազրույց Յերժի Մարեկ Նովակովսկու հետ
Քաոս Կովկասում. երկրորդ Մերձավոր Արևելք (էջ 26-29)

Արտյոմ Տոնոյան
Հետպատերազմական Ադրբեջանը թուրք-ռուսական մրցակցության ծիրում (էջ 30-32)

6- Աշխարհաքաղաքական

Արմեն Պետրոսյան
Սիրիական հակամարտության 10 տարին. արյունաքամ երկիր, կարգավորման մշուշոտ հեռանկար (էջ 33-37)

7- Պատմության լուսարձակ

Գոհար Խանումյան
Սողոմոն Թեհլիրյան. ծննդյան 125-ամյակի առթիվ (38-42)

8- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Յեղապաշտութեան վտանգաւոր ժահրը (էջ 43-44)

Դատապարտված ենք այլ կերպ ապրելու

Անհրաժեշտ էր, որ Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց ապրող սերունդները շոշափելիորեն կզգան՝ ինչ են նշանակում թուրքական վտանգն ու վայրագությունը: Այն, ինչ տեղի ունեցավ Արցախյան երրորդ պատերազմում, կարելի է համարել ուղղակի շարունակությունը մեկդարյա վաղեմության իրադարձությունների կամ, ավելի ստույգ, թուրքական ռասիստական, զավթողական նկրտումների, որոնց ճանապարհին գուցե թե ամենաանհանդուրժելի երևույթը հայության գոյությունն է: Առաջին համաշխարհային պատերազմում պարտության ու կայսրության կործանման հորձանուտում հայտնված Թուրքիայի համար անգամ գլխավոր նպատակ էր մնում հայության բնաջնջումը: Ինչպես ակնհայտ փաստերն են վկայում, երիտթուրքերին փոխարինած Մուստաֆա Քեմալը ձգտում էր այդ գործն ավարտին հասցնել բնօրրանում ապրող արևելահայության վերջին հատվածի բնաջնջմամբ, և միայն փոփոխված աշխարհաքաղաքական իրողությունները խանգարեցին այդ ծրագրի իրագործմանը: Գլխավոր հարցն այս դեպքում, իհարկե, ինքնանպատակ ատելությունը չէ, այլ այն իրողությունը, որ իր բնակության տարածքով և աշխարհաքաղաքական դիրքով հայությունը հիմնական խոչընդոտ էր նախ՝ նվաճված երկրի ամբողջական թուրքացման ճանապարհին և ապա՝ անանցանելի պատ էր պանթուրքիզմի և պանթուրանիզմի ճանապարհին: Որքան էլ արտառոց կարող է թվալ, անցած տասնամյակներին թուրքական պետական-քաղաքական և հանրային շրջանակներում ատելությունն ու անհանդուրժողականությունը հայության նկատմամբ շատ ավելի մեծ էին, քան հայության ատելությունը թուրքերի նկատմամբ:

Երբ Հայաստանի այսօրվա ղեկավարը փորձում է երևույթը բացատրել այնպես, թե կարծես հայտնի չէ՝ թշնամությունը ում մեղքով է ընթացք առել, ով առաջինը սկսեց, հետո ով ում պատասխանեց, նա կամ երկրի ղեկավարի համար աններելի չափով տգետ է, կամ փորձում է ձեռնածություն անել ճշմարտության հետ՝ ինչ-ինչ պղտոր նպատակներով:

Արևմտահայության դուրսմղումը իր հազարամյա բնօրրանից, սկզբում խաղաղ՝ տնտեսական, իրավական և այլ ճանապարհներով, սկիզբ է առել դեռևս 19-րդ դարի առաջին կեսին, իսկ նույն հարյուրամյակի վերջին տասնամյակին որդեգրվել է արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ծրագիրը, որը դարձել էր առհասարակ բնիկ փոքրամասնությունների տարածքները յուրացնելու թուրքական գործելակերպ: Այս ամենը, իհարկե, պատմական անցյալ է, սակայն սկզբում միապետական կայսրության, այնուհետև հանրապետական իրարահաջորդ կառավարությունների համար ցեղապաշտական և նվաճողական գաղափարախոսությունը չփոխվեց: Եթե փորձենք զուգահեռներ տանել, օրինակ, նացիստական Գերմանիայի հետ, ապա պետք է փաստենք, որ նացիոնալ-սոցիալիստների անկումից հետո Գերմանիայում արմատախիլ արվեցին ֆաշիստական գաղափարախոսությունը և առհասարակ դրան առնչվող

ամեն բան, անգամ խորհրդանշանների կամ գործող անձանց անունների շրջանառումը: Ֆաշիստական Թուրքիան երբեք չի հրաժարվել իր ռևանշիստական և մարդատյաց վարդապետությունից, և ցանկացած նոր իշխանություն դառնում է դրա կրողը, կամ, ավելի շուտ, իշխանության հավակնող ցանկացած ուժ հաջողության է հասնում հենց այդ գաղափարների հետևորդը լինելու շնորհիվ:

Ինչ տարբերություն, օրինակ, հայակուլ Թալեաթի և արնախում Էրդողանի միջև: Թերևս միայն ժամանակային առանձնահատկությունը, որը թելադրում է համապատասխան գործելակերպ: Էրդողանը չի էլ թաքցնում, այլ ընդգծում է այդ ժառանգական կապը՝ արժևորելով երիտթուրք դահիճների հիշատակը, քայլ առ քայլ և բացահայտորեն կենսագործելով նեոօսմանիզմի կայսերապաշտական ծրագրերը, շարունակելով ներկայիս Թուրքիայի տարածքի բնիկ ժողովուրդների ինքնության դեմ ուղղված անողոք պայքարը, իսկ հայերին ուղղակիորեն անվանում է «մեր թրի մնացորդները»: Էրդողանը հարյուր տարվա սպասումից հետո, նպաստավոր պահն ընտրելով, կատարեց պանթուրքիզմի ծրագրի հերթական քայլը՝ դառնալով Արցախի դեմ նոր պատերազմի գլխավոր հովանավորն ու կազմակերպիչը, Արևելահայաստանի արևմտյան՝ Կարս միջնաբերդի անկումից ճիշտ հարյուր տարի անց գրավելով արևելյան՝ Շուշի միջնաբերդը և ուղիներ հարթելով դեպի թուրքական երազանքի նպատակակետերը՝ Ռուսաստանի հարավ և Կենտրոնական Ասիա: Ի դեպ, ոչ պատահականորեն նա այս իրողությունների առիթով հիշեց երիտթուրք պարագլուխներից մեկի՝ Էնվերի անունը:

Այս բոլորը, իհարկե, հայտնի ու ակնհայտ իրողություններ են, սակայն անընդունելի է թվում, երբ այս ամենի խորապատկերին Հայաստանի քաղաքական ղեկավարությունը տրամադրվածություն է դրսևորում՝ արմատապես վերանայելու թշնամի զույգ պետությունների նկատմամբ պետական դիրքորոշումը վերջիններիս հետ առևտրական փոխհարաբերություններ հաստատելու և այդ նպատակով սեփական երկրով իր կողմից անվերահսկելի հաղորդակցական ուղիներ տրամադրելու հարցում: Արտառոց է թվում նաև, որ այս բոլոր երազանքներն ի հայտ եկան կործանարար պատերազմից անմիջապես հետո և նույն ժամանակ, երբ թշնամին դեռևս տարածքային ու քաղաքական

նոր բնագծեր նվաճելու ոգևորության մեջ է, չի դադարեցնում սադրանքները, հավակնությունների ու հոխորտանքի ցուցադրումը: Հայաստանի երիտասարդ իշխանությունների այս «համարձակ» գաղափարները միանգամից ծնվեցին, հայության ռազմավարական առավելությունները կորցնելուց հետո, թե՞ կարելի է տրամաբանական կապ տեսնել այս քաղաքականության ջատագով նոր ուժի՝ իշխանության գալու պահից ձեռնարկած քայլերի մեջ՝ ազգային ավանդական արժեքների, կրթական ու գիտական ազգային հայեցակարգերի վերանայումից և դրանց կրողների դեմ ձեռնարկված արշավից մինչև պատերազմի ժամանակ դրսևորած անհասկանալի վարքը, անակնկալ պարտությունը և դրան հետևած քաղաքական այս նոր կողմնորոշումները: Պատահա՞կան է, որ դեռևս հետպատերազմյան ծանր մթնոլորտում երիտհայերը սկսեցին մեկը մյուսի ետևից հայտարարել, թե մեր կողմից նախկինում ազատագրված հողերը հայությանը չեն պատկանել: Ի՞նչ նպատակով հնչեց երկրի ղեկավարի արտահայտությունը այն մասին, թե տասնամյակներ առաջ Շուշին բացարձակ մեծամասնությամբ ադրբեջանաբնակ է եղել: Մի կողմ թողնենք այսպես արտահայտվողներին քաջ հայտնի պատմական փաստը, որ նախկին ԼՂԻՄ-ին հարակից շատ ավելի ընդարձակ տարածքներ ռուսական իշխանությունների կողմից են նվիրաբերվել նոր մոգոնված Ադրբեջանին: Բոլոր այս արտահայտությունները նպատակ չե՞ն հետապնդում հայ հասարակությանը համոզելու, թե բոլոր կորուստները, անգամ «դժգույն ու դժբախտ» Շուշիի հանձնումը եղել են տրամաբանական ու արդարացված և մեծ ողբերգություն չեն: Անդրադառնալով արդեն երեք տարի Հայաստանում հաստատված իրավիճակին՝ պետք է արձանագրենք, որ տեղի է ունեցել ամենաաներևակայելին ու սարսափելին՝ Արևմուտքին ու Թուրքիային հաջողվել է Հայաստանում նախապատրաստել թրքամետ դավաճանների խառնախմբի և բերել նրան իշխանության: Դավաճանության ստվերն ամենուր է՝ երկրի խորհրդարանից մինչև ազգային անվտանգության ու պաշտպանության համակարգեր:

Կգա, իհարկե, պատեհ ժամանակը, երբ մենք պարտավորված կլինենք մանրամասնորեն քննելու այն հարցը, թե ինչպես պատահեց, որ անկախության 30 տարիներին թրքասիրությունն այսպես ծլարձակեց մեր մեջ: Ինչո՞ւ հանդուրժվեց, որ հայ դիվանագետը արտերկրում մտերմական փոխհարաբերություններ հաստատի թուրք շրջանակների հետ, գործարարը գործնական հարաբերություններ ձևավորի Թուրքիայում, ով չի ալարում բանակցում է, այսպես կոչված, «ժողովրդական դիվանագիտության» ձևաչափի շրջանակում, և մի օր էլ պետք է պարզվեր, որ հայ մասնագետները թուրքերի հետ ճշգրտում են հայկական կրթական չափորոշիչները, նորացված գնահատականներ ցեղասպանության ու Արցախյան պատերազմի վերաբերյալ և անգամ հայերի բացած դռներով քիթթները խոթում են ցեղասպանության թանգարանի ու այլ ազգային արխիվներ: Իսկ ամենաակնառու հետևանքն այն է, որ ամիսներ առաջ ցեղասպանական գործողությունների ենթարկված հայության մի շոշափելի հատվածն այսօր, «լվացված ուղեղով» հետևում է, թե թուրքական սպառնալիքն ինչպես է սև ամպի պես խտանում հենց իր գլխին:

Համեմատության համար փորձենք մտաբերել, թե անցած 30-ից ավելի տարիների ընթացքում եղե՞լ է մի ադրբեջանցի, ով կասկած է հայտնել Արցախի ադրբեջանական լինելու վերաբերյալ կամ կողմ է արտահայտվել, որ Արցախն անկախանա իր երկրից: Հնարավո՞ր է տալ մեկ թուրքի անուն, ով անցած 106 տարիների ընթացքում մեկ անգամ ասել է, թե հայերին թեկուզ մեկ մետր հող պետք է վերադարձնել իրենց հայրենիքից: Իսկ ի՞նչ է տեղի ունեցել մեզ, մեր հավաքական հիշողության, արժանապատվության, վտանգի զգացողության հետ: Առողջ ու արթուն բնազդներով հասարակությունը կարո՞ղ էր գեթ մեկ օր հանդուրժել այսօրվա դավաճան իշխանության գոյությունը:

Երբ անկախացման օրերից ի վեր Դաշնակցությունը անդադար գոռում էր ազգային քաղաքականության, ազգային կրթության, ազգային մշակույթի, ազգային տնտեսության և առհասարակ ամեն ներհայկական երևույթ ազգային բովանդակությամբ օժտելու մասին, ոմանք հեգնում էին, ոմանք՝ անտարբերությամբ արձագանքում, ոմանք էլ՝ Դաշնակցության «հին բարդույթների» հետևանք համարում այս ահազանգ պարունակող մոտեցումները: Չհաշված հասարակական-քաղաքական-գիտական առանձին շրջանակները՝ ըստ էության, երկրում ազգային բովանդակության գերակայության գաղափարը Դաշնակցության հետ հետևողականորեն պաշտպանել է միայն Հայ Առաքելական սուրբ եկեղեցին: Այնինչ Ադրբեջանում, օրինակ, դեռևս մանկապարտեզից են սովորեցնում, թե Ղարաբաղն իրենցն է, իսկ հայերն ադրբեջանցիների ոխերիմ թշնամիներն են: Մենք մոտ ապագայում պետք է արմատապես վերանայենք մեր մոտեցումները՝ գաղափարական հիմնասյուներ հաստատելով մեր ազգային և պետական կյանքում: Անտեղի չէ այս դեպքում ասել, որ մենք դատապարտված ենք այդպես ապրելու, դառնալու այնքան ուժեղ, որ ապահովագրված լինենք արդեն մոտ երկու հարյուր տարի մեր տեսակը ոչնչացնելու ծրագիրը հետևողականորեն իրականացնող և այդ նպատակի վերջին փուլին հասած արյունարբու ոսոխի սպառնալիքներից: Որքան էլ ցնորական թվա, մենք պետք է այնպիսի առավելություններ ունենանք, որ մեր արյանը ծարավ մարդկության տականքը վախենա մեզ հետ գործ ունենալուց: Այդ մասին մեզ դաս են տալիս մեր նահատակները, որոնց հիշատակին մենք կխոնարհվենք օրեր անց, և դա են մեզ հրամայում գալիք սերունդները, որոնց պարտավոր ենք թողնել ապահով ու հզոր հայրենիք:

Հայկական հարցից Հայ դատի պայքար

Անի Մելքոնյան
Պատմաբան, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Խոսելով Հայոց ցեղասպանության մասին՝ չափազանց կարևոր է անդրադառնալ նաև Հայկական հարցին և Հայ դատին:

Հասկանալու համար, թե ինչ է Հայ դատը, երբ ու ինչպես է սկսվել դրա համար պայքարը, նախ մի փոքր խոսենք Հայկական հարցի մասին:

Խորհրդահայ պատմագրության համաձայն՝ Հայկական հարցն առաջացել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո՝ Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովներում: Իրականում, սակայն, Հայկական հարցն ի հայտ եկավ այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը և հայտնվեց օտարների տիրապետության տակ: Այդ ժամանակ էր, որ առաջացավ հայ ժողովրդի հայրենիքում հայկական ազգային, միացյալ և անկախ պետության վերականգնման անհրաժեշտությունը:

Գերխնդիր ունենալով իր պատմական հայրենիքում անկախ հայկական պետականության վերակերտումը՝ «հայ ժողովուրդը պատմության անբարենպաստ փուլերում հարկադրված է եղել վարել բարեփոխումների իրականացման, ջարդերի և ավերածությունների դեմն առնելու մարտավարություն[1]»:

Չենք անդրադառնա այն բազմաթիվ տեսակետներին, թե որն է Հայկական հարցի առաջացման թվականը՝ 1045-ը, 1236-ը, թե՞ 1375-ը, քանի որ յուրաքանչյուր թվականի համար կան հիմնավորող բազմաթիվ տեսակետներ: Նշենք միայն, որ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության ասպարեզ մտավ 1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերով: Այսպես՝ 1878 թ. փետրվարի 18-ին (նոր տոմարով՝ մարտի 3-ին) կնքվեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը, որով ավարտվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը. Սան Ստեֆանոյի պայմանագրում հատուկ հոդված մտցվեց Արևմտյան Հայաստանի վերաբերյալ:

Սան Ստեֆանոյի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող 16-րդ հոդվածով նախատեսվում էր վարչական բարեփոխումներ իրականացնել Արևմտյան Հայաստանում: Այդ հոդվածը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Նկատի ունենալով այն, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի՝ տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից[2]»:

Այսպիսով՝ Օսմանյան Թուրքիայի կառավարությունը պարտավորվում էր բարենորոգումներ իրականացնել

Արևմտյան Հայաստանում, իսկ Կարսը, Արդահանը, Ալաշկերտի հովիտն ու Բայազետը անցնում էին Ռուսաստանին: Սան Ստեֆանոյի պայմանագրով ուժեղանում էին Ռուսաստանի դիրքերը թե՛ Բալկաններում, թե՛ Ասիայում, ինչը անհանգստություն պատճառեց հատկապես Անգլիային և Ավստրո-Հունգարիային: Վերջիններիս պահանջով Օտտո Բիսմարկի նախաձեռնությամբ Բեռլինում գումարվեց վեհաժողով՝ Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու համար: Բեռլինի վեհաժողովում արևմտահայության պահանջները ներկայացնելու համար ձևավորվեց հայկական պատվիրակություն՝ Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ:

Բեռլինի վեհաժողովը սկսվեց 1878 թ. հունիսի 1-ին և ավարտվեց հուլիսի 1-ին: Հայկական պատվիրակությանը թույլ չտրվեց մասնակցել վեհաժողովի նիստերին: Բեռլինի վեհաժողովում Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը փոխվեց 61-րդի և վերաձևակերպվեց այսպես. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառումը[3]»: Ինչպես տեսնում ենք, Բեռլինի 61-րդ հոդվածով Հայաստան անվանումը հանվեց, և մտցվեց «հայաբնակ վայրեր» անորոշ ձևակերպումը: Սա նշանակում էր, որ Թուրքիան ազատվեց Արևմտյան Հայաստանը Հայաստան ճանաչելու պարտավորությունից:

Անգլիայի պահանջով Թուրքիային վերադարձվեցին Ռուսաստանի կողմից գրավված Էրզրումը, Բայազետը, Ալաշկերտի հովիտը և հարակից տարածքները:

Ռուսաստանին մնացին Կարսը, Արդահանը և Արդվինը, որոնցից էլ կազմվեց Կարսի մարզը, որը գոյություն է ունեցել մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

Բեռլինի վեհաժողովից հայկական պատվիրակությունը վերադարձավ ձեռնունայն և հուսախաբված: Դրանից հետո էր, որ Մկրտիչ Խրիմյանը ձևակերպեց «երկաթե շերեփի» գաղափարը:

Թուրքիան, սակայն, գոհ չէր անգամ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով իր չնչին զիջումներից, ուստի Աբդուլ Համիդ II-ը որոշեց Հայկական հարցը լուծել թուրքական մեթոդով՝ կոտորածների միջոցով:

Միջազգային դիվանագիտության օրակարգ մտած Հայկական հարցը մեծ պետությունների ձեռքին գործիք դարձավ Թուրքիային ճնշելու և իրենց ձեռնտու զիջումներ կորզելու համար, իսկ Թուրքիան, ի պատասխան դրա, Հայկական հարցը «լուծում» էր ջարդերով և ազգային ու կրոնական հալածանքների խորացումով:

Անխնա մորթվող արևմտահայության իրավունքների պաշտպանության համար էր, որ ասպարեզ եկան հայ քաղաքական կուսակցությունները, որոնք գտնում էին, որ արևմտահայության ֆիզիկական պաշտպանությանը և Հայկական հարցի լուծմանը հասնելու համար պետք է դիմել զինյալ պայքարի, քանի որ զինյալ պայքարով չուղեկցվող քաղաքական պայքարը անպտուղ էր:

Հաջորդող իրադարձությունների վրա շատ չծանրանալու համար ասենք միայն, որ Սասունի 1894 թ. ապստամբության պարտությունից և դրան հաջորդած խաղաղ բնակչության ջարդից հետո միջազգային, այսպես կոչված, հայասիրական շարժումների ճնշման ներքո 1895 թ. մայիսի 11-ին Կ. Պոլսում Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները հայկական նահանգներում (Կարին, Բիթլիս, Վան, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) բարենորոգումներ իրականացնելու նոր ծրագիր ներկայացրին Բարձր Դռանը: Ծրագիրը բաղկացած էր 13 գլխից և 40 հոդվածից: Դրանով նախատեսվում էր որոշակի բարեփոխումներ իրականացնել վերը նշված նահանգների կառավարման համակարգերում, կարգավորել հարկահավաքությունը և այլն: Այս խիստ չափավոր ծրագիրը չէր բավարարում հայության պահանջները, բայց, այնուամենայնիվ, այն Բեռլինի վեհաժողովից հետո մեծ տերությունների կողմից 61-րդ խիստ անորոշ հոդվածի բովանդակությունն առարկայացնելու առաջին փորձն էր և իրագործվելու դեպքում, անշուշտ, որոշ օրինականություն կմտցներ Արևմտյան Հայաստանում ու կզսպեր կամայականությունները: Բայց սուլթանը մտադիր չէր իրականացնել անգամ նման չափավոր մի ծրագիր: Աբդուլ Համիդ II-ը ամիսներ շարունակ տարբեր պատրվակներով ձգձգում էր բարենորոգումների ուղղությամբ քայլերի ձեռնարկումը և միայն Բաբը Ալիի դեպքերից (խաղաղ ցույցն արյան մեջ խեղդելուց) հետո՝ հոկտեմբերի 18-ին, նախապես որոշ

Սան Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումը

փոփոխություններ կատարելով, ստորագրեց մայիսյան բարենորոգումների ծրագիրը: Ձևականորեն կազմվեց բարենորոգումներն իրականացնող հանձնաժողով՝ Շարիր փաշայի ղեկավարությամբ, բայց, սուլթանի հրապարակած բարենորոգումները կայսրության հայաբնակ շրջաններում ընդհանուր կոտորածի ազդանշան հանդիսացան: Սպանվեց 300.000 հայ:

1895-1896 թթ. համիդյան ջարդերը հայ հեղափոխականներին դրդեցին դիմելու առավել արմատական քայլերի, սակայն միաժամանակ նրանք համոզվել էին, որ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները բավարար չափով արձագանք չեն գտնում միջազգային հանրության շրջանում, ուստի նրանց ուշադրության կենտրոնում է հայտնվում կայսրության մայրաքաղաք Կ. Պոլիսը:

Այդ օրերին էր, որ Հայկական հարցի վրա մեծ պետությունների ուշադրությունը բավարար չափով սևեռելու համար ազգային-ազատագրական պայքարը ղեկավարող ՀՅԴ-ն որդեգրեց «զուգակցված հարվածների» մարտավարությունը, որին բնորոշ էր «Երկրում, Կ. Պոլսում ու կայսրության ծովեզրյա խոշոր քաղաքներում միաժամանակյա կամ ժամանակի առումով մեկը մյուսին անմիջապես հաջորդող երկու և ավելի զուգակցված ու մասշտաբային հարվածներ հասցնելու գործելաոճը[4]»: ՀՅԴ Կ. Պոլսի ԿԿ-ն մշակեց նախադեպը չունեցող մի համարձակ ծրագիր՝ օսմանյան դրամատան՝ բանկ Օտոմանի գրավումը:

Դրան զուգահեռ՝ «Նախատեսվում էր հայ մարտիկների ռմբային հարձակում Սամաթիայի զորանոցի վրա. Ղալաթիայի կամրջի վրա վարչապետի կառքի ոչնչացում և ռմբային հարվածներ դեպի դրամատուն շարժվող զորքերին[5]»: Այս գործողություններն ունեին երկու նպատակ՝ նախ՝ վրեժ լուծել հայ ժողովրդի 1895-1896 թթ. ջարդերի համար, երկրորդ՝ դնել քաղաքական պահանջներ՝ ապահովելով Հայկական հարցին մեծ պետությունների միջամտությունը՝ հասնելու Մայիսյան բարենորոգումների իրականացմանը: Նշված գործողություններին հաջորդած ամիսներին մեծ տերությունների ձեռնարկած քայլերը կաշկանդեցին Աբդուլ Համիդ II-ին իր հետագա գործողություններում:

Սակայն Կրետեում բռնկված հույն-թուրքական պատերազմը երկրորդ պլան մղեց Հայկական հարցը: Արդեն 20-րդ դարի սկզբին բրիտանական դիվանագիտությունը հրաժարվեց Հայկական հարցին որևէ միջամտությունից՝ վախենալով, որ դրանով կարող է նպաստել Փոքր Ասիայի մասնատման արագացմանը, ինչը գուցեև իր օգտին չլինի: Բրիտանացիները հույս ունեին, որ թուրքական իշխանությունները կփորձեն ի վերջո հայկական նահանգներում բարենորոգումներ իրականացնել:

Թվում էր, թե իրավիճակը կփոխվի երիտթուրքական հեղաշրջումից հետո, երբ սկզբնական շրջանում երիտթուրքերը հանդես էին գալիս «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսով, ինչը ենթադրում էր կայսրության բոլոր ժողովուրդների իրավահավասարություն, եղբայրական հարաբերություններ և ազատություն, բայց «1908 թ. իշխանության եկած երիտթուրքական կառավարությունը ոչ միայն չէր պատրաստվում իրականացնել որևէ բարենորոգում երկրի արևելյան շրջաններում, այլև հրահրում էր ազգամիջյան թշնամանք, սատարում և քաջալերում էր տեղական իշխանությունների անօրինականությունները, հայերին պատկանող հողատարածքների բռնագրավումը, Բալկաններից գաղթած փախստականների վերաբնակեցումը, քրդական ջոկատների ավերիչ հարձակումները հայկական բնակավայրերի վրա, հայկական բնակչության թալանն ու կոտորածները: 1909 թ. ապրիլին երիտթուրքերն իրագործեցին Ադանայի նահանգի հայերի կոտորածը, որին զոհ գնաց ավելի քան 30000 մարդ[6]»:

Երիտթուրքերի՝ կեղծ բարեպաշտի դիմակը սկսեց պատռվել արդեն 1909 թվականից: Ինչպես տարբեր առիթներով նշել ենք, դեռևս 1910 թ. Սալոնիկի կոմիտեի գաղտնի նիստում էր Թալեաթը շարադրել հայերի և կայսրության մյուս քրիստոնյա ժողովուրդների ցեղասպանության ծրագիրը, որն ավելի հակիրճ ձևակերպված է երիտթուրք պարագլուխներից Նազիմի խոսքում. «Հայ ժողովրդին պետք է ոչնչացնել



Բեռլինի վեհաժողովը

Համիդյան կոտորածները Էրզրումում

հիմնովին, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր երկրում… ես ուզում եմ, որ այս հողի վրա թուրքը և միայն թուրքը ապրի և լիիշխան տեր լինի: Թող չքվեն բոլոր ոչ թուրք տարրերը՝ ինչ ազգության ու կրոնի էլ պատկանելիս լինեն[7]»:

Հայության համար օր օրի վատթարացող իրավիճակում հայ ժողովուրդն ու նրա ղեկավար շրջանակները այլ ելք չունեին՝ բացի մեկ անգամ ևս արտաքին ուժերի հետ հույսեր կապելուց՝ հիշեցնելով մեծ պետություններին Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի և 1895 թ. «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի մասին՝ պահանջելով դրանց իրագործումը: Հայ ժողովրդին հույս էին ներշնչում հատկապես 1912 թ. հոկտեմբերին սկսված Բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունն ու Ռուսաստանի հայանպաստ դիրքորոշումը:

«Եոյակ պետությունները բարենորոգումների հարցը գլխավորապես բարձրացրին հարվածելու համար և՛ Թուրքիային, և՛ նրա դաշնակից Գերմանիային: Հարցի բարեհաջող լուծումը պետք է սկիզբ դներ Թուրքիայից հայկական վիլայեթների անջատմանը[8]»:

1913 թ. Կ. Պոլսում հավատարմագրված դեսպանների ժողովում Ռուսաստանի դեսպան Մանդելշտամը եվրոպական պետություններին ներկայացրեց բարենորոգումների իր ծրագիրը, որով նախատեսվում էր հայկական վեց վիլայեթներից (Կարին, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) ստեղծել մի նահանգ, որի ընդհանուր նահանգապետը պետք է լիներ քրիստոնեահպատակ կամ եվրոպացի, որը նշանակվելու էր հինգ տարի ժամկետով՝ մեծ պետությունների համաձայնությամբ: Պետք է վերացվեր թուրքական հեծելազորը, հայերին պետք է վերադարձվեին նրանցից խլված հողերը, կամ տրվեր դրանց համարժեք փոխհատուցում, ինչպես նաև արգելվեր Բալկաններից գաղթած մահմեդականների բնակեցումը հայկական նահանգներում:

Հայկական հարցի վերաբացումից և տերությունների հնարավոր միջամտությունից խուսափելու համար դեռևս 1912 թ. դեկտեմբերին թուրքական կառավարությունը առաջ քաշեց մի ծրագիր, ըստ որի՝ պետք է բարենորոգումներ իրականացվեին հայկական

վեց նահանգներից չորսում (Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր), սակայն, ինչպես միշտ, ոչ մի երաշխիք չկար, որ դրանք կիրականացվեն: Այդ էր պատճառը, որ հայերը թերահավատ էին այդ նախաձեռնության նկատմամբ: Իսկ 1913 թ. հունվարին Էնվերը պետական հեղաշրջում իրականացրեց, և նոր կառավարությունը կտրականապես հրաժարվեց որևէ բարենորոգում կատարել Արևմտյան Հայաստանում:

1912-1914 թթ. ընթացքում մեծ պետությունների կողմից կազմվեց և ներկայացվեց հայկական բարենորոգումների փաթեթ, որը ստորագրվեց Օսմանյան կայսրության (ներկայացուցիչ՝ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշա) և Ռուսաստանի միջև: Փաթեթով առաջարկվում էր հայկական վեց վիլայեթներից կազմել երկու մեծ նահանգ՝ եվրոպական տեսուչների վերահսկողության ներքո, որոնց հանձնարարված էր հայ բնակչության խնդիրների լուծումը: Հայ ժողովրդի բախտը, սակայն, այս անգամ էլ չբերեց. 1914 թ. պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը, և հոկտեմբերին պատերազմի մեջ մտած Օսմանյան կայսրությունը չեղյալ հայտարարեց հայկական բարենորոգումների ծրագիրը: Մինչ այդ բարենորոգումների իրականացման ուղղությամբ որոշակի քայլեր արդեն կատարվել էին. «1914 թվի գարունը և ամառը անցան բարենորոգումների գործի կազմակերպման աշխատանքներով: Պետությունների առաջարկած թեկնածուներից Բ. Դուռը ապր. 2 (15)-ին ընդհանուր քննիչներ ընտրեց հոլանդացի Վեստենենկին և նորվեգացի Հոֆին և մայիսի 10 (23)-ին ստորագրեց նրանց հետ վերջնական պայմանը: Նախնական անհրաժեշտ աշխատանքները իրականացնելուց հետո Հոֆը մեկնեց իր պաշտոնատեղին՝ Վան. կարճ ժամանակից հետո պիտի մեկներ և Վեստենենկը: Ճիշտ է՝ թուրք կառավարությունը և Իթթիհատը չէին թաքցնում իրենց դժգոհությունը հայերից և անհամաձայնությունը բարենորոգումների ծրագրի հանդեպ: Ճիշտ է՝ ճանապարհին և Վանում թուրք իշխաններն ու հասարակությունը թշնամանքով ընդունեցին Հոֆին, իսկ Վանում թուրք պաշտոնյաները նույնիսկ հրաժարվեցին նրան ենթարկվել, բայց և այնպես «բարենորոգումները սկսել էին գործադրել», իսկ այս ինքնին արդեն կարևոր նվաճում էր համարվում[9]»: Գուցե նաև այս հանգամանքը քիչ դեր չխաղաց արդեն վաղուց կանխորոշված Հայոց ցեղասպանության իրականացման գործում. «Հայկական ջարդերը վաղուց որոշուած էին: Սկզբնական մտածումը թուրքերուն մօտ ծնաւ այն օրէն, ուր Մեծ Տէրութիւնները Օսմ. կայսրութիւնը բռնադատեցին ընդունելու իրենց կողմէն կարգուած քննթրոլէօռները հայկական վեց նահանգներուն համար: Թուրքերը իրենց դարաւոր գերիշխանութեան և վեհապետական իրաւունքներուն տրուած այդ ծանր հարուածը երբէք չներեցին Հայոց և, միջազգային շփոթութենէն օգտուելով, ծրագրեցին ու գործադրեցին այն ահաւոր եղեռնագործութիւնը[10]»: Այսպիսով՝ թուրքերը որոշեցին Հայկական հարցը «լուծել» թուրքավարի՝ զանգվածային կոտորածների միջոցով:

Բեռլինի վեհաժողովում հայկական պատվիրակության ղեկավար Խրիմյան Հայրիկը

Առաջին համաշխարհային պատերազմը ոչ միայն երիտթուրքերի համար իրենց պանթուրքիստական ծրագրերն իրագործելու հնարավորություն ստեղծեց, այլ նաև շեղեց գերտերությունների ուշադրությունը հայկական բարենորոգումների ծրագրից: «Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի ջանքերով ընդունված հունվարի 26-ի համաձայնագիրը՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու մասին, օրակարգից հանեց Առաջին համաշխարհային պատերազմը[11]»:

Արդեն 1914 թ. վերջերից սկսած՝ իրադարձությունները դասավորվեցին ի վնաս հայության. ««Իթթիհատ վե Թերաքգը» ոճրագործ կուսակցությունը խանդավառված էր պատերազմի ստեղծած պատեհ առիթով: Երիտթուրքերի պարագլուխների համար պատերազմն ասես մի մանանա էր՝ իջած երկնքից: Եկել էր «մեկ տարրից կազմված ու բաղկացած ազգ» ստեղծելու ժամանակը[12]»:

Ինչպես ասացինք, հոկտեմբերի վերջերին Թուրքիան մտավ պատերազմի մեջ և զորահավաք հայտարարեց. արևմտահայերը ևս զորակոչվեցին բանակ և զինաթափվելով սպանվեցին: «Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու գլխավոր պատճառներից մեկը, եթե ոչ ամենագլխավոր պատճառը Հայկական հարցի «լուծումն էր»»: Աննախընթաց արագությամբ և ի վնաս հայ ժողովրդի զարգացող իրավիճակից ելնելով՝ ՀՅԴ Արևելյան բյուրոն Ռուսաստանի պետական շրջանակներում ջանքեր էր թափում արևմտահայության փրկության համար, և դա այն պայմաններում, երբ հայության մահվան դատավճիռն արդեն կայացված էր, ինչի մասին է վկայում նաև Թուրքիայի ներքին գործերի նախարարության՝ Թալեաթի ստորագրությամբ արձակված հրա-

մանագրերից մեկը, որում մասնավորապես նշված է. «Հայերու համար Թուրքիոյ հողին մէջ ապրելու, աշխատելու պէս իրաւունքներ ամբողջովին ջնջուած են, և այս կառաւարութեանը, բովանդակ պատասխանատուութիւնը ստանձնելով, հրամայած է նոյնիսկ օրօրոցի մանուկները չթողուլ…[14]»:

Թալեաթի ասած «Թուրքիոյ հողը» Արևմտյան Հայաստանն էր՝ հայ ժողովրդի հայրենիքը, որը թուրքացնելու համար նրա բնիկ՝ հայ ժողովրդին բնաջնջելու որոշում էր կայացվել պանթյուրքիզմը որդեգրած երիտթուրքերի կողմից:

1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում սկիզբ առած ձերբակալություններով և դրանց հետևած հարյուրավոր հայ մտավորականների սպանություններով սկսվեց հայ բնակչության բնաջնջման առաջին փուլը: 1915 թ. ապրիլի 24-29-ը թուրքական իշխանությունները ձերբակալեցին 800-ից ավելի հայ մտավորականների, որոնց մեծ մասը սպանդի ենթարկվեց: Իթթիհատականները չխնայեցին նույնիսկ խորհրդարանի պատգամավորներ Գրիգոր Զոհրապին և Վարդգես Սերենկյուլյանին: Արևմտահայությանը զրկելով կազմակերպող ու պաշտպանող ուժերից և մեկուսացնելով արտաքին աշխարհից՝ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ անպաշտպան ու անօգնական բնակչության զանգվածային ջարդերին ու բռնագաղթին: Սա իր դաժանությամբ ու ծավալներով մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող ոճրագործություն էր՝ ցեղասպանություն, որին զոհ գնաց 1.5 միլիոն մարդ: Ցեղասպանության նպատակը հայ ժողովրդի հայրենազրկումն ու զանգվածային բնաջնջումն էր: Թուրքիային թվում էր, թե Հայոց ցեղասպանությամբ Հայկական հարցը լուծել է, սակայն փաստացի իր վերջնական նպատակին չհասավ, որովհետև աշխարհասփյուռ հայությունը Հայկական հարցը վերածեց Հայ դատի և պայքար սկսեց իր ոտնահարված իրավունքների վերականգնման համար:1919 թ. մայիսի 28-ին հայկական պետականության առկայության պայմաններում արդեն Հայ դատը ձևակերպվեց որպես Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծման նպատակ, այսինքն՝ նորանկախ Հայաստանի իշխանությունը, Միացյալ Հայաստան հռչակելով, իրեն հայտարարում էր նաև Արևմտյան Հայաստանի իշխանություն և արևմտահայության անունից հանդես էր գալիս պահանջատիրության դիրքերից:

ՄԱԿ-ի հիմնադիր ժողովներից մեկը, որտեղ ներկայացվեց նաև Հայ Դատի պահանջատիրությունը

Հայ դատի, որ նույնն է՝ Հայոց ցեղասպանության դիմաց արդար հատուցման հասնելու առաջին քայլը 1919 թ. աշնանը Երևանում կայացած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումն էր՝ «Հատուկ գործ»-ը, որն այժմ բոլորիս հայտնի է «Նեմեսիս» անունով: Այն ենթադրում էր, ըստ էության, անպատիժ մնացած երիտթուրք դահիճների հետ արդար հաշվեհարդար տեսնելը: Նախքան երիտթուրք պարագլուխների դատավճիռն իրագործելը Սողոմոն Թեհլիրյանն ու Արշավիր Շիրակյանը նախ արժանի պատժի արժանացրին Հայոց ցեղասպանությունից անմասն չմնացած հայ դավաճաններին: 1920 թվականին Սողոմոն Թեհլիրյանը Կ. Պոլսում հաշվեհարդար տեսավ Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության քաղաքական ղեկավար Հարություն Մկրտչյանի հետ: Նույն թվականի մարտի 27-ին Արշավիր Շիրակյանը Կ. Պոլսում գնդակահարեց 1915 թ. ցեղասպանության զոհ դարձած մտավորականների ցուցակը Թալեաթին տրամադրած Վահե Իհսանին: Այնուհետև՝ 1921 թ. մարտի 15-ին, Սողոմոն Թեհլիրյանը ահաբեկեց հայության գլխավոր դահիճ Թալեաթին: Նույն թվականի դեկտեմբերին Արշավիր Շիրակյանը Հռոմում ի կատար ածեց Օսմանյան կայսրության վարչապետ Սայիդ Հալիմի մահապատիժը, իսկ ապրիլի 17-ին Արշավիր Շիրակյանն ու Արամ Երկանյանը Բեռլինում ոչնչացրին Տրապիզոնի վիլայեթի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմիին, որը հրամայել էր Տրապիզոնում 15.000 հայ երեխաների ծովում խեղդել:

1920 թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի պայմանագիրը, որի հիման վրա նույն թվականի նոյեմբերի 22-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը հրապարակեց իր իրավարար վճիռը, որի համաձայն՝ այդ պահին 70.000 քառ. կմ տարածք զբաղեցնող Հայաստանի Հանրապետությանը միացվելու էին տարածքներ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներից, և ՀՀ տարածքը կազմելու էր ավելի քան 160 հազար քառ. կմ: Թվում էր, թե այս վճռով որոշակի լուծում էր տրվում հայության արդար դատին, բայց նույն՝ 1920 թ. նոյեմբերի 22-ին Բաքվում Սարգիս Կասյանի գլխավորությամբ ձևավորվում է Հայհեղկոմը, որը քեմալա-բոլշևիկյան հրոսակախմբերի միջոցով Հայաստանում վերցրեց իշխանությունը, իսկ կարճ ժամանակ անց խորհրդային իշխանությունները Մոսկվայի մարտի 16-ի (իրականում 18-ի) անօրինական պայմանագրով հրաժարվեցին Սևրի պայմանագրից: Ինչ վերաբերում է Լոզանի պայմանագրին, որը հաճախ թմբկահարվում է Թուրքիայի կողմից, ապա վստահորեն կարող ենք ասել, որ այն Հայաստանի համար նույնն է, ինչ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, այսինքն՝ Հայաստանի համար որևէ իրավական պարտավորություն Լոզանի պայմանագիրը չի նախատեսում, և դա այն պարզ

պատճառով, որ Հայաստանի ներկայացուցիչը այն չի ստորագրել: Ըստ «Միջազգային պայմանագրի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածի՝ պայմանագիրը երրորդ պետության համար առանց նրա համաձայնության իրավունքներ կամ պարտավորություններ չի ստեղծում: Լոզանի պայմանագրում արտացոլված չէ, որ Հայաստանը համաձայնել է հրաժարվել ֆինանսական հատուցումներից կամ ճանաչել է Թուրքիայի հետ իր նոր սահմանները: Լոզանի պայմանագրի՝ Հայաստանի համար պարտավորություններ չնախատեսելը արտացոլված է նաև Սևրի պայմանագրի կնքման օրերին Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի՝ դաշնակից տերությունների արտաքին գործերի նախարարներին հասցեագրված 1923 թ. օգոստոսի 8-ի նամակում. «Հայաստանի անունից Սևրի պայմանագիրը ստորագրած պատվիրակությունը պնդում է այն բոլոր իրավունքները, որոնք տերությունները հանդիսավոր կերպով ճանաչել էին պատերազմի ժամանակ և դրանից հետո, և որոնք իրենց ճշգրիտ մարմնացումն էին ստացել Սևրի պայմանագրում, իսկ հետո նաև վերահաստատվել հաջորդ կոնֆերանսների որոշումներում[15]»: Ասել է թե՝ Հայաստանն ու հայ ժողովուրդը՝ ի դեմս իրենց օրինական ներկայացուցիչ Ավետիս Ահարոնյանի, չեն ճանաչել Լոզանի պայմանագիրը. այն ճանաչելու մասին որևէ հայտարարություն երբևէ չի արել նաև Հայաստանի երրորդ հանրապետության որևէ կառավարություն:

Մի հատկանշական հանգամանք ևս. «Լոզանի գործընթացը վերաբերում էր 1919-1922 թթ. հույն-թուրքական հակամարտությանը, և այն ստորագրվեց տարածաշրջանում շահեր ունեցող (և հակամարտությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցած) առանձին կողմերի միջև: Ինչ վերաբերում է ստորագրողներին, ապա թուրքական կողմը պայմանագրում անվանվում էր «Ազգային մեծ ժողովի կառավարություն», իսկ դա ո՛չ օսմանյան կառավարության անմիջական իրավահաջորդն էր, ո՛չ էլ նորաստեղծ Թուրքիայի Հանրապետության կառավարությունը (Թուրքիայի Հանրապետությունը հիմնադրվեց Լոզանի պայմանագրից միայն երեք ամիս անց): Այդ կառավարությունը պարզապես ներկայացնում էր Քեմալ Աթաթուրքի ղեկավարած ռազմական կազմավորումը: Իր հերթին Լոզանի գործընթացի վերնագիրը՝ «Մերձավոր Արևելքի հարցերի վերաբերյալ Լոզանի կոնֆերանս, 1922-1923», ընդգծում էր այդ կոնֆերանսի հարցերի ավելի նեղ շրջանակը[16]»:

Հայոց «Նեմեսիս»-ի ավարտից հետո աշխարհում կարծես մոռացել էին 20-րդ դարի մեծագույն ողբերգությունը՝ Հայոց ցեղասպանությունը: Այդ մասին աշխարհին հիշեցնելու, Հայոց ցեղասպանության պահանջատիրությունը միշտ օրակարգում պահելու համար 1944 թ. ՀՅԴ նախաձեռնությամբ հիմնադրվեց Հայ դատի հանձնախումբը:

Նշելի է, որ Հայ դատի հանձնախմբերի պահանջատիրական գործունեության համար չափազանց կարևոր էր Հայաստանի Հանրապետության չորրորդ վարչապետ Սիմոն Վրացյանի ակտիվ դերակատարությունը ՄԱԿ-ի հիմնադիր ժողովների ժամանակ Հայ դատի վերարծարծման ուղղությամբ Սան Ֆրանցիսկոյում տարված բանակցություններում:

Հայ դատի հանձնախմբեր են ստեղծվել ԱՄՆ-ում՝ Վաշինգտոնում, Բոստոնում, Լոս-Անջելեսում, Ֆրեզնոյում և հայաշատ այլ վայրերում, ավելի ուշ՝ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում և Ռուսաստանում, 1991 թվականից՝ Երևանում:

«Հայ դատի հանձնախմբերը Հայկական հարցի պահանջատերերն են առանձին երկրներում և գործուն աջակցում են Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենսդրական ակտերի ու բանաձևերի ընդունման գործընթացին, պայքարում պատմական Հայաստանի տարածքում հայկական հուշարձանների և մշակութային այլ արժեքների ոչնչացման դեմ, սատարում արցախահայության արդարացի պայքարին: Նրանց ջանքերի շնորհիվ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը (1975, 1984, 1996 թթ.), Եվրոպայի խորհրդարանը (1987 թ.) և բազմաթիվ երկրների խորհրդարաններ Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևեր են ընդունել, իսկ ԱՄՆ Սենատը՝ կարևոր հանձնարարական (1989 թ.) Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ: ԱՄՆ-ի 49 նահանգներում ապրիլի 24-ը հայտարարվել է Ցեղասպանության հիշատակի օր, Կալիֆոռնիայի նահանգի դպրոցներում դասավանդվում է «Հայ դատ» առարկան: Հանձնախմբերն աջակցում են նաև ցեղասպանության մասին ֆիլմերի նկարահանմանը, գրականության տպագրմանը, բողոքի գործողություններ կազմակերպում Թուրքիայի և Ադրբեջանի հակահայկական գործողությունների դեմ[17]»:

Չնայած Հայ դատի հանձնախմբերի գործադրած ջանքերին՝ Հայկական հարցի մասին կրկին սկսեցին խոսել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միայն, երբ սփյուռքահայությունը հանդես եկավ Արևմտյան Հայաստանը Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջով: Երկարատև քննարկումներից հետո, սակայն, 1953 թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը հայտարարեց, որ Թուրքիայից տարածքային պահանջներ չունի, և մինչև ԽՍՀՄ փլուզումը խորհրդային իշխանությունը չհրաժարվեց այդ դիրքորոշումից: Այս պայմաններում Հայկական հարցի հետապնդումը կամ, որ նույնն է, Հայ դատի պահանջատիրությունը իր ուսերին վերցրեց Սփյուռքը, և, չնայած Հայոց ցեղասպանության հարցը միջազգային օրակարգ մտցնելու ուղղությամբ Հայ դատի հանձնախմբերի, Սփյուռքում գործող ազգային կուսակցությունների և Հայ առաքելական եկեղեցու գործադրած ջանքերին, չհաջողվեց ճեղքել Հայոց ցեղասպանության շուրջ ստեղծված մոռացության պատը: Ցեղասպանության 50-րդ տարելիցին ամփոփելով կատարված աշխատանքները՝ սփյուռքահայությունը բախվեց այն փաստին, որ ձեռք բերված

արդյունքները բավարար չեն, և աշխարհում շարունակվում է Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը:

Քաղաքական պայքարը, փաստորեն, ցանկալի արդյունքը չէր տվել, և սփյուռքահայությունը իր պայքարի միջոցների թվում ավելացրեց նաև զինյալ պայքարը, որի նպատակն էր աշխարհի տարբեր երկրներում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչներին ահաբեկելու միջոցով աշխարհի ուշադրությունը հրավիրել հայոց մոռացված ցեղասպանության վրա:

«Նոր պայմաններում պահանջատիրական զինյալ պայքարի տարբերակը դառնում է ազգային-ազատագրական պայքարի այն ձևը, որը պետք է Հայկական հարցը դուրս բերեր փակուղուց և կրկին դարձներ միջազգային հարաբերությունների օրակարգի հարց[18]»: Այդ նպատակով էր, որ 1975 թ. հոկտեմբերին ասպարեզ իջավ «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» (ՀՑԱՄ) կազմակերպությունը, որը մինչև 1983 թվականը կազմակերպեց զինյալ գործողություններ Վիեննայում, Փարիզում, Վատիկանում, Մադրիդում, Շվեյցարիայում, Կանադայում, ԱՄՆ-ում և այլուր:

1983 թ. ՀՑԱՄ-ին փոխարինելու եկավ «Հայ յեղափոխական բանակ» (ՀՅԲ) կազմակերպությունը: Վերջինիս գործողություններից առավել հայտնի է Լիսաբոնում 5 հայ երիտասարդների կողմից իրականացված ակտը, որը մեր պատմության մեջ հիշատակվում է «Լիզբոնի 5» անունով:

Հենց այդ նորագույն զինյալ պայքարի շնորհիվ էլ աշխարհը սկսեց խոսել հայոց մոռացված ցեղասպանության մասին, իսկ Հայոց ցեղասպանության հարցի՝ միջազգային դիվանագիտության օրակարգ մտնելու գործում կարևոր նշանակություն ունեցան նաև Հայաստանի անկախության վերականգնումը, Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ՀՀ-ի գործադրած ջանքերը (կատարված աշխատանքների ծավալով և դրական արդյունքների քանակով առանձնանում են հատկապես 1998-2008 թթ., թեև 2008-2018 թթ. էլ քիչ աշխատանք չի կատարվել: Կարևոր էր հատկապես Հայոց ցեղասպանության համահայկական հռչակագրի ընդունումը 2015 թ.) և, ինչու չէ, Արցախյան առաջին պատերազմում հայ ժողովրդի տարած հաղթանակը:

Փաստորեն, Հայաստանի անկախության վերականգնումից հետո Հայ դատի հանձնախմբերը վերածվեցին աշխարհի մի շարք երկրներում Հայաստանի ոչ պաշտոնական ներկայացուցիչների և կատարում են դիվանագիտական հսկայական աշխատանք: Թեև Հայ դատի հանձնախմբերի աշխատանքը երբևէ հեշտ չի եղել, քանի որ շարունակ ստիպված են եղել դիմակայել թուրք-ադրբեջանական միացյալ քարոզչությանը և հայանպաստ որոշումների հասնել աշխարհի շատ երկրների խորհրդարաններից ու կառավարություններից, բայց, մեր կարծիքով, 2020 թ. նոյեմբերի 9-ից հետո տեղի ունեցած իրադարձությունները էլ ավելի մեծ խութեր են

Լիզբոնի 5-ը

ստեղծել Հայ դատի հանձնախմբերի աշխատանքի համար, քանի որ եթե մինչև այժմ նրանք թեկուզ ոչ պաշտոնապես հաղթանակած երկրի՝ Հայաստանի Հանրապետության շահերն էին պաշտպանում, ապա այժմ ստիպված են պաշտպանել պարտված և կապիտուլյացիայի ենթարկված երկրի շահերը, որի իշխանությունն ինքը իր պահվածքով կամա թե ակամա խոչընդոտներ է հարուցում թե՛ Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հատուցման, թե՛ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի և վերջնանպատակ հանդիսացող Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի ճանապարհին: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1 Խուրշուդյան Լ., Հայկական հարցը. բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Եր., 1995, էջ 7:
2http://www.historyofarmenia-am.armin.am /am/Encyclopedia _of _armenian _history _San _Stefanoyi _paymanagir 1878.
3 Կիրակոսյան Ա. Ջ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմահրավական եռալեզու տեղեկանք)-Նորավանք ԳԿՀ, Եր., 2006, էջ 8:
4 Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Եր., 2002, էջ 13:
5 Նույն տեղում:
6 Կիրակոսյան Ա. Ջ., նշվ. աշխ., էջ 12:
7 Ներսիսյան Մ., Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Եր., 1991, էջ 9:
8 Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Եր., 1986, էջ 295-296:
9 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 6:
10 Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Բոստոն, 1921, էջ 120-121:
11 Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 31:
12 Սիմոնյան Հր., նշվ. աշխ., էջ 325:
13 Նույն տեղում, էջ 327:
14 Անտոնյան Ա., նշվ. աշխ., էջ 35:
15 Պատմական պարտավորությունները և հատուցումները, էջ 67, https://old.arfd.am/wp-content/uploads/2016/11/20150408-ArmenianGenocideReparations-complete-Ch5-arm.pdf:
16 Նույն տեղում, էջ 68:
17 https://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1275.
18 Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 60:

Ճանաչում, թէ՞ կանխարգիլում

Գէորգ Յակոբեան

Յատկապէս 2020ի Արցախեան պատերազմէն ետք որոշ անհատներ ու շրջանակներ սկսած են բարձրաձայն կոչեր ընել ու խորհուրդներ տալ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման և հետևանքներու վերացման գործընթացին գծով: Ըստ անոնց՝ պէտք է ռազմավարութիւն և մարտավարութիւն փոխել, մինչ օրս տրամադրուած սահմանափակ մարդուժն ու միջոցները առաջնայնօրէն նոր ցեղասպանութիւններու կանխարգիլման համար օգտագործել (յատկապէս Արցախեան հիմնախնդրի գծով) և ոչ անպայման արդէն իսկ 106 տարուայ վաղեմութիւն ունեցող Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման[1]:

Ըստ երևոյթին, թէկուզ ոչ դիտաւորեալ այս տրամաբանութեամբ կը գործ(ենս)էին նաև Հայաստանի արտաքին քաղաքականութեամբ զբաղողները վերջին տասնամեակին: ՀՀ ԱԳՆի՝ միջազգային մակարդակի վրայ տարած աշխատանքներուն մեծ մասը այդ կը վկայէ, օրինակի համար՝ Հայաստանի նախաձեռնութեամբ ՄԱԿի Ընդհ. ժողովի որդեգրած 29 սեպտեմբեր 2015ի թիւ 69/323 որոշումը՝[2] դեկտեմբեր 9ը ցեղասպանութեան զոհերու յիշատակի ու արժանապատուութեան և նորերը կանխարգիլելու միջազգային օր յայտարարելու մասին, և կամ 22 յունիս 2020ի Մարդկային իրաւանց խորհուրդի որդեգրած «Ցեղասպանութեան կանխարգիլման» թիւ 43/29 որոշումը[3]: Ձարմանալիօրէն (բայց նաև միջազգային հարթակներու «նրբութիւնները» նկատի առած հասկնալիօրէն) այս փաստաթուղթերուն մէջ ընդհանրապէս ոչ մէկ յիշատակում կամ վերագրում կայ 1915ի Հայոց ցեղասպանութեան: Աւելին՝ պէտք է ընդունիլ, որ այն օրերէն, երբ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը պաշտօնապէս ՀՀ ԱԳՆ օրակարգ դարձաւ, Հայաստանի պետական նախաձեռնութեամբ միջազգային հարթակներու վրայ (ՄԱԿ և ենթակազմակերպութիւններ, միջազգային այլ կազմակերպութիւններ) գրեթէ ոչ մէկ ձեռքբերում արձանագրուած է մասնաւորապէս 1915ի Հայոց ցեղասպանութեան յանցագործութեան ճանաչման ու հետևանքներու վերացման գծով:

Վերադառնալով նախաբանին մէջ արտայայտուած ճանաչումէն աւելի կանխարգիլման վրայ կեդրոնանալու վերջերս շրջանառուող միտքերուն՝ առաջին ակնարկով անվնաս թուացող այս կոչ-խորհուրդները ըստ էութեան անընդունելի, դատապարտելի, սխա՛լ, տգէտ, անհեռատես ու կործանարար են: Առաջին՝ 2020ի արցախեան 44 օրեայ պատերազմը եկաւ բացէ ի բաց անգամ մը ևս փաստելու, որ Թուրքիան հայոց նկատմամբ ցեղասպանութեան քաղաքականութիւնը կը շարունակէ Ատրպէյճանի շղթայազերծած անօրէն պատերազմին անմիջական մասնակցութեամբ, ահաբեկչական խմբաւորումներու կազմաւորմամբ,

կառավարմամբ և գործուղումով, ապօրինի զինատեսակներու օգտագործմամբ, մարդկութեան դէմ գործուած ոճիրներու և պատերազմական յանցագործութիւններու միջոցաւ:

Այստեղ շատ կարևոր է հաստատել, որ վերջին պատերազմը Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու համար մղուած պատերազմ չէր, ինչպէս ատրպէյճանցիք ու թուրքերը կը փորձեն քարոզել, այլ այն յստակ շարունակութիւնն էր Հայոց ցեղասպանութեան և ցեղային մաքրագործումներու քաղաքականութեան, որ անմիջականօրէն կատարուեցաւ Թուրքիոյ մասնակցութեամբ, նաև հիմնական այն պատճառով, որ Թուրքիան մինչ օրս պատասխանատուութեան չէ ենթարկուած 1915ի Հայոց ցեղասպանութեան յանցագործութեան համար: Ահա թէ ինչու Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը անմիջականօրէն կապուած է Արցախեան հիմնախնդրին, ինչպէս նաև Հայաստանի ու հայ ժողովուրդի ազգային ու պետական անվտանգութեան հետ և կարելի ու ընդունելի չէ մեղմացնել Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու հետևանքներու վերացման գործընթացը:

Երկրորդ՝«Ճանաչո՞ւմ, թէ՞ կանխարգիլում. ի՞նչն է աւելի կարևոր» հարցադրումը շինծու է, որովհետև ճանաչումը կանխարգիլման չի խանգարեր, ընդհակառակը՝ ուղղակի կը նպաստէ անոր ամրագրման: Այսինքն՝ այստեղ «կա՛մ-կա՛մ»ի և մէկը միւսէն կարևոր նկատելու խնդիր չկայ: Որպէս գերագոյն յանցագործութեան՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումն ու Թուրքիոյ կողմէ հետևանքներու վերացումը անմիջականօրէն և ուղղակիօրէն կապուած են նոր ցեղասպանութիւններու կանխարգիլման հետ: Այս կը թելադրեն նաև «Միջազգային մարդկային իրաւունքի կոպիտ խախտումներու և միջազգային մարդասիրական իրաւունքի լուրջ խախտումներու զոհերու՝ վերականգնման և հատուցման իրաւունքներու հիմնական սկզբունքներն ու

ուղեցոյցները» (Basic Principles and Guidelines on the Right to a Remedy and Reparation for Victims of Gross Violations of International Human Rights Law and Serious Violations of International Humanitarian Law)[4]: Այս ուղեցոյցի 23րդ յօդուածը յստակօրէն կը նշէ, որ մարդու իրաւունքներու և մարդասիրական իրաւունքներու կոպիտ խախտումներու (ներառեալ ցեղասպանութեան) հետևանքներու վերացման հիմնական քայլերուն մէջ կը մտնէ «չկրկնուելու երաշխիքներու» (*Guarantees of non-repetition*) ապահովումը յանցագործ պետութեան կողմէ: Այդ երաշխիքները, բնականաբար, կանխարգիլման կը նպաստեն: Այսինքն՝ Հայոց ցեղասպանութեան հետևանքներու վերացումը նաև նորերը կը կանխարգիլէ: Այստեղ պէտք է ընդգծել, որ Հայոց ցեղասպանութիւնն իրականացնողներին պատասխանատուութեան ենթարկելու ճամբով նորերը կանխարգիլելը միայն հայ ժողովուրդին չի վերաբերիր, այլ համայն մարդկութեան:

Երրորդ՝ անքննարկելի իրողութիւն է, որ այնքան ատեն, որ Թուրքիան չ'առերեսուիր Հայոց ցեղասպանութեան իրողութեան հետ և անոր բազմաթիւ հետևանքներու վերացման չի նախաձեռներ, այլ ընդհակառակը՝ կը շարունակէ հայատեաց ծաւալապաշտական փանթուրանական ռազմավարութեան գործադրութիւնը, նոր յանցագործութիւններ կանխարգիլելու բոլոր փորձերը դատապարտուած են ձախողութեան՝ նկատի առած յատկապէս մեր դերն ու տեղը, կարողութիւններն ու միջոցները այս տարածաշրջանին մէջ: Հետևաբար Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ճամբով և արցախեան վերջին պատերազմի լոյսին տակ հարկ է աշխատանք տանիլ՝ փանթուրքիզմը և փանթուրանականութիւնը նացիզմի և պոլշևիզմի նման միջազգային հանրութեան կողմէ անցանկալի ու դատապարտելի գաղափարախօսութիւններու ցանկին մէջ ներառելու:

Չորրորդ՝ Հայոց ցեղասպանութիւնը աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային խաղաքարտ չէ



մեզի համար (նոյնիսկ եթէ այդպէս է ուրիշներու համար), որմէ կարելի է հրաժարիլ կամ տեսակետ փոխել՝ յանուն տարածաշրջանային ապաշրջափակման կամ այլ շահերու, ոչ ալ լո՛կ պատմութիւն կամ ողբերգութիւն է, որ կարելի է մոռնալ: Ան ամէն բանէ առաջ ու վեր համամարդկային գերագոյն յանցագործութիւն է, որուն հետևանքով 1.5 միլիոն մարդ սպանուեցաւ, ազգ մը ամբողջ հայրենազուրկ և ունեզուրկ դարձաւ, հազարամեակներու պատմամշակութային քաղաքակրթութիւն ոչնչացաւ, սերունդներ ամբողջ ցաւի ու տառապանքի մատնուեցան, ու անոր հետևանքները մինչ օրս կը շարունակուին, և ոչ ոք իրաւունք ունի այդ յանցագործութեան զոհերուն իրաւունքները վերականգնելու և հետևանքները վերացնելու գործընթացէն հրաժարիլ: Ոչ ոք:

Ամէն պարագայի, այնքան ատեն, որ Հայաստանը չի վերականգնիր որպէս ինքնիշխան, ինքնաբաւ, հզօր ու կայացած պետութիւն, եւ ճանաչումի, եւ կանխարգիլման աշխատանքները այդքան արդիւնաբեր չեն կրնար ըլլալ: Իսկ այն թեզը, որ հզօրանալու, զարգանալու և հայրենաբնակ մեր ժողովուրդին կենսամակարդակը բարելաւելու համար պէտք է վերանայիլ կամ ձերբազատուիլ Հայոց ցեղասպանութեան յանցագործութեան արդարութեան վերականգնումի պահանջատիրութենէն, զո՛ւտ խաբկանք ու մոլորութիւն է և, մեղմ ըսած, թրքական օրակարգի ու վաղեմի երազի սպասարկում: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Այստեղ նոյնիսկ չ'արժէ խորանալ ՀՀ ներկայ իշխանութիւններուն յայտարարած՝ Թուրքիոյ նկատմամբ մօտեցումներու «շտկումներ» ընելու (տես https://www.youtube.com/watch?v=4a7lt-k2h1k), տեսակետներ փոխելու (տես https://www.tert.am/am/news/2021/03/28/pashinyan/3566563O) և կամ հայ-թուրքական հակադրութիւններու ծագումնաբանութեան տգիտութեան հարցերի շուրջ (տես https://www.primeminister.am/hy/domestic-visits/item/2021/03/20/Nikol-Pashinyan-visit-to-Aragatsotn-marz/), որովհետև անոնք արդէն իսկ կորսնցուցած են իրենց վաւերականութիւնը և, քաղաքական հոգեվարքի մէջ գտնուելով, պարզապէս կը զառանցեն, իսկ ուշ կամ կանուխ հայ ժողովուրդը իր մէջ պիտի գտնէ այդ հաւաքական ուժը՝ զանոնք մեր հանրային իրականութենէն հեռացնելու:
2- Տես https://undocs.org/A/RES/69/323:
3- Տես https://undocs.org/A/HRC/RES/43/29 և https://www.mfa.am/en/press-releases/2021/02/10/hr/10788:
4- Տես https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/remedyandreparation.aspx:

Հայերի հողազրկումը որպես Օսմանյան կայսրության պետական քաղաքականություն

Ըստ «ՀՈՂԱՅԻՆ ԳՐԱՒՄԱՆՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ» տեղեկագրերի

Անի Ոսկանյան. թուրքագետ

«...Կարծես ուիւր մը կայ Հայն հողազուրկ և ապրուկ ընել ամէնուրեք, և արդէն շատ տեղեր հասած են այս նպատակին»:

Անդամք Հողային Յանձնաժողովոյ
Կ. Պոլիս, 26 Մարտ 1910

Հայապատկան հողերը մշտապես գտնվում էին օսմանյան իշխանությունների թիրախում, իսկ 19-րդ դարի երկրորդ կեսից արդեն սկսվում է դրանց բռնագրավման քաղաքականության իրականացումը: Կայսրության ողջ տարածքում բռնագրավված հողերի տարեցտարի մեծացող պատկերը քարտեզի ձևով ներկայացնելու դեպքում ունենում ենք յուրաքանչյուր հաջորդ տարվա կտրվածքով ավելի մեծ ծավալներ ընդգրկող բռնագրավված տարածքներ:

1894-96 թթ. Համիդյան ջարդերի ընթացքում սպանվում է 300.000 հայ, 80.000-100.000 հայ էլ ստեղծված պայմանների հետևանքով գաղթում է: Կառավարությունը բոլոր նրանց, ովքեր մեկ անգամ դուրս էին եկել իրենց բնակավայրերից, արգելում էր վերադառնալ: Նրանց հողերն ու գույքը տրվում էին մուսուլմաններին: Թուրք, քուրդ գյուղացիները, ինչպես նաև չերքեզները տեր էին դառնում հայկական հսկայական շրջանների: 1908 թ. Սահմանադրության վերահաստատումից հետո իրենց նախկին բնակավայրեր վերադարձող հայերը փորձում էին վերականգնել իրենց կալվածքները. եթե սկզբում կառավարությունը կարծես թե աջակցում էր վերջիններիս, ապա ավելի ուշ տեղի էր տալիս արդեն այդ հողերում հաստատված մուսուլմանների պահանջներին[1]:

1909 թ. Մարզպետն իր «Հողային հարցի շուրջ, հարստահարութեան ձևեր» հոդվածում գրում էր, որ բռնության և հալածանքների հետևանքով հայկական գավառները դատարկվում էին. «....այդպիսի գաւառներն են Վանի վիլայէթին մէջ Նորտուզը, Աղբակը, Գաւառը, Պիթլիզի վիլայէթին մէջ՝ Սղերդը, Խիզանը, Մոտկանը, Խոյը, Մանազկերտը, Էրզրումի վիլայէթին մէջ՝ Խնուսը, Ալաշկերտը ևն», ինչպես նաև մանրամասն ներկայացնում է պաշտոնյաների կողմից կամ նրանց աջակցությամբ թուրք և քուրդ բեկերի ու աղաների իրականացրած գրավումների ձևերն ու եղանակները[2]:

Պետականորեն գրավումներ կատարելու «օրինական» հնարավորություն էր տալիս բանկային համակարգը: Գյուղացիներին օժանդակելու և վարկավորելու համար ստեղծված Երկրագործական (Գյուղատնտեսական) բանկը ոչ միայն լավագույնս իրականացնում էր իրեն տրված գործառույթը, այլև դառնում է նոր բեռ հարկերից ուժասպառ գյուղացու համար. «....աշարը, փոխանակ 10էն մէկ առնելու, 8էն մէկ կ'առնեն, յավելյալ այս երկու տոկոսի մէկ կարևոր մասը յատկացուած է երկրագործական պանքային»[3]: Հողային գրավադրման

դեպքում բանկը չնչին փոխհատուցմամբ վերցնում էր ավելի մեծ արժողությամբ հողեր: Տրված գումարը բաղադրյալ տոկոսով աստիճանաբար հասնում էր խոշոր չափերի, և գյուղացին, չկարողանալով վճարել, զրկվում էր իր հողերից: Բանկը բռնագրավում էր դրանք և դնում աճուրդի: Հայերը նույնիսկ հնարավորության դեպքում չէին կարող մասնակցել աճուրդներին, քանի որ ազդեցիկ թուրքերն արգելքներ էին դնում, անգամ սպառնում[4]:

Ժամանակի առաջադեմ մտավորականները, հայ քաղաքական ու հասարակական գործիչները, կուսակցությունները, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ու Կիլիկիո կաթողիկոսարանը շարունակ բարձրաձայնում էին հողազրկումների մասին, դիմում էին կառավարությանը, որոնում էին ելքեր: Հողազրկման քաղաքականությանը անդրադառնում էր նաև մամուլը՝ նշելով հողային բռնագրավման վայրը, հանգամանքները, տուժողի և բռնագրավողի անունները: Փաստաբաններից մեկի վկայությամբ՝ դիմումների ու գործերի 70 %-ը այդ օրերին առնչվում էր հողային հարցերին[5]:

Հողային բռնագրավումների հանգամանքները քննելու, բռնագրավումների մասին համապարփակ տեղեկություններ ունենալու, դրանց ցուցակագրման աշխատանքները համակարգելու, ինչպես նաև հարցին հետամուտ լինելու և լուծումներ գտնելու համար 1909 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ստեղծում է հողային հանձնաժողով, որի կազմում էին Ն. Տաղավարյանը, Ռ. Փափազյանը, Ա. Հալաճյանը, Գ. Տեր-Կարապետյանը և Ղ. Պեզազյանը: Հանձնաժողովը պատրաստում է հայոց ազգային ու մասնավոր գրավյալ հողերի ու կալվածքների ցուցակները և ներկայացնում Կ. Պոլսի հայոց

պատրիարք և Ազգային կենտրոնական վարչության նախագահ Եղիշե արք. Դուրյանին և պատկառելի Քաղաքական ժողովին: Հանձնաժողովի անդամները նաև հստակ ամրագրում են, որ ցուցակներում բերված տվյալները հողային բռնագրավումների ամբողջական պատկերը չեն ներկայացնում և շարունակական համալրման կարիք ունեն:

Հողային գրավման հանձնաժողովն իր աշխատանքները կատարում էր՝ ուղենշային համարելով հետևյալ դասակարգումը.

1. Տուրքի դիմաց կառավարության կողմից չնչին գնով ծախված հողեր:
2. Պարտքի դիմաց Երկրագործական բանկի կողմից էժան գներով ծախված հողեր:
3. Անհատների փոքր պարտքերի դիմաց դատարանով բռնագրավված արժեքավոր հողեր:
4. Կեղծ պահանջատերեր, որոնք, կեղծ վկաներով հաստատելով իրենց պահանջը, դատարանով բռնագրավել են հողեր:
5. Փոքր պարտքերի դիմաց ֆերաղով (ունեցվածքի իրավունքի հանձնում, զիջում, բռնի օտարում) գրավյալ հողեր:
6. Փոքր պարտքերի դիմաց առանց դատարանի պահանջի գրավյալ հողեր (առանց ֆերաղի):
7. Գաղթող հայրերի հողեր՝ մահլուլ (անժառանգ գույք) հռչակված և այլոց բաժանված, տրված կամ ծախված:
8. Բռնի գրավյալ հողեր՝ առանց ֆերաղի, որոնց թափուները (սեփականության վկայական, կալվածաթուղթ) հայերի ձեռքում են, և տուրքերը դեռ իրենք են վճարում:
9. Բռնի գրավյալ հողեր՝ առանց ֆերաղի, որոնց թափուները հայերը կորցրել են կամ չունեն, սակայն կալվածատիրական արձանագրություններում նշված են նրանց անունները:
10. Բռնի գրավյալ հողեր, որոնց համար կեղծ թափուներ են հանել բռնագրավողները և վճարում են դրանց տուրքերը:
11. Մինչև այսօր առանց պետական արձանագրության և թափուի հայերի կողմից վաղուց մշակված հողեր, որոնց բռնի տիրել են և այժմ իլամներ (դատական որոշում՝ գրավոր ձևով) են հանում իրենց անուններով:
12. Եկեղեցիների, վանքերի ազգապատկան հողեր, որոնք իբրև մահլուլ գրավվել են՝ առանց ճանաչելու բարոյական անձերի գոյությունը:
13. Հայկական շենքերի, տների և նույնիսկ գյուղերի բռնի գրավումով դրանք օտար գաղթականների և այլոց տալու անօրինականություններ:
14. Եկեղեցիներ, վանքեր, գերեզմանատներ քանդելու և դրանց քարերով իրենց հատուկ տներ կառուցելու ոճիրներ[6]:

Համաձայն առաջնորդարաններից եկած հարյուրավոր տեղեկագրերի, ինչպես նաև պատրիարքարանի կողմից հանձնաժողովի աշխատանքներին օժանդակելու համար տրամադրված՝ գրագրերի հավաքած նյութերի, երբեմն նաև գավառները ներկայացնող պատգամավորների հաղորդած տեղեկությունների՝ 135



Ա. Կառավարության կողմանէ տուրքի

Փոխարէն ապօրէն գրաւումներու օրինակներ

ՍԵՐԱՍՏԻԱ

1. Գիւրիկ. Գեղակիւրեն. — Միասք Թանեանցեանի 3 տարեկան 300 ոսկի արժողութեամբ 10 լիրայի փոխարէն գրաւած է կառավարութիւնը։ Սեպտեմբեր Թանեանցեանի մէկ տարոյ 60 լիրա արժողութեամբ 20 լիրայի փոխարէն գրաւած է Կառավարութիւնը։

ԳՐՈՒՄԱ

2. Կանչիյիլի. — Կէմէլիի ցանցաղեղ գիւղերու մէջ 20 անիկի ունի գիւղացիներու. բոլոր գոյքերի. արժէքաւոր ապրանք, մասնիւր հեն. կառավարութիւնը գրաւած է փոքրաքանակ վէրքերի պարտուց փոխարէն 1903 թն եւ. որոնց տուրքերն դեռ ժողովուրդը կը վճարէ։

Բ. Երկրագործական պանքայի պարտուց

Փոխարէն ապօրէն գրաւումներու օրինակներ

ԿԱՐԻՆ

1. Գիլի. Աւագերց. — Աւեսիս Աւեսեանի 3 տարիքը 200 մէտիմ, 800 դրշ. փոխարէն 1906 թն գրաւած է Պանքան։

2. Խնուսիերց կամ Մենինիտ. — Կարապետ Վարդանեանի տարիքը 300 մէտիմ 200 լիրա արժողութեամբ 30 լիրայի փոխարէն գրաւած է Պանքան։

Գ. Անհատական պարտուց փոխարէն

Ապօրէն գրաւումներ

ՎԱՆ

1. Կարքիան. — Ուրանց. — Գիւղին Հայ հասարակութեան 25 անձերու, որոնց անունները Դպրեվանքն են ընդունած գոյքերի մէջ, տարերը, անասուններ մարդկանցմէներու եւ այլն. պարտուց փոխարէն գրաւած են պանքան բանտարկեցիք. բոլոր գոյքերի։

մեծադիր ցուցակներով պատրաստվում են 32 գավառների հողային և կալվածային բռնագրավումների ավելի քան 7.000 դեպքերը, որոնցում նշված են գրավյալ հողի կամ կալվածքի գավառը, գավառակը, գյուղը կամ քաղաքը, սեփականատիրոջ անունը, կալվածքի տեսակը, չափերը, կալվածագիր ունենալ-չունենալը, արժեքը, եթե տրված է, բռնագրավման եղանակն ու թվականը, բռնագրավողի անունը և այլ տեղեկություններ[7]:

Հանձնաժողովը, ամփոփելով ցուցակները, տեղեկագրի ձևով պատրաստում է չորս տետր.

1. Տեղեկագիր հողային գրաւմանց յանձնաժողովոյ, Տետր Ա., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տօրամաճեան, 1910,

2. Տեղեկագիր հողային գրաւմանց յանձնաժողովոյ, Տետր Բ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Օսմ. գործակցական ընկերութեան, 1911,

3. Տեղեկագիր հողային գրաւմանց յանձնաժողովոյ, Տետր Գ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տօրամաճեան, 1912,

4. Տեղեկագիր հողային գրաւմանց յանձնաժողովոյ, Տետր Դ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տօրամաճեան, 1912:

Ա. տետրում առանձնացված են գրավյալ սրբավայրերը և ազգապատկան կալվածքները. ցուցակագրված են գրավյալ 13 վանքեր (մի մասը՝ իր կալվածքներով), 27 եկեղեցիներ, 16 գերեզմանատներ և 80 ազգապատկան մեծ ու փոքր կալվածքներ: Դրանց մի մասի վերաբերյալ ազգային իշխանության կողմից հայց է ներկայացվել դատարան: Տեղեկագրում նշված է նաև դրանց դատական վիճակը:

Բ. տետրում տրված են անհատներից գրավված կալվածքները: Կարևոր կալվածքներ են համարվում 100 ոսկուց[8] ավելի արժեք ունեցող հողերը կամ կալվածքները,

կամ երբ արժեքը նշված չէ, 100 դեռնումից[9] ավելի տարածք ունեցող հողերը: Տեղեկություններ կան նաև այս կալվածքների մասին, որոնց վերաբերյալ հայց է ներկայացվել դատարան:

Գ. տետրը պարունակում է հայ ազգաբնակչության գրավյալ կալվածքների ցանկ: Ցույց են տրված մեկ գյուղի մեջ տասից ավելի սեփականատերերի (առանձին-առանձին՝ 100 ոսկուց նվազ արժեքով կամ 100 դեռնումից պակաս տարածքով) պատկանող հողերը, որոնք միևնույն անձի կողմից հավաքաբար զավթվել են: Տրված են զավթողների թիվը, բռնագրավողների անունները:

Գրավյալ հողերի 100-ից 90-ի թափուները դեռ բուն սեփականատերերի ձեռքում էին կամ նրանց անունով էին գրանցված: Այս կալվածքների հասույթը ստանում էր բռնագրավողը, իսկ տուրքերը վճարում էին հայերը:

Դ. տետրում ներկայացվում են 1890 թվականից հետո կատարված հետևյալ բռնագրավումները. ա) տուրքի դիմաց կառավարության կողմից հողի ու կալվածքի բռնագրավումներ, բ) պարտքի դիմաց Երկրագործական բանկի կողմից բռնագրավումներ, գ) աննշան պարտքի դիմաց կատարված արժեքավոր բռնագրավումներ, դ) պարտքի դիմաց առանց օրինական ձևակերպումների կատարված բռնագրավումներ:

1910 թ. մայիսին հանձնաժողովը հողային բռնագրավումների մասին ներկայացնում է առաջարկներ, որոնցում, ի թիվս այլ եզրակացությունների, արձանագրում է՝ ազգապատկան հաստատությունները, վանքերը, եկեղեցիները, գերեզմանատները և մեծ ու փոքր կալվածքները որևէ պատրվակով չեն կարող անցնել ուրիշին. դրանք ազգային սեփականություն են[10]:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և հայաբնակ մյուս վայրերում սկսելով հայերի հողազրկման գործընթացը՝ օսմանյան կառավարությունն այն տանում էր մինչև վերջ՝ գրեթե անհնարին դարձնելով հայերի կորցրած սեփականությունն օրինական ճանապարհով հետ բերելու բոլոր հնարավորությունները: Հողերի բռնագրավումով իշխանությունները լուծում էին մի քանի խնդիր. ոչ միայն բարելավվում էր թուրքերի և մյուս մուսուլմանների տնտեսական վիճակը, այլև լուծվում էր շարունակական պատերազմների ընթացքում ազատագրված երկրներից ներթափանցող մուսուլման փախստականներին բնակեցնելու հարցը: Աստիճանաբար հայկական նահանգներում և հայաբնակ մյուս վայրերում ստվարացող փախստականները նույնպես դիմում էին բռնագրավումների, հաճախ՝ տեղական իշխանությունների աջակցությամբ: Հողը կորցրած հայը դատապարտվում էր գրեթե ստրկական աշխատանքի իր իսկ նախկին կալվածքում: Նրանցից ոմանք ստիպված արտագաղթում էին. արտագաղթի դրդելը հողազրկման քաղաքականության առանցքային գործոններից մեկն էր: Այսինքն՝ գործընթացը փոխում էր նաև երկրի ժողովրդագրական պատկերը: Դատարկելով Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան և հայաբնակ մյուս վայրերը՝ օսմանյան իշխանությունները հետապնդում էին մի կարևորագույն նպատակ՝ ազատվել հայ ազգաբնակչությունից կամ այնպես նվազեցնել հայերի թվաքանակը, որ նրանք որևէ



վայրում մեծամասնություն չկազմեին: Հարկավոր է նշել, որ հողազրկման քաղաքականությունը գործադրված համալիր բռնաճնշումների ձևերից մեկն էր, որը հանգեցնում էր պետության նախասահմանած արդյունքին: Այսպիսով՝ համակարգված գործողությունների հետևանքով իշխանությունները ձեռք էին բերում թուրքական պետության գոյության համար ամենակարևոր գործոնը՝ տարածություն, հող, որը բնակեցված կլիներ մեծ մասամբ թուրքերով:

Խնդրի ուսումնասիրությունն արդիական է ինչպես ներկայիս Թուրքիայում ազգային փոքրամասնությունների, այնպես էլ տարածաշրջանում այլ ժողովուրդների նկատմամբ վերջինիս վարած ագրեսիվ քաղաքականությունը հասկանալու համար: Հողային իրավունքից զրկումը ազգային բնիկ փոքրամասնությունների նկատմամբ խտրականության և անհանդուրժողականության դրսևորում է: Հողային բռնագրավումների պատմության, քաղաքականության, հետևողականության ու տրամաբանության ուսումնասիրությունն առավել տեսանելի է դարձնում հայերի ոչնչացման համակարգված ու խորքային ծրագիրը, ինչպես նաև այդ ծրագրի գործադրումը՝ անկախ երկրի իշխող վարչակազմից:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1 - Տես Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, 1910, թիւ 27, փետրուարի 5, էջ 2:
2 - Մարգպետ, Հողային հարցի շուրջ, հարստահարութեան ձևեր, «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1909, թիւ 136, նոյեմբերի 18-1 դեկտեմբերի, էջ 2:
3 - Նույն տեղում:
4 - Տես նույն տեղում:
5 - Տես «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, թիւ 1389, 7-20 մարտ:
6 - Տես «Տեղեկագիր հողային գրաւմանց յանձնաժողովոյ», Տետր Ա., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. S. Տօղրամաճեան, 1910, էջ 1-2:
7- Տես նույն տեղում, էջ 3:
8 - 19-րդ դարի վերջին 1 ոսկու փոխարժեքը մոտ 9-10 ռուբլի էր:
9 - 1 դեռնումը 900 քառ. մ է:
10 - Տես «Տեղեկագիր հողային գրաւմանց յանձնաժողովոյ», Ա. տետր, էջ 4:

Ռազմական գործողությունները Հիւսիսային Իրանում եւ քրիստոնեայ բնակչութեան (հայերի եւ ասորիների) կոտորածները. 1914-1916թթ. (մաս 1-ին)

Դերենիկ Կարոյի Մելիքեան
Թեհրանի «Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագիր, պատմական գիտութիւնների թեկնածու

Առաջին աշխարհամարտի նախօրեակին, ըստ գերմանական և թուրքական հրամանատարութիւնների մշակած ծրագրի, ռազմական գործողութիւններ էին նախատեսւել նաև Իրանում, որի տարածքը Գերմանիան և Թուրքիան մտադիր էին օգտագործել որպէս միջանցք՝ Բաքւի նաւթային շրջաններն ու այնուհետև Միջին Ասիան գրաւելու համար: Ուստի Հիւսիսային Իրանը ևս վերածւեց հակամարտող երկու ճամբարների ռազմական գործողութիւնների թատերաբեմի[1]: *«Թուրքերու ընդհանուր ծրագիրն էր,- գրում է Ա. Խապիսեանը,- գրաւել Պաթում-Պաքու երկաթուղագիծը, փիրել Պաքւի նաւթահանքերուն, փոխադրել զօրքերը Թուրքէստան և այնտեղէն սպառնալ Անգլիոյ: Միաժամանակ անոնք կը շարունակէին մօտենալ Ալեքսանդրապոլին, որպէսզի այնտեղէն երթան Պաքու, Ջուլֆա, Պարսկաստան, իսկ այդ տեղէն ալ սպառնալ Պաղտատի՝ անգլիացիներուն»[2]:*

Միւս կողմից, երբ Թուրքիան նոյնիսկ դեռևս չէր մտել պատերազմի մէջ, թուրքական հրամանատարութիւնն իր զօրքերը տեղակայեց Վանի, Սարայի, Բաշկալէի և Շամդինանի տարածքներում: Դրան ի պատասխան՝ ռուսական հրամանատարութիւնն էլ 1914 թ. նոյեմբերի 20-ին գեներալ Ֆ. Չերնոզուբովի գլխաւորութեամբ զօրքեր մտցրեց Իրան: Ռազմական յաջող գործողութիւնների շնորհիւ ռուսական բանակը շուտով գրաւեց Խոյը, Ուրմիան և Թաւրիզը: Իրանական կառավարութիւնը Մոսթոֆի-օլ-Մամալեքի գլխաւորութեամբ, որն իշխանութեան էր եկել 1914 թ. օգոստոսին, իր դժգոհութիւնն յայտնեց ռուսական զօրքերի՝ Իրան ներթափանցելու կապակցութեամբ: Յատկանշելի է, որ նախքան ռուսական զօրքերի՝ Իրանի տարածք մտնելը՝ 1914 թ. նոյեմբերի 14-ին, Ուրմիայում Ռուսաստանի փոխհիւպատոս Վեդենսկին հեռագրեց, որ թուրքերը նպատակ ունեն գրաւելու Ուրմիայի շրջանը՝ այդտեղից երկու ուղղութիւններով՝ Խոյ–Ջուլֆա և Սոլդուզ–Սաուջբուլաղ, հետագայում Թաւրիզի շրջան մուտք գործելու համար: Այս պայմաններում ռուսական հրամանատարութիւնը դիմեց հակաթուրքական մի այնպիսի ուժի աջակցութեանը, որպիսին Ուրմիայում և նրա շրջակայքում ապրող 70000 ասորիներն էին: Աւելի ուշ ռուսական զօրքերը գրաւեցին Խոյը, Ուրմիան և Թաւրիզը: Նրանց օգնում էին ասորիները, որոնց վիճակն անգամ մինչև պատերազմը իրօք անտանելի էր: Դա էր պատճառը, որ նեստորական ասորիների մեծ մասն ընդունել էր ուղղափառ կրօն՝ յոյսով, որ Ռուսաստանն օգնութեան ձեռք կը մեկնի: Յանուն դրա ասորիները խոստացել էին ռուսական հրամանատարութեան տրամադրութեան

տակ դնել 40000 զինեալ: Ասորիների ռուսական կողմնորոշմանը Թեհրանը պատասխանեց թշնամական գործողութիւններով՝ համագործակցելով թուրքերի և քրդերի հետ: Վերջինները 1914 թ. սեպտեմբերին Ուրմիայի շրջանում հրդեհեցին աւելի քան 30 հայկական և ասորական գիւղեր[3]: Այսպէս իրեն չէզոք երկիր յայտարարած Իրանի տարածքում 1914 թ. նոյեմբերի 2-ին իրականացուեցին ասորիների ջարդեր:

Ասորիների կոտորածների մասին գոյութիւն ունի փաստ, որ 1914 թ. աւարտին թուրքական զօրքերը Ուրմիայի շրջանում աւերեցին և հրդեհեցին ասորական 98 գիւղ, 500 հոգի սպանուեց, 800 կին և աղջիկ առևանգուեցին: 700 մարդ գլխատուեց ասորական Հաւթան գիւղում, 5000 ասորի քշուեց թուրքական հարեմները[4]:

«....Ռուսական զօրքերի՝ Սալմաստ հասնելուց մի քանի օր առաջ քրդերն ու թուրքերը, - գրում է «Նիւ Եօրք թայմզ»-ը իր 1915 թ. ապրիլի 29-ի համարում,- «հաւաքեցին հայ և ասորի տղամարդկանց. 400-ին ուղարկեցին Խոսրովա, իսկ միւս 400-ին՝ Հաւթան: Նրանցից ոչ մէկը ողջ չմնաց»»[5]:

Նոյն *«Նիւ Եօրք թայմզ»*-ը նշում է.*«20-30000-ի չափ նեստորական ասորիներ և հայեր զանգւածաբար հեռացան Իրանական Ադրբեջանից: Աւելի քան 1500 հոգի կոտորուեց, 2000-ի չափ մահացան հիւանդութիւններից»[6]:*

Յատկանշելի է «Մշակ»-ում մէջբերուած «Նիւ Եօրք թայմզ»-ի հետևեալ վկայութիւնը ևս. «Միայն հայերը չեն, որ անբախտ են, ասորիներին նոյնպէս ոչնչացրեցին և իւրաքանչիւր տասներորդին հնձեցին»[7]: Իսկ «Atlantic Monthly»-ն նկատել է.«Վեց ամսւայ ընթացքում երիտթուրքերն արեցին այնքան, որքան չէին կարողացել անել հին թուրքերը վեց դարում: Հազարաւոր ասորիներ անհետացան»[8]:

Նման պայմաններում և նոյնիսկ մինչ այդ Մոսթոֆի-օլ-Մամալեքը բողոքի նոտա է յղում

Ռուսաստանի դեսպանութեանը, որում յայտնում էր, թէ Իրանի կառավարութիւնը մտադիր է պահպանել իր չէզոք դիրքը՝ հեռու մնալով պատերազմի մէջ ներքաշուելուց, ուստի Իրանի կառավարութիւնը խնդրում է Ռուսաստանին, որ իր զօրքերը յետ կանչի իրանական տարածքներից, որով էլ ապացուցած կը լինի իր յարգանքը Իրանի չէզոքութեան նկատմամբ: Մոսթոֆի-օլ-Մամալեքը շեշտադրում էր նաև այն հանգամանքը որ Ռուսաստանի դրական պատասխանը պատճառ կը դառնա, որ օսմանեան բանակը ևս հեռու մնա երկրի տարածքներից և նոյնպէս հաշի նստի Իրանի չէզոքութեան հետ, ինչը իբր խոստացել է օսմանցի աւագ դեսպանը[9]: *«Թեհրանից հեռագրում են,- գրում է «Այգ»-ը,- որ սեպտ. 21-ին պարսկական կառավարութիւնը դիմել է Ռուսաց Միսսիային մի յայտագրով, որի մէջ ասում է, թէ Պարսկաստանը ուզում է խուսափել համաշխարհային պատերազմին մասնակցելու կործանարար հետեւանքներից՝ չէզոքութիւն յայտարարելով: Նա խնդրում է, որ Ռուսաստանը օգնի իրեն այս գործում իր զօրքերը յետ կանչելով Ատրպատականից, որպիսի դէպքում Թուրքաց դեսպանն իբր թէ երաշխաւորում է, որ Թուրքիան կը յարգի Պարսկաստանի չէզոքութիւնը»[10]:* Մինչդեռ նոյն համարում «Այգ»-ը, վկայակոչելով Պետրոգրադի հաղորդումը, նշում է, որ *«Մինիստրական խորհուրդը Սազանովի նախագահութեամբ վճռել է մերժել Պարսկաստանի առաջարկը՝ ռուսական զօրքերը յետ տանելու: Այդ մասին յայտնել է Պարսից կառավարութեանը՝ հասկացնելով, որ ռուս զօրքի ներկայութիւնն անհրաժեշտ է պաշտպանելու համար օտարահպատակների շահերը եւ հաստատելու ներքին կարգը»[11]:*

Իրանի չէզոքութեան դիրքորոշման հանդէպ հակամարտող ուժերի կողմից դրսեւորուող արհամարհանքին բազմիցս անդրադարձել են ժամանակի թերթերը: Ընդդիմադիր *«Նորահար»*-ը յատկապէս *«Ի վերջոյ ո՞ւր է գնում Իրանը»* խորագրի ներքոյ գրում էր.*«....Թուրքիայի գործողութիւններն Ատրպատականում, Քերմանշահում եւ Արաբստանում[12] եւ ապա՝ ռուսական պետութեան սանձարձակութիւններն Ատրպատականում, Ղազվինում, Համադանում ու Թեհրանում առերեւոյթ արիւնալի մրցասպարէզ են եղել չէզոք Իրանում, բայց խորքում ապացուցում են, որ մինչեւ Իրանն ի զօրու չլինի ինքնահաստատման ու գործնապէս երաշխաւորելու իր չէզոքութեան պահպանումը, անհնարին է նրա ինքնուրոյն քաղաքականութեան գործադրումը»[13]: Իրանի կառավարութեան ջանքերը՝ գործադրուած չէզոքութեան դիրքորոշման հարցում, յատկապէս գերմանա-թուրքական ուժերի կողմից դրական կեցուածքի ապահովումը, սակայն, ապարդիւն էին, քանզի մայրաքաղաք Թեհրանում աշխատող թուրքական, գերմանական եւ աւստրիական դեսպանատներն իրենց քմահաճ քայլերն ու քարոզչութիւնն էին առաջ մղում: Զորօրինակ. «....Տաճկական դեսպանի ստացած «Սրբազան պատերազմ» գրգռող 30.000 կեղծ*



Ասորիների կոտորածների քարտեզը

«ֆեթւա»-ների ցրումը Թեհրանում կառավարութեան կողմից արգելուեց: Ինչպէս հաղորդում են, այդ թռուցիկները կուղարկուեն գաւառներ:

Գաղտնի հաւաքումները շարունակւում են աւելի յաճախ բազմամարդ: Կառավարութիւնը .... գաղտնի հսկողութիւն է նշանակել տաճիկ եւ գերման դեսպանատների մօտ, որպէսզի զէնքի ցրումն արգելի: .... Այժմ էլ աւստրիական դեսպանատունն է սկսել զէնքերի ցրումը....: Վերոյիշեալ երեք դեսպանատները ամէն միջոց գործ են դնում խլրտումներ առաջացնելու, եւ այդ նպատակով կաշառում են կառավարական պաշտօնեաներին: Նոյնիսկ մինիստրներից 3-ը, որոնք նոյնպէս կաշառուած են, աշխատում են գործել նրանց ծրագրով եւ ամէն հարցում թեքւում են նրանց կողմը....»[14]:

Այս կապակցութեամբ պարսկալեզու «Նորահար» թերթը իր 1915 թի մայիսի 4-ի համարում այսպէս է բնութագրել Գերմանիայի հիւպատոսի միջամտութիւնները. «....Գերմանիայի նոր հիւպատոսը, որը Թուրքիայից Սպահան է գործուղել, ճանապարհին ամենուր հակաքարոզչութիւն է ծաւալել Ռուսաստանի ու Անգլիայի դէմ եւ ազգաբնակչութեանն իրազեկում է, թէ իբր լոռերը, քրդերը եւ միւս ցեղերը հաստատակամօրէն հովանաւորում են օսմանցիներին....»[15]: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Տես Խոսրոևա Ա., «Ցեղասպանութեան փաստագրութիւն», Ասորիների ջարդերը թուրքաբնակ վայրերում Առաջին աշխարհամարտի տարիներին, Երևան, 2004:
2- Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Լիբանան, 1968 էջ 44:
3- Տես Պողոսեան Ստ., Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, հ. 2, Երևան, 2008, հատոր 2, հրատ., Երևան 2009, 808 էջ, հատոր 3, հրատ. Երևան, 2011, 672 էջ:
4- Տես նոյն տեղում, էջ 444:
5- Նոյն տեղում:
6- Նոյն տեղում:
7- Տես Պողոսեան Ստ., Հայոց Ցեղասպանութեան պատմութիւն նոյն տեղում, էջ 444:
8- Նոյն տեղում:
9- Տես «Ռասադ» օրաթերթ, 15 հոկտ. 1914 թ., թիւ 10, էջ 2:
10- «Այգ» շաբաթաթերթ, 5 հոկտ. 1914 թ., Գ. տարի, թիւ 21, էջ 5:
11- Նոյն տեղում:
12- Խուզիստան: Դերենիկ Մելիքեան
13- «Նորահար» օրաթերթ, Թեհրան.13 յուլիս, 1914 թ., թիւ 57, էջ 1:
14- «Այգ» շաբաթաթերթ, 7 դեկտ.1914 թ., դեկտ., թիւ 30, էջ 4:
15- «Նորահար» օրաթերթ, 4 մայիս, 1915 թ.,թիւ 38, էջ 2:

Ժխտումն ընտրություն է, որն ունի առաջացման մեկ պատճառ՝ կամք

Մոռանալ. Ի՞նչը մոռանալ, ինչպե՞ս մոռանալ

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս, «Ուրացման քաղաքականության արմատները, նորօրյա դրսևորումները և դրանց հետևանքները» (Երևան, Հայաստան, 2017) և «Անցյալի և ներկայի բախում. Հայոց ցեղասպանության հավաքական հիշողությունը և թուրքական ժխտողականությունը» (Սաարբրյուքեն, Գերմանիա, 2012) գրքերի հեղինակ

Որևէ պետության որդեգրած ներքին և արտաքին քաղաքականությունը, ռազմավարությունն ու ապագայի տեսլականը լիովին ըմբռնելու և անաչառ ու բազմակողմանի վերլուծելու համար հարկ է նախ և առաջ մանրազնին և համակողմանի ուսումնասիրել և փորձել հասկանալ ներկայիս պետության հիմքում էական դեր ունեցող պատմական անցքերը, որոնք աշխարհագրական այդ տարածքը պետություն դարձնող ազգի կամ ազգերի հոգեկերտվածքն ու ինքնության առանձնահատկությունները ձևավորող կարևորագույն գործոններից են:

Անցյալի իմացությունն ու նրա ընկալումը պետության և հասարակության կողմից էական նշանակություն ունեն արդի հիմնախնդիրների գնահատման և ապագայի ձևավորման հարցում: Հայերը հաճախ մեղադրվել են անցյալով ապրելու և ներկան ու ապագան կառուցելու համար անցյալը նախապայման դարձնելու մեջ. «Մենք չենք կարող փոխել անցյալը, և ուրեմն եկեք շաժվենք առաջ և որդեգրենք մոռացության սկզբունքը»[1]: Սակայն եթե մոռացումը նախընտրելի այլընտրանք է, ապա հարց է ծագում՝ ո՞վ պետք է մոռանա և, մասնավորապես, ի՞նչը պետք է մոռանալ: ***Արդյո՞ք հնարավոր է քաղաքական, սոցիալական կամ նույնիսկ տնտեսական նպատակահարմարությամբ պայմանավորված՝ բանական էակի գիտակցությունը, մտածողությունն ու վերլուծական կարողություններն ապահովող ողջ համակարգը սնող հիշողությունը գործարկել՝ համաձայն արտաքին հրահանգների:*** Պատմաբան Հայկ Ղազարյանի բնորոշմամբ՝ «Համաշխարհային պատմության մեջ իրադարձություններ կան, որոնք երբեք անցյալ դառնալ կամ, առավել ևս, մոռացվել չեն կարող, քանզի նրանցից յուրաքանչյուրի մեջ խտացված ու ամփոփված է հարազատ ժողովրդի ամբողջական նկարագիրը»[2]:

Ինչպես նշում է անցումային արդարադատության և սահմանադրական տեսության մասնագետ Նենադ Դիմիտրիևիչը՝ «Անկախ նրանից, թե որքան ծանր է անցյալի բեռը, մենք պարտավոր ենք միշտ հիշել մի պարզ ճշմարտություն, որ պատմական ժամանակը չունի դադար»[3]: Պատմության շարունակականության մասին գրել է նաև 20-րդ դարի հասարակական - քաղաքական գործիչ, հրապարակախոս, Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության տեսաբան Ստեփանոս Սապահ-Գյուլեանը. «Պատմական բոլոր շրջանները իրարու հետ սերտ կերպով օղակված, զոդված են, նրանք իրարուց բոլորովին զատված,

առանձնացած, կղզիացած ժամանակամիջոցներ չեն՝ առանց հաղորդակցության ներքին կապերի»[4]:

Մարդկությանը հատուկ է հիշել անցյալի փառավոր էջերը՝ լինեն դրանք անձնական թե հավաքական՝ չհանդուրժելով որևէ թերագնահատում կամ մոռացության տանող որևէ քայլ, ճիշտ հակառակը՝ ամեն պատեհ կամ անպատեհ առիթի դեպքում հպարտորեն գովաբանում կամ պարծենում են անցյալի ձեռքբերումներով: Սակայն արդյո՞ք բարոյապես թույլատրելի է այսօրինակ ընտրողականությունը հատկապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է համայնքային, ազգային կամ պետության պատմությանն առնչվող հարցերին: Ինչպիսին էլ որ լինի անցյալը՝ լավը թե վատը, փառապանծ թե տխրահռչակ, այն վերաձևել հնարավոր չէ, բայց հնարավոր է և անհրաժեշտ է ճանաչել անցյալը և կառուցել ապագան՝ անցյալը որպես դաս մտքում պահելով[5]: Ավելին՝ անցյալի հոգեկան ցնցումից առաջացած անտրամաբանականությունը հաղթահարելու և հոգու անդորր ձեռք բերելու համար հարկ է «տրավմատիկ, ճնշված համայնքային հիշողությունները դարձնել բաց, հստակ և գիտակցված»[6]: Այլ կերպ ասած՝ միայն բաց քննարկումների և առերեսման պարագայում է հնարավոր հասնել խաղաղության: Այլապես կարող են ի հայտ գալ թեկուզև ոչ ցանկալի, սակայն բնականոն երևույթներ, ինչպիսին է ցավի կամ հոգեկան ցնցման ժառանգական փոխանցումը: Ինչպես նշում է Հարվարդի համալսարանի իրավագիտության դպրոցի դեկան Մարթա Մինոուն, հոգեկան ցնցմանն արձագանքելու անկարողությունը կարող է առաջացնել «...հոգեցնցման սերնդեսերունդ փոխանցում»[7]: Հելեն Ֆայնը նշում է, որ անցյալը հիշելը կարևոր է ոչ միայն զոհերին և նրանց հետնորդներին ճանաչելու և նրանց ապրումները վերահաստատելու

առումով, այլև անհրաժեշտ է՝ հասկանալու համար, թե ով ենք մենք հիմա կամ ով ենք եղել, և հաստատելու համար ճշմարտությունը բացահայտելու մեր պատրաստակամությունը: Ըստ Ֆայնի՝ չհիշելն ունի նաև իր վտանգները. «Նրանք, ովքեր չեն հիշում, կկրկնեն անցյալը: Բայց անցյալը չի կրկնվում ճիշտ նույն ձևով, ավելին՝ մենք կարող ենք հիշել և կրկնել՝ հաճախ փոխելով դերերը»[8]:

Հիշողությանն ու մոռացությանը վերաբերող հարցերը մշտապես եղել են հոգեբանների, մարդաբանների, ազգագրագետների և անձի հոգեկերտվածքը, աշխարհայացքը, ինքնությունն ու հոգևոր դաշտն ուսումնասիրող այլ ոլորտների մասնագետների ուշադրության կենտրոնում: Անցյալի ուսումնասիրությունը որքան էլ որ բազմաշերտ ու բազմաբևեռ լինի, մեկ բան հստակ է և թերևս ընդհանուր բոլոր ոլորտներում ուսումնասիրվող հարցերի պարագայում՝ ***անցյալը փաստերի ամբողջականության վրա հիմնված իրողություն է, որը, լինելով անփոփոխ, չի կարող անհետ անցնել, և հնարավոր չէ այն ձևափոխել, այլ հարց է, որ հնարավոր է այն տարբեր կերպ վերլուծել և գնահատել:***

Վերոբերյալ հարցերն ավելի սուր և խրթին են դառնում հատկապես այն դեպքում, երբ անցյալի ուսումնասիրությունը վերաբերում է պատմական դեպքերին ու իրադարձություններին, որոնք անխուսափելիորեն ազդում են ներկա քաղաքական և սոցիալական խնդիրների վրա: Եվ անկախ մեր ցանկությունից՝ անցյալն իր վճռորոշ դերակատարումն ունի ներկա քաղաքական իրողություններում. անցյալում տեղի ունեցած դեպքերն ուղղակիորեն ազդում են արդի հիմնախնդիրների վերլուծության և գնահատման գործընթացի վրա: Թուրք հայտնի պատմաբան Թաներ Աքչամի բնորոշմամբ ևս անցյալի հարցերին անդրադառնալն անհրաժեշտ է ներկան հասկանալու համար. «...պատմության մասին մտածելը և պատմության հետ առերեսվելն իրականում նշանակում է ներկայով զբաղվել, առերեսումն անհրաժեշտ է ներկայի խնդիրների լուծման համար»[9]:

Անցյալում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ մեր ունեցած տեղեկատվության ամբողջականությունը կոչվում է պատմական գիտելիք, որն ուղենշային է դառնում ներկային և ապագային վերաբերող հարցերի քննության պարագայում: Ն. Դիմիտրիևիչը

համոզված է, որ անցյալը և ներկան ժամանակավոր կատեգորիաներ են. «Անցյալն այն է, ինչ այլևս գոյություն չունի, ներկան այն է, ինչ գոյություն ունի հիմա: Ճշմարիտ է, որ մենք՝ այսօր ապրողներս, չենք կարող ուղղակիորեն վերապրել անցյալը, մենք չենք կարող հանդիպել մարդկանց, ովքեր այլևս ողջ չեն, մենք չենք կարող մասնակցել անցյալի իրադարձություններին, մենք չենք կարող փոխել ոչինչ, ինչ տեղի է ունեցել անցյալում: Բայց մենք կարող ենք և բնականոն կերպով տեղեկանում ենք երեկվա գործընթացների, իրադարձությունների և գործող անձանց մասին. դա կոչվում է պատմական գիտելիք: Մենք նաև տեղեկանում ենք մեր անցյալից, որպեսզի տեսնենք, թե այն ինչ կարևոր դերակատարում ունի մեր ներկայի մեջ. այս երկու ժամանակավոր մեծությունների հարաբերությունը հաճախ մեկ ընդհանրություն է»[10]: Ինչպես նշում է Թաներ Աքչամը, «Մոռացությունը խեղաթյուրված պատմագրության ամենաամուր հիմնաքարն է»[11]:Եվ ուրեմն այն, ինչ ներկա է այսօր, վաղն արդեն կլինի անցյալ: Իսկ մոռացության տալ անցյալը՝ կնշանակի ժխտել ժամանակի շարունակականության փաստը, որը որքան անհեթեթ, նույնքան և վտանգավոր կարող է լինել, հատկապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է պատմական ժամանակի շարունակականությանը: Եթե մոռացությունը կամ ամնեզիան հիշողության խանգարման տեսակ է, որը կարող է ունենալ առաջացման տարատեսակ և որոշ դեպքերում գուցե և առարկայական պատճառներ, ապա ***ժխտումն ընտրություն է, որն ունի առաջացման մեկ պատճառ՝ կամք:***

Ժխտել՝ բառարանային բացատրությամբ նշանակում է ուրանալ, մերժել, բացասել, հայտարարել չլինելը, կեղծել, ձևացնել[12]: Ժխտումը մեկ այլ բառարանային բացատրությամբ հայտարարություն է, որն «...ասում է, թե ինչոր բան ճիշտ չէ կամ գոյություն չունի»[13]: Համաձայն Ս. Կոհենի տեսության՝ «ժխտումը կարող է լինել անհատական, անձնային, հոգեբանական և մասնավոր, կամ ընդհանուր, սոցիալական, հավաքական կամ կազմակերպված»[14]: Հոգեբանության մեջ ժխտումը մեկնաբանվում է որպես պաշտպանական մեխանիզմ, որի կիրառման ժամանակ անձը մերժում է անցանկալի գոյությունը[15]: Որոշ մասնագետներ ժխտումը որպես պաշտպանական մեխանիզմ կիրառելը անվանում են հոգեբանական ռազմավարություն, որով անձը մեղմում կամ խուսափում է բացասական իրավիճակներից[16]:

Հոգեվերլուծության տեսանկյունից անձնային մակարդակում ժխտում թերևս տեղի է ունենում անընդմեջ: Ծխող անձը ժխտում է, որ ծխելը կարող է վնասել իրեն, կամ ցուրտ եղանակին գրավիչ երևալու մոլուցքով տարված անձը, ով կրում է եղանակային պայմաններին անհամապատասխան հագուստ, ժխտում է, որ կարող է հիվանդանալ, արագությունը գերազանցող վարորդը ժխտում է, որ իր այդ արարքով կարող է անդառնալի հետևանքներով լի

վթարի պատճառ դառնալ: Անձնային մակարդակում օրինակները որքան շատ, նույնքան և բազմաբնույթ են: Սակայն եթե վերոբերյալները հիմնականում մոտալուտ կամ հավանական վտանգի ժխտման օրինակներ են, որոնք դեռևս չունեն տվյալ դեպքի վերաբերյալ փաստական ապացույցներ և մեկնաբանվում են այլ դեպքերի օրինակներով, ապա անցյալում տեղի ունեցած իրողության ժխտումն ունի իրեղեն ապացույցներ և կամ փաստեր, որոնց ուրացումը հստակորեն վճռված կամքի դրսևորում է:

Անցյալի ժխտումը փախուստ է իրականությունից, և անկախ ժխտելու մեր ցանկությունից կամ դրդապատճառներից՝ անցյալը փաստերով հաստատված անփոփոխ իրականություն է: Ավելին՝ անցյալում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ մեր ունեցած տարակարծությունները չեն կարող փոփոխել դրանց բնույթը, դրանք շարունակում են մնալ որպես արդի մարտահրավերներ, որոնք իրենց անվիճելի ազդեցությունն ունեն մեր վրա այսօր. «Մեր հակամարտություններն անցյալի վերաբերյալ հաճախ հակամարտություններ են մեր ներկայի և ապագայի վերաբերյալ»[17]:

Ժխտումը բոլորովին այլ դրսևորումներ և ձևակերպումներ է ստանում, երբ վերաբերում է անցյալում տեղի ունեցած ոճրագործություններին: Ինչպես մեկնաբանում է պատմաբան Վահագն Հակոբյանը՝ «ժխտումը քաղաքական դրդապատճառներով ձևավորված անցյալի և ներկայի պատմական փաստերն ու իրադարձությունները ժխտելու կամ աղավաղելու միջոցառումների ամբողջություն է»[18]: Ժխտել անցյալում տեղի ունեցած հանցագործությունները՝ նշանակում է մերժել պատմական փաստերը, քանզի դրանց ճանաչումն ու ընդունումը ենթադրում են պատասխանատվության ստանձնում տեղի ունեցածի նկատմամբ, որը լի է բազում քաղաքական, սոցիալական և տնտեսական վիճահարույց հարցերով:

Պատմության խեղաթյուրումը, անկախ մեկնաբանություններից, արդարացումներից և պատճառաբանություններից, փակուղի է տանում այդ կեղծարարությամբ սնված և դաստիարակված հասարակության անդամներին, ովքեր երբևէ կասկածի տակ չեն դրել պետության մատուցած պաշտոնական տեսակետը, ինչը վտանգում է նաև տվյալ հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների ձևավորման հնարավոր գործընթացը: Այսօրինակ իրավիճակը Ռոջեր Սմիթը համեմատում է Օրուելյան աշխարհի հետ. «Պատմության աղավաղումը քաղաքական նպատակներով ունի էական հետևանքներ և՛ ժողովրդավարության կիրառման, և՛ մարդու իրավունքների պաշտպանության հարցում: Ուրիշ ինչ էլ որ ժողովրդավարությունը նշանակի, այն նշանակում է, որ կառավարությունը պատասխանատու է հանրության առջև: Բայց եթե կառավարությունը ստում է իր քաղաքացիներին, լռելյայն համաձայնում է գիտության ահաբեկմանը, ճնշում է խոսքի ազատությունը և հանդուրժում է իրավահաջորդ պետության փորձերը վերահսկելու այն, ինչ դասավանդվում է հանրային դպրոցներում, ապա մենք մտել ենք Օրուելյան աշխարհի, ուր ուժն է թելադրում իրականությունը. ճշմարտությունն այն է, ինչ ասում է կառավարությունը: Այս պայմաններում պատասխանատվությունը լավագույն դեպքում կեղծիք է՝ ժողովրդավարության կործանում մի վարչակազմի կողմից, որը չի ցանկանում առերեսվել իր երկրի պատմության հետ և ընդունել իր պարտավորությունները ներկայում»[19]:

Ժխտել անցյալում իրագործված ոճրագործությունները՝ նշանակում է նաև ժխտել սեփական պատմությունը: Սակայն հարկ է ընդգծել, որ սեփական պատմություն ասվածը ևս հարաբերական հասկացություն է, քանզի պատմությունը և պատմական իրադարձությունները մեկ պետության կամ մեկ ազգի մասնակցությամբ կամ դրանց շուրջ տեղի ունեցած անցքերը չեն լոկ: Պատմությունը միահյուսում է ազգեր ու պետություններ: Պատմական իրադարձությունների վերլուծումը, գնահատումը կամ ժխտումն ունեն համամարդկային հետևանքներ: Անցյալի վերաբերյալ ներկայիս գնահատումն ու ընկալումը վերաբերում են պատմական տվյալ ժամանակաշրջանում գործուն մասնակցություն ունեցած կամ անկախ իրենց կամքից այդ իրադարձություններում ներգրավված բոլոր կողմերին: Եւ ուրեմն ժխտել սեփական պատմությունը՝ նշանակում է ժխտել այլոց պատմությունը ևս, որը հղի է նոր հակամարտությունների առաջացման կամ դրանց էսկալացիայի լուրջ սպառնալիքով: Այս իմաստով հատկապես վտանգավոր է մարդկայնության դեմ իրականացված հանցագործությունների՝ ցեղասպանությունների, ժխտումը: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Tuomas Forsberg, "The Philosophy and Practice of Dealing with the Past: Some Conceptual and Normative Issues." Burying the Past: Making Peace and Doing Justice after Civil Conflict. Expanded and Updated, Nigel Biggar (ed.), Washington, D.C., Georgetown University Press, 2003, էջ 63:

2- Հայկ Ղազարյան, Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, հատոր երկրորդ, Երևան, Տիգրան Մեծ հրատարակչություն, 2007, էջ 302:

3- NenadDimitrijevic, Duty to Respond: Mass Crime, Denial, and Collective Responsibility, Budapest-New York, Centr-al European University Press, 2011, էջ 53:

4- Ստեփանոս Սապահ-Գույլեան, Պատասխանատուները, Բ տպագրութիւն, Պեյրութ, 1974, էջ 7: Սապահ-Գույլանի «Պատասխանատուները» աշխատությունը, որում հեղինակը քննում է Հայոց Մեծ Եղեռնի պատճառներն ու ներկայացնում մեղավորներին, առաջին անգամ լույս է տեսել 1916 թ. ապրիլին Եգիպտոսում և ապա 1974 թ. վերահրատարակվել է Բեյրութում:

5- MariHovhannisyan, Collision of Past and Present: The Collective Memory of the Armenian Genocide and the Turkish Denial,Germany, Saarbrucken, LAMBERT Academic Publishing, 2012, էջ 5:

6- Avishai Margalit, The Ethics of Memory, Harvad University Press, 2004, էջ 5:

Martha Minow, Breaking the Cycles of Hatred: Memory, Law and Repair, Nancy L. Rosenblum (ed.), Princeton University Press, 2002, էջ 16:

7- Helen Fein, նշված աշխ., էջ 1-2:

8- Թամար Աքչամ, Հայերի բռի իսլամացումը. լռություն, ժխտում և ուծացում, թարգմ.Մելինե Ամուրյանի, Երևան, 2016, էջ 19:

9- Nenad Dimitrijevic, նշված աշխ., էջ13:

10- Թամար Աքչամ, Հայերի բռի իսլամացումը, էջ 34:

11- Ստեփան Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Երևան,

12-Հատոր 2, ցուցակ 1, 1944, էջ 143:

13- Sally Wehmier, Oxford Advanced Learner's Dictionary, Oxford University Press, Seventh edition, 2005, էջ 407:

14- Stanly Cohen, նշված աշխ, էջ 9:

15- Nancy Mc Williams, Psychoanalytic Diagnosis. Second Edition: Understanding Personality Structure in the Clinical Process, New York, The Guilford Press, 2011, էջ 161:

16- D.S. Holmes, "Defense Mechanisms", Encyclopedia of Psychology, Raymond J. Corsini (ed), New York: John Wiley &Sons, Volume I, 1984, էջ 347-350:

17- NenadDimitrijevic, նշված աշխ., էջ 15:

18- Mari Hovhannisyan, նշված աշխ., էջ 34:

19- Roger W. Smith, The Significance of the Armenian Genocide after Ninety Years, էջ i:

Հայկական պետության «զրոյական կետը» բազմաթիվ հնարավորություններ է պարունակում հայ ժողովրդի համար

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Արցախյան երրորդ պատերազմի ավարտից անմիջապես հետո մեր տարածաշրջանի հիմնախնդիրներով զբաղվող փորձագետները, ի թիվս այլ խնդիրների, բարձրացրին նաև հետխորհրդային երկրների կենսունակության և ինքնաբավության հարցը: Նման քննարկումներ քաղաքագիտական շրջանակներում, իհարկե, վաղուց կան: Դրանք հիմնականում պայմանավորված էին ներքին ու արտաքին մարտահրավերներին այս կամ այն պետության արձագանքելու և դրանք հաղթահարելու կարողության դրսևորմամբ: Մեր տարածաշրջանի երկրների պարագայում այդ դիսկուրսը սկսվեց 2003 թվականին Վրաստանում տեղի ունեցած, այսպես կոչված, Վարդերի հեղափոխությանը հաջորդած զարգացումների հետևանքով: Սահակաշվիլիի կառավարման առաջին իսկ օրերից, անգամ մինչև 2008 թ. վրաց-օսական պատերազմի սկիզբն ու դրա կործանարար հետևանքները Վրաստանի համար, շատերին արդեն պարզ էր, որ երկիրը կորցրել է ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունները, գրեթե ամբողջությամբ հայտնվել է արտաքին կառավարման ներքո և տարածաշրջանում սպասարկում է բացառապես օտարների, ավելի կոնկրետ՝ Արևմուտքի և ինչ-որ չափով թուրք-ադրբեջանական դաշինքի աշխարհաքաղաքական շահերը:

2000-ականների կեսերից փորձագիտական հետազոտություններում, մամուլի հրապարակումներում, անգամ շատ քաղաքական առաջնորդների բառապաշարում Վրաստան անվան կողքին հայտնվեց «failedstate» (տապալված, չկայացած պետություն) բնութագրումը, որը հետագայում ոչմիայն ոչ ոքի կողմից չվիճարկվեց, այլև ավելի ամրապնդվեց ժամանակակից քաղաքագիտության մեջ:

2004 թվականի վերջից գունավոր հեղափոխությունների շրջափուլի մեջ մտավ նաև Ուկրաինան: Նարնջագույն հեղափոխությունից մինչև Եվրոմայդան ընկած տասը տարիների քաղաքական վայրիվերումներն ի վերջո ոչնչացրին Ուկրաինայի կառավարման համակարգերը, տնտեսությունը, հանրային միասնությունը և հանգեցրին տարածքային լուրջ կորուստների: 2014 թվականի մարտից Ուկրաինան քաղաքագիտական հետազոտություններում վերջնականապես սկսեց ներկայացվել որպես տապալված պետություն:

Ցավոք, 2018 թվականից նույն ուղին բռնեց նաև Հայաստանի Հանրապետությունը: Սկզբում, այսպես կոչված, թավշյա հեղափոխություն, հետո՝ պետական ինստիտուտների կործանում, ազգային արժեքների ոտնահարում, ժողովրդի նվիրյալների հեղինակազրկում և վերջում՝ ջախջախիչ պարտություն

պատերազմում, հազարավոր կորուստներ ու հայրենազրկում…

2020 թ. նոյեմբերին միջազգային հանրության ընկալումներում Հայաստանը համալրեց տապալված պետությունների շարքը: Բայց ոչմիայն միջազգային հանրության ընկալումներում: Ցավոք, այսօր նման խոսակցությունները շատ են նաև Հայաստանում և հայ ժողովրդի շրջանում: Մարդկանց հետ զրուցելիս հաճախ կարելի է լսել այնպիսի մտքեր, թե «հայերն այդպես էլ չկարողացան պետություն կառուցել», «մեզ ուժեղ ձեռք է պետք», «միանանք Ռուսաստանին» և այլն, և այլն: Իհարկե, հասկանալի է, որ սա պարտության և դրանից առաջացած խոր հիասթափության հետևանք է: Բայց նաև պետք է խոստովանել, որ նման տրամադրությունները շատ վտանգավոր են: Դրանք ի վերջո կարող են համոզմունք դառնալ մեր ժողովրդի շրջանում՝ նպաստելով պետության էլ ավելի թուլացմանն ու կազմաքանդմանը: Հետևաբար անհրաժեշտ է օր առաջ վերջ տալ այս ոճի ներազգային քննարկումներին՝ փոխարենը ժողովրդին առաջարկելով մտածել ճգնաժամից ելքեր գտնելու և երկրի ամուր ապագա կառուցելու մասին:

Երկրորդ դատողությունը, որ վերջին շրջանում արվում է մեր ժողովրդի մասին, այն է, թե իբր հայերը հոգնել են: Ամեն ինչից են հոգնել՝ պատերազմներից, մրցակցությունից, քաղաքականությունից և այլն: Որպես այս թեզի ճշմարտացիությունն ապացուցող փաստարկ՝ փորձագետներն ու հասարակական-քաղաքական գործիչները նշում են մեր հազարամյա պատմությունը. Իբր թե հին ժողովուրդ ենք և հիմա ընդամենը հանգիստ ծերություն ենք ցանկանում: Նույնը, իդեպ, ասվում է տարածաշրջանի այլ ժողովուրդների, այդ թվում նաև՝ ռուսների մասին: Ընդ որում, որպես այդ երևույթի հակառակ օրինակ հաճախ հիշատակվում են թյուրքական ժողովուրդները: Առաջին հայացքից նման քննարկումները նույնպես կարող են օրինաչափ թվալ, բայց կան հանգամանքներ, որոնց անտեսումը միանգամայն այլ՝ իրականությանը

չհամապատասխանող պատկերներ է ստեղծում հետազոտողների ու քաղաքական գործիչների մտքում: Դրանցից ամենապարզ օրինակն այն է, որ ազգերի ծեր կամ երիտասարդ լինելը, էլ չենք խոսում հոգնած կամ առույգ լինելու մասին, ամենևին էլ պայմանավորված չէ նրանց կազմավորման ժամանակաշրջանով: Այդպիսի դատողություններ անելիս ժամանակակից գիտությունն առավելապես հենվում է ռուս նշանավոր գիտնական Լև Գումիլյովի ազգերի էթնոգենեզի տեսության հայտնի դրույթների վրա: Այո՛, հայերը հին ժողովուրդ ենք, դարերի ընթացքում ունեցել ենք վերելքներ և անկումներ, բայց ներկայումս մենք պասսիոնիրիզմի նոր ժամանակաշրջանի առաջին փուլում ենք, որի ընթացքի կառավարման արդյունավետությունից է կախված՝ կիրացվի՞ արդյոք վերելք ապրելու մեր ներուժը, թե՞ ոչ: Ասել է թե՝ մեր ժողովուրդը եկել հասել է կարևոր հանգրվանի, որից այն կողմ անցնելու համար անհրաժեշտ է վերագնահատել, արժևորել առնվազն ՀՀ անկախության բոլոր տարիները, հասկանալ մեր պետության ու ժողովրդի կարողության սահմանները և ըստ այդմ զարգացման նոր ծրագրեր մշակել: Բայց մինչ այդ երկու կարևոր հանգամանք կա, որ պետք է հասկանալ:

ա) Հայկական պետության անկախության վերականգնումն ու դրան հետևած մեր ձեռքբերումները, այդ թվում նաև՝ տարածքային, պայմանավորված չեն եղել բացառապես հայ ժողովրդի համազգային կարողությունների կենտրոնացմամբ և այդ ուղղությամբ տարված պայքարով: Դրանց համար բարենպաստ այլ պայմաններ էլ են եղել, որոնց հանրագումարը նվազ օգտակար չի եղել, քան մեր գործադրած ջանքերն էին: Այսինքն՝ մինչ Արցախյան երկրորդ պատերազմը գոյություն ունեցած Հայաստանը (իհարկե, ներառյալ Արցախը) կիսով չափ մեր պայքարի, կիսով չափ էլ հանգամանքների դասավորման արդյունք էր: Քննարկման այլ թեմա է, թե անկախության 30 տարիների ընթացքում Հայաստանի բոլոր տարածքները յուրացնելու, ժողովրդին էլ ամբողջ ունեցվածքի լիարժեք տերը դարձնելու հնարավորություն ունեցե՞լ ենք, թե՞ ոչ: Ես համոզված եմ, որ ունեցել ենք և պարտավոր էինք անել: Դա մեր ամենամեծ բացթողումն է, որի մասին թերևս մեկ այլ առիթով կգրեմ:

բ) Հայաստանի ներկայիս վիճակն էլ չի համապատասխանում մեր ժողովրդի ներուժին:



Մի շարք հանգամանքների բերումով հայկական պետություններն ու հայ ժողովուրդը պատրաստ չէին Արցախյան երրորդ պատերազմին: Դրա հետևանքով մեր կորուստներն էլ շատ ավելի մեծ եղան, քան կարելի էր պատկերացնել անգամ վատագույն սցենարի զարգացման դեպքում:

Այս երրորդ հանգամանքն առավել քան պարտավորեցնող է: Հայաստանն այսօր այլ ելք, քան վերականգնման քաղաքականություն մշակելն ու իրականացնելն է, պարզապես չունի: Որովհետև եթե կա ներուժ, ապա այն անպայման պետք է իրացվի: Այլ հարց է, որ մեր հայրենակիցներին այսօր շատերն են փորձում համոզել, թե նման հնարավորություն չկա: Դրան են միտված հայ ժողովրդի հոգնած լինելու, սեփական պետություն պահելու անկարողության և թշնամու հետ խաղաղ ապրելու մասին ակտիվորեն տարածվող բոլոր թեզերը: Դրանց հեղինակներն ու քարոզիչներն էլ հայտնի է, թե ովքեր են: Բայց, անկախ այդ ամենից, կան իրողություններ, որոնք հնարավոր չէ շրջանցել: Դրանցից ամենակարևորն այն է, որ հայ ժողովուրդը հոգևոր, մշակութային, սոցիալական, քաղաքական վերելքի փուլում է: Այդ փուլը սկսվել է 1960-ական թվականներից և դեռ զարգացման երկարատև ժամանակաշրջան ունի: Իհարկե, ընթացքում փորձություններ և խանգարող հանգամանքներ էլ կլինեն: 2018 թ. հեղաշրջումն ու Արցախյան երկրորդ պատերազմը դրանց թվում էին: Բայց չի կարելի թույլ տալ, որ այդ փորձությունները խոչընդոտեն ժողովրդի վերելքը: Ճիշտ հակառակը՝ դրանցից պետք է դասեր քաղել և ամեն ինչ անել, որպեսզի դրանք, վերածվելով նոր նպատակադրումների, շատ կարևոր ազդակներ հաղորդեն ազգային վերելքին:

Ելնելով վերոգրյալից՝ ուզում եմ կարևոր եզրահանգում անել՝ ես չէի շտապի Հայաստանը գրանցել տապալված պետությունների շարքում: Այո՛, խնդիրները շատ են, բայց պետության համար գոյություն ունեցող պայմանական զրոյական այս կետը շատ հնարավորություններ է պարունակում: Ուստի բոլորիս մտորումները այժմ միայն դրա շուրջ պետք է լինեն՝ օր առաջ իրացնելու այդ հնարավորությունները և դուրս գալու ճգնաժամից: Հաջորդիվ ավելի հեշտ է լինելու: Վստահեցնում եմ:

Առանց գիլյոտինի առաջընթաց չի լինում: Էվոլյուցիո՞ն, թե՞ հեղափոխական զարգացում

Արա Նոանյան

Պատմությունը վկայում է, որ պետություններում հասարակարգային փոփոխություններն ընթացել են բոլորովին ոչ հարթ և խաղաղ ճանապարհով: Այսօրվա հզոր պետությունները՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և այլն, իրենց զարգացման ընթացքում անցել են **տեսակային պայքարի** ճանապարհով: Ստրկատիրությո՞ւն, թե՞ արդյունաբերական զարգացում, բացարձակ միապետությո՞ւն, թե՞ հանրապետություն և այլն:

Որքան էլ հզոր երկրները, մոռանալով սեփական պատմությունը, կոչ անեն մյուսներին «խելոք» մնալու, չեն կարող ժխտել այն հաստատումը, **որ թույլ պետությունները համբերատարությամբ, աստիճանական էվոլյուցիայի արդյունքում չեն հասնի զարգացած պետությունների մակարդակին** նույնիսկ հարյուրամյակներ անց: Պատմական որոշակի փուլում **պետք է տեղի ունենան արմատական փոփոխություններ**, որոնք որակապես նոր մակարդակի կբարձրացնեն պետությունն ու հասարակությունը:

Պետությունները զարգանում են որոշակի մոդելներով: Իսկ տվյալ մոդելի ընտրությունը պայմանավորվում է հասարակության մեջ առկա տեսակներով: Այլ կերպ ասած՝ **հասարակարգերի փոփոխությունները ոչ միայն դասակարգային, այլ նաև տեսակային պայքարի արդյունք են:** Չէ՞ որ պայքարի ճամբարում կարող են լինել տարբեր սոցիալական շերտերի, նյութական կամ կրթական կարգավիճակի մարդիկ: Նրանց, սակայն, միավորում են միևնույն մտածելակերպը և սեփական հայրենիքում ապրելու և արարելու ընդհանուր կանոնների վերաբերյալ միասնական պատկերացումները: Բազմաթիվ են օրինակները, երբ հարուստ ընտանիքի ներկայացուցիչն ունենում է ձախակողմյան հայացքներ, կամ չքավորը գնում է բուրժուական գաղափարախոսության հետևից:

Տասնամյակների և նույնիսկ հարյուրամյակների ընթացքում պետության մոդելները կատարելագործվում են, իսկ հետո սպառվում կամ դառնում ժամանակավրեպ: Այդ ժամանակ լճացումից, նահանջից, թուլացումից խուսափելու համար հասարակությունը պետք է ի վիճակի լինի փոխելու պետության մոդելը և ձևավորելու առաջ եկած մարտահրավերներին դիմագրավելու ունակ հասարակական հարաբերությունների նոր համակարգ: Եթե պետությունը բարեհաջող հաղթահարում է այդ փուլը, ապա շարունակում է զարգացումը, իսկ եթե ոչ, ապա զիջում է դիրքերն ազգերի մրցակցության համաշխարհային մրցավազքում: **Եվ երբ առաջ է գալիս հասարակական նոր հարաբերությունների ձևավորման հրամայականը, դա հաճախ չի կատարվում ներհասարակական կոնսենսուսի միջոցով,** ինչը, անշուշտ, լավագույն տարբերակը կլիներ: Դա իրականացվում է կամ առաջադիմական վերնախավի կողմից հանրությանը պարտադրելով,

կամ դիմադրող հին պահպանողական իշխանության փոփոխությամբ: Եվ քանի որ, որպես կանոն, հասարակության շերտերի եսասիրական շահերը գերիշխում են և թույլ չեն տալիս գնալ փոխզիջումների հանուն ապագայի ու հանուն ընդհանուր շահի, ուստի, անկախ նրանից՝ նախաձեռնությունը գալիս է վերևից, թե ներքևից, **նոր հասարակարգի ձևավորումը ուղեկցվում է ցնցումներով և բռնությամբ:**

Այս խնդրին անդրադարձել էինք դեռ երկու տարի առաջ մեր «Նոր համընդհանուր կոնսենսուս և վճռական ռեֆորմներ՝ հանուն պետական շահի» հոդվածում (տես www.aravot.am /2019/07/11/1055126/): Համաշխարհային պատմությունը ցույց է տալիս, որ եթե նոր համընդհանուր կոնսենսուսը չի կայանում գիտակցաբար, ապա այն պետք է ձևավորվի հանրության առաջադիմական հատվածի կողմից և դառնա հասարակության անդամների կեցության նոր կանոնը:

Տեսակների պայքարը ժամանակակից պատմության մեջ

Ինչպես արդեն նշեցինք, բազմաթիվ ժամանակակից պետությունների զարգացումը միշտ չէ, որ անցել է հարթ, սահուն, առանց քաղաքացիական բախումների և զանգվածային ընդվզումների: **Որոշ պետություններում ապագայի ընտրությունն ուղեկցվել է արյունալի իրադարձություններով՝** քաղաքացիական պատերազմներ և հեղափոխություններ, դրանց ուղեկցող սահմռկեցուցիչ և դաժան իրադարձություններ:

Ընդամենը 150 տարի է անցել **Ամերիկայի քաղաքացիական պատերազմից,** որի պատճառով զոհվել կամ մահացել է ավելի շատ մարդ, քան կորցրել է ԱՄՆ-ն համաշխարհային պատերազմների ընթացքում: Կարող ենք տեսականորեն ընդունել, որ կարելի էր ընդունել այն ժամանակվա իրականությունը և չգնալ պատերազմի: Բայց չմոռանանք, որ

քաղաքացիական պատերազմն ապահովեց երկրի միասնությունը, արդյունաբերական զարգացումը, ստրկատիրության վերացումը, առանց որոնց՝ այլ կլիներ ինչպես այդ տարածքի ապագան, այնպես էլ պետության տեղը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Աբրահամ Լինքոլնը՝ ԱՄՆ պատմության ամենանշանավոր և հարգված նախագահներից մեկը, գլխավորում էր արդյունաբերական Հյուսիսի զորքերը Համադաշնության դեմ պատերազմում՝ անցնելով դեպի առաջընթաց տանող ծանր ճանապարհով: Նա ընդդիմախոսներին ներգրավել էր նոր պետության շինարարության մեջ, առաջարկել վերակառուցման և համազգային համերաշխության ծրագիր, սակայն ունեցավ ողբերգական վերջաբան՝ սպանվելով գաղափարական ընդդիմախոսի կողմից:

Եվրոպական մայրցամաքի պատմությունը հարուստ է այնպիսի իրադարձություններով, որոնք փոխեցին դարաշրջանը և փոփոխություններ առաջ բերեցին ոչ միայն այն երկրներում, որոնցում դրանք տեղի ունեցան, այլ նաև ամբողջ աշխարհում: Նիդերլանդները, Անգլիան, Ֆրանսիանն **եվրոպական այլ երկրներ, դարեր առաջ գրելով իրենց պատմության դաժան էջերը, միաժամանակ ճանապարհ էին հարթում դեպի նոր տիպի հասարակություն:** Անշուշտ, այն ժամանակ շատերը չէին կարող հասկանալ այդ իրադարձությունների աշխարհաքաղաքական, պատմական կամ փիլիսոփայական նշանակությունը: Բայց առաջընթացը խոչընդոտող հին դարաշրջանի հետ բախումը և **նորի ձևավորումը ընձեռեցին այդ պետություններին հնարավորություն՝ առաջիններից մեկը մտնելու հասարակական նոր հարաբերությունների դարաշրջան, ինչը մինչ օրս նրանց տալիս է առավելություն այլ ազգերի նկատմամբ:**

Անգլիայում 17-րդ դարի քաղաքացիական պատերազմը և բուրժուական հեղափոխությունը բնորոշվում էին խորհրդարանի և միապետականների, ֆեոդալների և նոր տիպի սեփականատերերի միջև պայքարով, ինչը համեմվում էր նաև կրոնական բաղադրիչով: Այն ուղեկցվեց Կարլ Առաջինի գլխատմամբ և Օլիվեր Կրոմվելի կառավարմամբ: Ու թեև տասնյակ տարիներ անց երկիրը կրկին վերադառնում է միապետության, սակայն ընդունվում է խորհրդարանի գերակայությունն ու դերը պետական կառավարման համակարգում:

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը հին կարգերի տապալման և բացարձակ միապետության վերացման իր արդյունքներով ունեցավ խոշորագույն նշանակություն ոչ միայն այդ երկրի, այլ նաև բոլոր առաջադեմ մտածողների համար: Սոցիալ-տնտեսական և բյուջետային ճգնաժամը, հին վերնախավի անկարողությունը՝ դիմագրավելու նոր մարտահրավերներին, լուծելու կուտակված խնդիրները և իրականացնելու բարեփոխումներ, առաջացրին ժողովրդական ապստամբություն, որի առաջին քայլը սահմանադրական միապետության, իսկ այնուհետև հանրապետության ստեղծումն էր: Այստեղ նույնպես խոսքը միայն իշխանության փոփոխության մասին

ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինքոլնը

չէ: Աննախադեպ էին բարեփոխումները, որոնք իրականացվեցին Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում և հետո: Դրանք ընդգրկում էին կյանքի բազմաթիվ ոլորտներ՝ եկեղեցի, մասնավոր սեփականություն և մրցակցություն, դատական, հարկային ու մաքսային համակարգեր և այլն: Հեղափոխությունն ուղեկցվում էր դաժանությամբ և զանգվածային մահապատիժներով: Ընդ որում, գիլյոտինի ենթարկվեցին ոչ միայն Լյուդովիկոս 16-րդը, Մարի Անտուանետը և արիստոկրատիայի ներկայացուցիչները, այլ նաև հեղափոխության բազմաթիվ մասնակիցներ հեղափոխության գաղափարներին «դավաճանելու» համար: Իսկ երբ գիլյոտինը չէր հասցնում, կիրառվում էին զանգվածային գնդակահարություններ:

Աշխարհաքաղաքական նման հեղափոխությունների ականատես և մասնակից դարձավ նաև հայ ժողովուրդը ավելի քան մեկ դար առաջ. մեկը՝ Օսմանյան կայսրությունում, մյուսը՝ Ռուսական կայսրությունում: Այս երկրներում նույնպես, ինչպես և վերը հիշատակված երկրներում, **հեղափոխությունը մեկանգամյա գործողություն չէր, և հին հասարակարգի ջախջախումն ու նորի կառուցումն ընթանում էր փուլերով**: Այդ պետությունները որոշակի ժամանակահատված մտան տևական անկայունության և հեղափոխությունների շրջապտույտի մեջ, որոնց ընթացքում նույնպես հաջորդ փուլի հեղափոխականները պատժում էին նախորդ փուլի հեղափոխականներին, ինչպես նաև իրենց շարքերից այն մարդկանց, որոնք բավականաչափ «հավատարիմ» չէին հեղափոխության գաղափարներին: Ընդ որում, Ռուսաստանում հեղափոխությունն ու քաղաքացիական պատերազմը ուղեկցվեցին ոչ միայն միապետի, այլև նրա ողջ ընտանիքի սպանությամբ...

Տեսակների պայքարը Հայաստանում

Պետություններում հասկանալի պատճառներով **էվոլյուցիոն զարգացման տրամադրությունները ավանդաբար ձևավորում է իշխող խավը,** որը փորձում է իրեն ապահովագրել իշխանության կորստից, բողոքավոր հոսանքներից, հանրության ներսում ցավոտ գործընթացներից՝ արդարացնելով պատմական տվյալ ժամանակաշրջանում սեփական ձախողումները:

Ոչ անկախ պետականության պայմաններում

Հայաստանում ներտեսակային և աշխարհայացքային պայքարը նմանատիպ դրսևորումներ չի ունեցել. հասարակարգը և պետության մոդելը թելադրվում էին իշխող կայսրությունների կողմից: 1918-1920 թթ. անկախ պետականության կորուստը և անայլընտրանք գաղափարախոսության հաստատումը հզոր պետության կազմում ճնշեցին ներտեսակային պայքարը հայ ժողովրդի մեջ:

ԽՍՀՄ փլուզումից հետո **Հայաստանում տարիներ շարունակ քաղաքական լարվածությունը, քաղաքացիական բախումները և ներտեսակային պայքարը զսպվում էին ոչ միայն իշխանության, այլև ընդդիմության կողմից:** Դրան մեծապես նպաստում էին տարածաշրջանի իրավիճակը և պետության ու ժողովրդի անվտանգության արտաքին անմիջական սպառնալիքները: Քաղաքական ուժերը հաճախ խուսափում էին պայքարի սրացումից կամ կտրուկ գործողություններից՝ հանուն երկրի կայունության և անվտանգության: Իսկ խիստ վիճելի մոդելով պետությունը կառավարող, իշխող ուժերը, շահարկելով անվտանգության խնդիրը, ամեն գնով հետապնդում էին մեկ նպատակ՝ պահել սեփական իշխանությունը: Այս ամենի հետևանքով պետությունն ընթանում էր ըստ հրամցված կեղծ նեոլիբերալ գաղափարախոսության, իսկ պետության զարգացման արդյունավետ դիսկուրսն ամբողջությամբ դուրս էր մղվում հասարակական և քաղաքական կյանքից: **Քաղաքական փոփոխությունները տեղի էին ունենում բացառապես իշխանության շարունակական փոխանցումների միջոցով:** Անկախ Հայաստանում չի եղել քաղաքական արդար մրցակցություն. իշխանությունները միշտ ունեցել են վերարտադրման «բոնուս»: Եվ զարմանալի չէ, որ երկրում **ընտրություններով երբեք իշխանափոխություն տեղի չի ունեցել:** Ընտրություններն ընդամենը արձանագրում էին արդեն իսկ իշխանության եկած անձով ձևավորված քաղաքական ստատուս քվոն: Նույնը տեղի ունեցավ նաև 2018 թվականին:

Այո՛, շատերի մոտ կար վախ՝ ընդվզելու անարդյունավետ իշխանության դեմ, կորուստներ չունենալու համար: Բայց այսօր պարզվեց, որ հանուն կայունության համբերատար դիտելը՝ ինչպես է հասարակության մի տեսակը խժռում մյուս՝ պետականամետ ու հայրենասեր տեսակին, երկրի վրա ավելի թանկ է նստում:

2020 թվականի պատերազմից հետո խորացած քաղաքական ճգնաժամը շատ բան բացահայտեց: Շատերը վաղուց էին գիտակցում և ահազանգում ներհասարակական խորքային հիմնախնդիրների մասին, սակայն **հասարակության լայն հատվածների համար ողբերգության իրական մասշտաբները բացահայտվեցին հենց պատերազմից հետո:** Պատերազմը ոչ միայն հիասթափության, այլ նաև սթափվելու և շատ բաներ վերահիմաստավորելու առիթ էր:

Վերջին ամիսների քաղաքական իրադարձությունները ստացան տարբեր բնորոշումներ՝ սկսած



Ռոբեսպիերի գլխատումը

հայրենիքի փրկությունից մինչև պայքար իշխանության համար: Բայց առաջին հերթին **այսօր Հայաստանում ընթանում է տեսակների պայքար:** Իսկ հնարավո՞ր է արդյոք տեսակների պայքար առանց գիլյոտինի:

Նոր հասարակարգ՝ քաղաքական սանիտարիայի միջոցով

Իշխանության փոխանցումները Հայաստանում ուղեկցվում են ճամբարափոխությամբ. **երկրում փաստացի խրախուսվել են դավաճանությունը և հարմարվողականությունը:** Սկզբունքայնությունը և գաղափարական կեցվածքը փոխարինվել են օրվա իշխանության քմահաճույքների կատարմամբ: Ծառայությունը պետությանը, այդ թվում՝ պետական **ծառայությունը, փոխարինվել է ծառայամտությամբ:** Խորքային պետության կառուցման փոխարեն մեզանում մակերեսային ավտորիտար համակարգ էր, որը չէր նպաստում պետական շինարարությանը և պետական շահերով առաջնորդվող վերնախավի, պետական համակարգի, գործարար կամ մտավորական շրջանակների ձևավորմանը (տե՛ս *www/iarex.ru/articles/77007* կամ *www.yerkir.am/news/view/210753.html*):

Ամենից հարմարավետ իրենց զգում են առաջին հերթին դավաճանները, ճամբարափոխները, իշխանություններին ստրկամտորեն ծառայողները: Առաջնորդի պաշտամունքից մինչև ատելություն, և հակառակը՝ շատերն անցնում են զարմանալիորեն արագ և հեշտ: Ամենախայտառակ հանձնարարությունների կատարումը, օրենքների խախտումները, խղճին, երկրին և պետությանը հակառակ գնալն արդարացվում են մեկ ժեստով՝ մատով դեպի վերև ցույց տալով: Պատասխանատվությունից խուսափելը և վերադասին ակնարկելը սեփական պահվածքն արդարացնող ինդուլգենցիան է:

Այս իշխանությունը նույնպես չկտրեց դատապարտելի շղթան, ինչը բնական է: Պետական մտածելակերպից, պետական կառավարման ու քաղաքական համակարգի մասին պատկերացումներից զուրկ պաշտոններ ստանձնածների խնդիրը բոլորովին այլ էր:

Հաջորդ իշխանության հավակնողները պետք է հստակ ազդակ հղեն հանրությանը, որ հաջորդ իշխանության օրոք այդպես չի լինելու: **Հնարավոր չէ կառուցել նոր հասարակարգ առանց մաքրման, առանց քաղաքական սանիտարիայի:** Բոլոր

դավաճանները, ստրուկները, հակապետական տարրերը, օտարերկրյա գործակալները, թուրքասեր լոբբիստները, հին ու նոր տականքները, մեծ ու փոքր ապօրինություններ կատարողները՝ սկսած քննիչից մինչև բարձրաստիճան իշխանավորներ, շարքայինից մինչև մեծ աստղերով ուսադիրավորներ, օլիգարխից մինչև խորհրդարանական, պետք է խստորեն պատժվեն: Չպետք է թույլատրվի, որ պետությունը կործանման տանողները մատները վերև պարզելով ակնարկեն, թե իրենք մեղավոր չեն, և այդ խայտառակությունները կատարվել են վերադասի ցուցումով:

Շատերն այստեղ կարող են ասել, որ շարքային ծառայողը, ոստիկանը, քննիչը, դատախազը, պատգամավորը, գործարարը, լրագրողը մեղավոր չեն, քանի որ երկրի ղեկավարության հրամանները չկատարելը կամ դեմ գնալը այդ մարդկանց համար հղի է հետևանքներով: Ինչո՞ւ պետք է պատժվեն այդ մարդիկ, առավել ևս որ նրանք պատրաստ կլինեն ծառայելու հաջորդ իշխանություններին: Այո՛, **հսկայական է առաջին անձի դերը պետության մեջ**: Նա է ոչ միայն պաշտոնական, այլև բարոյահոգեբանական վիճակի առաջին թելադրողն ու վերահսկողը: **Բայց մեկին մեղավոր ճանաչելով հասարակության առողջացում պարզապես չի կարող լինել**: Ձտումը պետք է անցնի «որոշումներ կայացնող, փոխանցող, կատարող» ամբողջական շղթայով:

Ազգային համերաշխությունը չի կարող հիմնված լինել համատեղ գործած հանցագործությունների կամ մեղքերի վրա:

Նոր տիպի պետություն կառուցելու համար **պարտադիր է տոտալ քաղաքական սանիտարիան**, որը պետք է՝

-յուրաքանչյուր անձի մեջ սերմանի պատասխանատվության զգացում սեփական խոսքի, գործի, վարքագծի և ամեն կարգի արարքների համար. տոտալ անպատասխանատվությունը պետք է փոխարինվի յուրաքանչյուր քաղաքացու՝ հասարակության մեջ սեփական դերն ու տեղն ամեն րոպե հիշելով՝ շարքային բանվորից և գյուղացուց մինչև երկրի նախագահ և վարչապետ,

- յուրաքանչյուր մարդու հիշեցնի, որ իշխանության ճանապարհը տանում է նաև դեպի «կառափնարան», ընդ որում՝ ոչ միայն գործած սխալների ու հանցանքների, այլ նաև անգործության համար:

Ռուսաստանի վերջին ցար Նիկոլայ 2-րդը ընտանիքի հետ

«Կառափնարանը» պետք է լինի ցանկացած քաղաքացու աչքի առջև, հակառակ դեպքում այսօրվա քողարկված հակապետական գործունեությունը ծավալողը վաղը նույն ծառայությունն է մատուցելու հայրենիքը բացահայտորեն օկուպացրած օտարներին:

Գիլյոտինը պետք է վերաբերի ոչ միայն մարդկանց, այլ նաև բազմաթիվ ոլորտներում իրականացված քաղաքականությանը: **Հայաստանը պետք է վերանայի իր վերաբերմունքն ու քաղաքականությունը տարբեր բնագավառներում՝** սկսած ներքին ոլորտային կարգավորումներից մինչև արտաքին աշխարհի հետ հարաբերություններ: Նոր իշխանությունը վերանայումներ պետք է անի այլ պետությունների, միջազգային կազմակերպությունների, դեսպանատների, լրատվամիջոցների, տնտեսության ճյուղերի, ոլորտային քաղաքականությունների, պետական համակարգի, ուժային կառույցների, ամբողջ քաղաքական դաշտի ու գործիչների և ընդհանրապես յուրաքանչյուր մարդու հանդեպ մեր մոտեցումներում:

Չեն կարող և չպետք է շարունակեն պաշտոնավարել ներկա իշխանության կողմից նշանակված կամ ընտրված բազմաթիվ պաշտոնյաներ՝ ռեկտորներից մինչև տարբեր խորհուրդների և մարմինների անդամներ, հիմնարկների տնօրեններից մինչև ուժային կառույցների ղեկավարներ: Պետք է չեղարկվեն որոշակի դիրքից բարձր անձանց ստացած պարգևներն ու կոչումները:

Կա՞ն այստեղ վտանգներ: Իհարկե կան: Պատիժները կամ վերանայումները հանգեցնելու են նաև մի շարք կորուստների, սակայն այլընտրանք չկա: Կյանքի գիլյոտինը կարող է նույնիսկ որոշ չափով լինել անարդար կամ չափից ավելի խիստ: Բայց **այս Սոդոմ և Գոմորը ուղղակի պահանջում է ջրհեղեղ:**

Յուրաքանչյուրը պետք է ստանա արժանի պատիժ, որպեսզի հաջորդների համար դա լինի մեծ դաս: Իսկ **եթե հաջորդները այդ դասը չքաղեն, ապա նրանք նույնպես պետք է պատժվեն:** Ի վերջո, բոլոր արդեն հիշատակված երկրներում հեղափոխություններն ընթացել են փուլերով: Մեկ փուլով ինքնամաքրումը հաճախ բավարար չի լինում: Ուրեմն եթե չօգնեց, ապա **քաղաքական, քաղաքացիական և սոցիալական սանիտարիան պետք է պարբերաբար կրկնվի, մինչև հասարակությունը ստեղծի ինքնամաքրման համակարգ:**

Սույն մոտեցումները կարող են դուր չգալ դրսի և ներսի տարբեր ուժերին կամ կեղծ հումանիստներին: Ոմանք կփորձեն հերթական անգամ հայ ժողովրդին դասեր տալ և ապրել սովորեցնել: Դրանց պատասխանելը շատ հեշտ է: Վերջին **ավելի քան մեկ դարում հայ ժողովուրդ այնպիսի «համալսարաններով» է անցել, որ անհրաժեշտության դեպքում պետք է ունակ լիներ ուրիշներին դաս տալու**: Բայց, ցավոք, նույնիսկ մեր սեփական դասերը լավ չենք սերտել, ինչի պատճառով մշտապես հաջողվում է հայ ժողովրդին շեղել ազգային պետություն կառուցելու ճանապարհից: Եվ ուրեմն «կառափնարանը» պետք է գործի, որովհետև **առանց «գիլյոտինի» իսկական հեղափոխություն չի լինում:**

Քաոս Կովկասում. երկրորդ Մերձավոր Արևելք

Հարցազրույց Յերժի Մարեկ Նովակովսկու հետ

Յերժի Մարեկ Նովակովսկի. ծնվել է 1959թ. Լեհաստանի Ռադում քաղաքում: Լեհ հրապարակախոս, լրագրող, դիվանագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: 1991 թվականից եղել է նախագահ Լեխ Վալենսայի խորհրդականը՝ Արևելքի հարցերով: 1997-2001 թթ. եղել է Լեհաստանի Հանրապետության վարչապետի միջազգային հարցերով գլխավոր խորհրդականը: Եղել է «Tygodnik Powszechny» թերթի գլխավոր խմբագիրը: Երկար տարիներ եղել է Լեհաստանի միջազգային հարաբերությունների կենտրոնի փոխնախագահը: 2009-2014թթ. աշխատել է Լատվիայում որպես ԼՀ արտակարգ և լիազոր դեսպան, 2014-2018թթ.՝ ԼՀ արտակարգ և լիազոր դեսպան Հայաստանի Հանրապետությունում:

Ներկայացվող հարցազրույցը վարել է լրագրող Մաճեյ Գրզեշչուկը: Սույն թվականի մարտի սկզբին հարցազրույցը ցուցադրվել է լեհական «TVP» հեռուստաալիքով և տարածվել համացանցով: Յերժի Նովակովսկու բոլոր մտքերը չէ, որ ընդունելի են մեզ համար, այնուամենայնիվ, ներկայացված վերլուծության հետ արժե ծանոթանալ:

Մ.Գ. –Ո՞վ է պատասխանատու ղարաբաղյան վերջին պատերազմում Հայաստանի ջախջախիչ պարտության համար: Ինչ կարծիք ունեք ՀՀ-ում ծավալվող ներքաղաքական խմորումների վերաբերյալ, և դրանք կարո՞ղ են արդյոք անկանխատեսելի ընթացք ունենալ:

Յ.Մ.Ն. – Հարցը շատ բազմաբովանդակ է ու բազմաշերտ: Այն ունի նաև նախապատմություն ու ճանաչողական լայն սպեկտր: Սկսեմ նրանից, որ ՀՀ-ում զինվորականության, ԳՇ-ի կողմից երկրի ղեկավարի հրաժարականի պահանջը (որում առկա են համարյա բոլոր բարձրաստիճան զինվորականների ստորագրությունները) առաջին հայացքից աննախադեպ է թվում: Հարկ է նշել, որ հայ իրականության մեջ նմանատիպ, բայց փոքր-ինչ այլ ձևով ու սցենարով իրադարձություն էլի է տեղի ունեցել: Դա եղել է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարման ժամանակ, երբ նմանատիպ բովանդակությամբ հրաժարականի պահանջ էր դրվել երկրի զինվորական վերնախավի կողմից: Բովանդակային առումով դրանք հար և նման են. Դրվում է ընտրված նախագահի (վարչապետի) հրաժարականի պահանջ երկիրը կառավարելու անկարողության պատճառով: Եթե ավելի առարկայական խոսենք, ապա Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից ԼՂ հարցում զիջումների գնալու, Ադրբեջանի հետ պայմանագիր ստորագրելու պատրաստակամությունը եղել է այդ պահանջի առանցքը: ՀՀ վերանկախացման տարիներին ԼՂ հարցը եղել է թիվ մեկ քաղաքական օրակարգը... Եվ ոչ միայն քաղաքական: Կարելի է ասել, որ մնացյալ բոլոր հարցերը ՀՀ-ում ածանցյալ են այդ հիմնահարցին, սերտաճած ու փոխկապակցված են:

Ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր սպայակույտի (ԳՇ) ամենակայացած պետական ինստիտուտի և բարոյական հեղինակության, հոգևոր առաջնորդի (կաթողիկոս) պահանջը շատ կարևոր է ՀՀ իշխանությունների ապագայի համար: Պետք է ասել, որ այս պահանջին են միացել նաև պետական ինստիտուտներ ու տեղական ինքնակառավարման այլ մարմիններ և նույնիսկ երկրի նախագահը՝ Ա. Սարգսյանը:

Ն.Փաշինյանի ճամբարը, որը 2018 թվականից ղեկավարում է երկիրը, չի կատարել իր անիրական խոստումներից և ոչ մեկը, առավել ևս Ղարաբաղի հարցում: Որքան էլ զարմանալի թվա, բայց Ղարաբաղյան պատերազմում հիմնական մեղավոր ճանաչվող Ն.Փաշինյանը վերոշարադրյալ պայմաններում շարունակում է մնալ երկրի առաջնորդը: Պատերազմում պարտության մեղավորների փնտրտուքը շարունակվում է: Իմ կարծիքով՝ հակամարտող երկու ներքին քաղաքական ճամբարների մեղադրանքները՝ ուղղված միմյանց, որքան էլ զարմանալի թվա, ճիշտ են: ՀՀ պարտության պատճառներից ես կառանձնացնեի հետևյալները.

1. ՀՀ-ն և նրա ժողովուրդը պատերազմին պատրաստ չեն եղել ո՛չ բարոյահոգեբանական, ո՛չ տնտեսական և ո՛չ էլ բանակի ռազմատեխնիկական հագեցվածության ու սպառազինության առումով:

2. Պիտի ասել, որ հայկական կողմը ինքնագոհ թմբիրի մեջ է եղել երկար տարիներ՝ համոզված լինելով, որ իր բանակը տարածաշրջանում ամենամարտունակն է: Ավելին՝ հնարավոր ռազմական լուրջ բախման պարագայում կար մեկ ելք՝ հայկական բանակի հաղթանակը: ՆԱՏՕ-ական

Թուրքիայի կողմից սեփական ռազմատեխնիկական նորագույն միջոցներով ու տեխնոլոգիաներով, ինչպես նաև իր հրահանգիչ մասնագետներով երկար տարիներ պատրաստվող ադրբեջանական բանակը, ցավոք, ոչ մի լուրջ արձագանքի չէր արժանանում հայերի կողմից: Հարկ է նշել նաև իսրայելական ռազմատեխնիկական աջակցության ու լայնամասշտաբ արդյունավետ համագործակցության հանգամանքը:

Այս ամենով հանդերձ՝ մնում եմ այն կարծիքին, որ այսպիսի արդյունավետ, ավարտ, այսպիսի հաղթանակ նաև ադրբեջանական կողմը չէր ակնկալում: Պատերազմն ավարտվեց, կարելի է ասել, սպասվածից ավելի լավ արդյունքներով Ադրբեջանի համար, քան ինքը կարող էր ենթադրել: Ռազմական գործողություններն ավարտվեցին ԼՂՀ-ից մնացած «փշրանքների» վրա ռուս խաղաղապահների հաստատումով:

Իրականում պատերազմը հնարավոր եղավ կանգնեցնել ՌԴ շատ կարծր դիրքորոշման և կտրուկ, գործուն միջոցների ու քայլերի շնորհիվ, ինչը, ըստ իս, արդեն վաղօրոք համաձայնեցված էր. Խաղաղապահների տեսքով ռուսական զինված ուժերի մուտք ու հրադադար՝ համաձայնագրի կողմերի համաձայնությամբ:

ՀՀ-ում Ն. Փաշինյանի դեմ թիվ մեկ մեղադրանքը, ըստ ընդդիմախոսների, նրա ապազգային կեցվածքն է, անհասկանալի քաղաքականությունը արտաքին ու ներքին ասպարեզներում, բանակի ռազմատեխնիկական ոչ բավարար սպառազինումը և այլն: Մեղադրանքները հասնում են այնտեղ, որ Ն.Փաշինյանն իր կադրային ոչ խոհեմ քաղաքականությամբ փաստացի կազմալուծել ու թուլացրել է բանակը: Ես կավելացնեի նաև պատերազմը «բերելու», մոտեցնելու Ն. Փաշինյանի հրահրիչ արտաքին քաղաքականությունը, որն արագ տեմպով հանգեցրեց Ղարաբաղյան հարցի այսօրվա հանգուցալուծմանը: Իր հերթին իշխանությունը Ն.Փաշինյանի գլխավորությամբ ունի իր հակափաստարկները, մասնավորապես՝ բանակի անպատրաստվածությունը գալիս է նախորդ շրջանից: Ինչ-որ առումով երկու կողմերն էլ ճիշտ են:

Իմ ունեցած հարցման տվյալներով՝ ՀՀ-ում բնակչության 48%-ը կողմ է վարչապետի հրաժարականին, 37 %-ը պաշտպանում է Ն.Փաշինյանին:

Շատ կարևոր է հավանաբար նաև այն հանգամանքը, որ, իր վերանկախացման պահից սկսած, հայ հասարակության ու պետության քաղաքականությունը կառուցված էր, ես կասեի, ինքնարժևորման ու ինքնահաստատման այն հիմքի վրա, որը կոչվում է հաղթանակ: Ընդորում, այս հաղթանակի հոգեբանական և աշխարհայացքային արժեքն այն էր, որ «հաղթել են թուրքերին»: Հայաստանում թուրքերը և ադրբեջանցիները նույնացվում են: Իսկ այդ հետքը գալիս է ցեղասպանված լինելու և իր պատմական հայրենիքի կորստյան կնիք ցավի հետ:

Այսպիսով՝ առկա մտածողության մեջ ԼՂ ազատագրումը, ռազմական անուրանալի հաղթանակը ինչ-որ իմաստով «պատասխան» էին ցեղասպանություն կազմակերպած թշնամուն՝ թուրքին Պետք է նշեմ, որ իմ ճանաչած հայերի 90 %-ը, բացի պարզ հայրենասիրությունից, այս հարցում նաև շովինիստական հայրենասիրության կրող է: Եվ հիմա, երբ հայության հպարտությունը, ազգային ինքնագիտակցությունը ձևավորած ու սերունդ ծլեցրած խարիսխը՝ Ղարաբաղը, փաստացի գոյություն չունի... Սա Նման է համազգային իդեաների և ծրագրերի՝ իր մասշտաբներով աննախադեպ կործանման:

Ինչ պետք է անի ՀՀ-ն այս ռազմաքաղաքական, բարոյահոգեբանական մեծագույն աղետից հետո: Այսօր հայերը անձնազոհ պայքարով պահել են Արցախի մի պատառիկը, բայց դասական դրամայի կանոններով ամբողջությամբ կախման մեջ են հայտնվել ՌԴ-ից: Եթե հիմնովին վերլուծենք ՀՀ հակոտնյա ուժերի բախումը, ապա այն կոնֆլիկտ է, աշխարհայացքային իմաստով, հայ պետականության լինելիության շուրջ:

Մ.Գ.–ԼՂ հակամարտությունը չի հանգեցնի արդյոք Մերձդնեստրի, Աբխազիայի կամ Հվ.Օսեթիայի շուրջ ստեղծված իրավիճակի նման մի իրավիճակի, երբ գլխավոր դերակատարը և՛ դրական հերոս է, և՛ դահիճ:

Յ.Մ.Ն.– Հաճախ էր ասվում, որ ԼՂ հակամարտությունը սառեցված է: Իմ պաշտոնավարման տարիներից ի վեր եղել եմ այն համոզմանը, որ այն մշտապես «ծխացող» է՝ ժամանակ առ ժամանակ բոցկլտացող փայլատակումներով: Միայն ռուս խաղաղապահների ժամանումով է, որ հակամարտությունն ստանում է սառեցված տեսք: Ինչպես ԽՍՀՄ նախկին տարածքի այն բոլոր հակամարտությունները, որոնց վրա դրվել էր «հրդեհվելու արգելք», որոնք, սակայն, հրաշալի գործիք են ՌԴ-ի ձեռքում՝ հրշեջի ու հրձիգի դերերում հանդես գալու, շանտաժով ինչ-որ նպատակի հասնելու համար:

Մի քանի օր առաջ ռուսական «Կոմերսանտ»-ում հայտնված քարտեզը պատահականություն չէր: Այնտեղ ԼՂ-ն նշված էր որպես «տարածք», որը վերահսկվում է ռուսական ռազմական (խաղաղապահ) ուժերի կողմից: Սա սկսում է նմանվել առավելապես Մերձդնեստրին, որովհետև Աբխազիայի ու Օսեթիայի պարագայում ռուսական «օգնող ձեռքը» այլ կերպ է ներկայանում: Բոլորովին պատահական չեն նաև լուրերը այն մասին, որ ԼՂ պաշտոնական լեզուն, հայերենից զատ, պետք է լինի նաև ռուսերենը: Այսպիսի «ձնծաղիկների» ի հայտ գալը խոսում է ռուսական ներկայության երկարաժամկետ հաստատման մասին:

Այս հակամարտության մեջ ամենակարևորը, այնուամենայնիվ, ՀՀ դիրքորոշումն է: Իրականում

հայերը, ըստ իս, ունեն երեք ճանապարհ, և ընտրված ճանապարհից է կախված լինելու հայ ժողովրդի, ՀՀ պետականության՝ տարածաշրջանում ուժերի հարաբերակցության գործոն լինելու հանգամանքը:

1.ՀՀ-ն համակերպվում է Արցախի կորստյան հետ և փորձում է հարաբերություններ հաստատել Ադրբեջանի և Թուրքիայի հետ՝ բացելով բոլոր տարանցիկ ճանապարհները, հեռանկարում ունենալով տնտեսական զարգացման հնարավորություն, որը կբերի ՀՀ-ին ապահով երկրի համարում՝ համեմատաբար կայուն տնտեսությամբ ու բարեկեցությամբ: Հայերի համար սա բարեկեցիկ պետություն ստեղծելու ամենակարճ, բայց ոչ ամենահեշտ (ազգային նպատակների առումով) ճանապարհն է: Իմ համոզմամբ՝ այսօրվա Հայաստանը դեռևս պատրաստ չէ այս տարբերակին, և այդ առումով նույնիսկ անորոշ է և հարց, թե երբևիցե պատրաստ կլինի՞ դրան: Նույնիսկ հիմա հայերի ջախջախիչ մեծամասնությունը վստահ է, որ Արցախը պետք է լինի Հայաստանի մաս կամ անկախ, բայց ոչ երբեք Ադրբեջանի կազմում: Պարտությունից մինչ նոր հաղթանակ երկար ճանապարհ է:

2.Այս ճանապարհը, որը ես կանվանեի իսրայելական, մի տարբերակ է, երբ Հայաստանը «սեղմում է ատամները կոճտոցով», իր բոլոր կարողությունները Սփյուռքի ներգրավմամբ և համազգային ամբողջ ներուժն ուղղում է իր տնտեսության՝ արագացված տեմպերով մոդեռնիզացմանն ու այն կազմակերպական նոր հիմքերի վրա դնելուն: Ինքն է որոշում, թե այդ հարցում ինչպես հենվել Ռուսաստանի կամ Արևմուտքի վրա կամ էլ ներդաշնակ հավասարակշռություն պահել երկուսի նկատմամբ: Սրան զուգընթաց համբերատար սպասում է ռևանշի՝ հետ բերելու պատերազմում կորցրածը: Ավելի կարճ և հասկանալի՝ սառը հարաբերություններ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ, աննախադեպ արագ զարգացող տնտեսություն, բանակի, կրթության, տրանսպորտային ուղիների և նորագույն տեխնոլոգիաների զարգացում հիմնարար արմատական ու արդյունավետ քայլերով: Այս սցենարը հայ քաղաքական մտքի շրջանակներում, ըստ իս, այժմ գերակշռող է:

3.Այս տարբերակը հարավսեթականն է: Այս պարագայում Հայաստանը վերածվում է ռուսական կիսագաղութի՝ տնտեսական և քաղաքական առումով ամբողջությամբ կախման մեջ հայտնվելով ՌԴ-ից և նրա կամքից:

Եթե նայենք իրատեսորեն, ապա հայերի ընտրությունը երկրորդ և երրորդ տարբերակների միջև է, չնայած որ կան և հնչում են առաջին ուղին սատարող ձայներ, հատկապես իշխանական ճամբարից: Հստակ է, որ երկրի բանակի վերնախավը, քաղաքական ուժերի մեծամասնությունը միանշանակորեն ցանկանում են երկիրը տանել երկրորդ ուղիով:

Փաշինյանի ճամբարը, իմ համոզմամբ, վախենում է ազգային համընդհանուր ցասման հետևանքներից ու

չի բարձրաձայնում իր տեսլականը, այսինքն՝ առաջին ուղին:

Երկրի հակամարտող գաղափարական-քաղաքական հոսանքների երկարաձգվող պայքարը կարող է հանգեցնել հարավսեթականացման սցենարին, ինչը իրականում երկու կողմերն էլ չեն ցանկանում, բայց ակամա կարող են նպաստել դրան:

Այսօր Թուրքիան, Ռուսաստանը, ես հույս ունեմ՝ նաև Արևմուտքը կարող են առանձին-առանձին, մեծ հաշվով, դրական տեղաշարժերի պատճառ դառնալ հենց Հայաստանում՝ չանտեսելով իրենց նպատակները, բայց միաժամանակ նաև նպաստելով ՀՀ-ի՝ նոր, ժամանակակից պետություն դառնալուն:

Մ.Գ. – Ձեր կարծիքով ինչպիսին են Պուտին-Փաշինյան հարաբերությունները այս ամենի խորապատկերին:

Յ.Մ.Ն. – Ես դեմ եմ քաղաքական վերլուծականներում անհատականացմանը, երբ հարցը վերաբերում է միջպետական հարաբերություններին: Վստահ եմ, որ Պուտինը դույզն-ինչ վստահություն չունի Փաշինյանի նկատմամբ, սակայն համաձայնողական, պարտվողական կեցվածք ունեցող Փաշինյանի՝ Հայաստանի իշխանության ղեկին լինելը երաշխավորում է խաղաղապահ ուժերի թեկուզ ոչ երկարաժամկետ, այնուամենայնիվ առանց միջադեպերի ներկայությունն ու ՌԴ վարկանիշը իր առաքելության մեջ: Այս վիճակը ձեռնտու է երկու երկրներին ու նրանց առաջնորդներին: Փաշինյանի պարագայում կա իշխանությունը պահելու, «շունչ քաշելու» խնդիր, իսկ ռուսական կողմի համար՝ իր առաքելության՝ տարածաշրջանում ռազմական ներկայության արդարացվածության ու հաջող ընթացքի հիմնավորման անհրաժեշտություն: ՀՀ-ում կան ռուսական ռազմական բազաներ, որոնց առկայությունը երկրում Փաշինյանը կասկածի տակ չի առնում՝ չնայած այն բանին, որ իշխանության է եկել՝ օգտագործելով նաև «հավերժական դաշնակցի» դեմ

ամբոխավարական կարգախոսները:

Հարկ է նշել, որ, չնայած այդ ամենին, հայաստանյան ներկա իշխանության լեգիտիմությունը կասկած չի առաջացրել ՀՀ-ի հակառակորդ քաղաքական ճամբարում: Որպես հետևանք՝ ռուսական կողմը ունի շատ պրագմատիկ մոտեցում Փաշինյանի՝ իշխանության գլուխ մնալ-չմնալու հարցում: Ըստ իս՝ սա Պուտինի համար իդեալական, երանելի վիճակ է, երբ ժողովրդական ու ժողովրդավար(արևմտյան բոլոր չափորոշիչներով) Հայաստանի ղեկավարը այնուամենայնիվ ծնկում է իր առջև՝ ստիպված լինելով կախվածության մեջ գտնվել ոչ թե ժամանակին իրեն աջակցած Արևմուտքից, այլ երկիրը տապալումից «փրկած» Ռուսաստանից: Այս համատեքստում հետաքրքիր է ՌԴ վերաբերմունքը Հայաստանի բանակի, սպայակույտի կողմից վարչապետի հրաժարականի պահանջի նկատմամբ: Պիտի նշեմ, որ Հայաստանի բանակը բավական ինքնուրույն միավոր է, չնայած որ դաշնակցային պարտավորություններով ու բազմաթիվ թելերով կապված է եղել և է ՌԴ-ի հետ: Ըստ իս՝ գեներալների մի ստվար հատված հասկանում է, որ ինչ-որ իմաստով դավաճանվել է ՌԴ-ի կողմից, սակայն դրա հիմնական պատճառը համարում է ՀՀ քաղաքական ղեկավարության արտաքին և ներքին անհասկանալի, ոչ միանշանակ քաղաքականությունը: Իմ համոզմամբ՝ նրանք ձգտելու են ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ ձևավորելու նոր՝ «զտարյուն» հայկական քաղաքական միտք և ուղի, որը ապագայում տեսանելի կդարձնի Ադրբեջանի նկատմամբ ռևանշի հնարավորությունը: Սա ՌԴ-ի համար մեծ գլխացավանք է, որովհետև, պաշտոնապես լինելով Հայաստանի դաշնակիցը, կարող է դեմ լինել ՀՀ-ում ռազմաքաղաքական առումով գերակշռող ուժերին, և, որ ամենակարևորն է, այդ ուժերը կարող են իրենց հետևից ՌԴ-ին տանել հակամարտության Ադրբեջանի և Թուրքիայի դեմ:

Սա ամենևին ՌԴ պլաններում չի տեղավորվում, որովհետև այժմ նա, Հայաստանն ունենալով որպես դաշնակից, չի ցանկանում նաև Ադրբեջանը տեսնել որպես Թուրքիայի վիլայեթ: Այս կամ այն կերպ Արցախում իր ներկայությամբ ՌԴ-ն ունի լծակներ, ինչպես նաև տնտեսական կապեր Ադրբեջանի հետ, որի հետ ունի նաև անմիջական սահման անհանգիստ հյուսիսկովկասյան խառնարանում: Ադրբեջանին իշխելու համար ՌԴ-ին Թուրքիան բացարձակապես պետք չէ: Այս ժամանակահատվածում՝ ռազմաքաղաքականից մինչև տնտեսական համագործակցություն, ատոմակայանի կառուցում, ՌԴ-ին Թուրքիան անհրաժեշտ է Արևմուտք-ՆԱՏՕ դաշինքում ճաք առաջացնելու և Արևմուտք-Թուրքիա հարաբերություններում նկատելի անջրպետը խորացնելու նպատակով՝ այդպիսով նվազագույնի հասցնելով Թուրքիայի՝ Արևմուտքի դաշնակիցը լինելու կարևորությունը: Թուրքիայի՝ ոչ վստահելի դաշնակից լինելը ՆԱՏՕ-ում ունի բավական թանկ գին, որը, սակայն, ռուսական քաղաքական ու պետական միտքը միշտ պատրաստ է եղել վճարելու, քանզի ՌԴ-ում տիրապետող է այն միտքը, որ ՌԴ գլխավոր հակառակորդը և մրցակիցը ՆԱՏՕ-ն է և ԱՄՆ-ն: Թուրքիայի մուտքը Ադրբեջան անուղղակիորեն թուլացնում է արևմտյան դաշինքը իր համար բավական շահեկան տարբերակով: Հենց այս դեպքերի ընթացքն է, որ ինձ համոզում է այն բանում, որ ՌԴ-ն միտումնավոր Կովկասը վերածում է «Մերձավոր Արևելքի»՝ դրան բնորոշ անլուծելի խնդիրների թնջուկով: Այս համատեքստում Վրաստանի այսօրվա դեստաբիլիզացիան վերոնշյալ հարցերում ունի իր չափաբաժինը: Կառավարությունների հերթական հրաժարականները, քաղաքական ճգնաժամերը Հարավային Կովկասում կարող են դառնալ ՌԴ հաղթաթղթերից՝ շատ դեպքերում իր ռազմական ներկայությունը անհրաժեշտ ու պարտադիր դարձնելու նպատակով: Այս մեծ խաղի նշանակությունը շատ ավելի մեծ է, քան ինքնին ԼՂ կամ ՀՀ խնդրինը: Սա ի վերջո հաղթաթղթերով աշխարհաքաղաքական թղթախաղի մասնակցելու ՌԴ նախապատրաստությունն է:

Մերձավոր Արևելքում Արևմուտքը տասնամյակներ շարունակ ոչ մի կերպ չի կարողանում որևէ հարց լուծել առանց ՌԴ մասնակցության ու ներկայության, այլապես այն կարող է վերածվել համատարած քաոսի:Այս իմաստով Հարավային Կովկասը մի նոր Մերձավոր Արևելք է, որտեղ ներգրավված են բոլորը, որտեղ դարձյալ ջոկերի ու հարց լուծելու հավակնություն ունեն թե՛ Արևմուտքը, թե՛ ՌԴ-ն:

Իմ համոզմամբ՝ այս օրակարգի առանցքային խնդիրներից մեկը, եթե ոչ առաջնայինը՝ ԼՂ հակամարտությունը, այժմ կմնա առանց հանգուցալուծման, մինչև աշխարհաքաղաքական հիմնական դերակատարները ուժերի նոր հարաբերակցություն կձևավորեն: ■

Թարգմանությունը՝ Թաթուլ Հարությունյանի

Հետպատերազմական Ադրբեջանը թուրք-ռուսական մրցակցության ծիրում

Արտյոմ Տոնոյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Արցախյան երրորդ պատերազմից (2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10) հետո այսրկովկասյան տարածաշրջանում ստեղծվել է ուժերի նոր դասավորություն, որը վերաբերում է ոչ միայն հակամարտության բուն մասնակիցներին (Արցախի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն և Ադրբեջանի Հանրապետություն), այլ նաև տարածաշրջանում ակտիվ դերակատարություն ունեցող և մի քանի հակամարտություններում (Սիրիա, Լիբիա, Արցախ) միաժամանակ մրցակցող և համագործակցող երկու պետությունների՝ Թուրքիայի Հանրապետությանը և Ռուսաստանի Դաշնությանը: Հակամարտության հերթական ակտիվ ռազմական փուլի ավարտից հետո Թուրքիայի և Ռուսաստանի ձեռքբերումները, առնվազն այս պահի դրությամբ, մոտավորապես հետևյալներն են:

Թուրքիայի Հանրապետություն.

1. Ազդեցության աննախադեպ մեծացում ԱՀ հասարակական-քաղաքական կյանքում՝ շնորհիվ Արցախյան երրորդ պատերազմում ունեցած բացահայտ կողմնակալ և Ադրբեջանին սատարող դիրքորոշման:

2. Թեև դեռևս թույլ, բայց և այնպես ռազմական ներկայության ապահովում հակամարտության գոտում՝ ի դեմս հունվարի 30-ին Աղդամի շրջանում բացված Ռուս-թուրքական մոնիթորինգային կենտրոնի, որտեղ 60 ռուս զինծառայողների հետ ծառայություն են իրականացնում 60 թուրք զինվորականներ: Բացի այդ՝ ըստ ադրբեջանցի ռազմական փորձագետների վերջին վերլուծությունների և հայտնած որոշ տեղեկությունների՝ ադրբեջանական բանակում իրականացվում են կառուցվածքային լուրջ փոփոխություններ, և տեղի է ունենում անցում թուրքական մոդելի: Սա իր հերթին խոսում է Ադրբեջանի բանակի ներսում ևս թուրքական ներկայության և ազդեցության աճի մասին:

3. Ադրբեջանի հետ Նախիջևանի տարածքով ցամաքային ուղիղ կապի ստեղծման հնարավորություն, եթե ստացվի կյանքի կոչել «Զանգեզուրի միջանցք» կոչվող ծրագիրը: Թեև 2020 թ. նոյեմբերի 10-ի եռակողմ (Հայաստան-Ադրբեջան-Ռուսաստան) համաձայնագրի տեքստում բացակայում է «միջանցք» բառը, սակայն Ադրբեջանի տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ (ԱԳՆ ևն), ինչպես նաև հենց նախագահ Իլհամ Ալիևը քանիցս արել են սադրիչ հայտարարություններ՝ գործածելով «Զանգեզուրի միջանցք» արտահայտությունը և պատմական ադրբեջանական տարածք անվանելով ՀՀ Սյունիքի մարզը:

4. ՀՀ-ի հետ սահմանները բացելու, հետագայում ի հաշիվ թուրքական կապիտալի ՀՀ-ն տնտեսապես յուրացնելու, ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու և այդ թեման միջազգային օրակարգից մեկընդմիշտ հանելու հնարավորության ձեռքբերում: Այս առումով հատկանշական է, որ պատերազմի ավարտից հետո՝ այս տարվա փետրվարի 26-ին, ԱՀ նախագահ Իլհամ Ալիևը արտասահմանյան լրատվամիջոցներին տված հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ Թուրքիայի կողմից ՀՀ-ի հետ սահմանները բացելու դեպքում Ադրբեջանի կողմից բացասական կարծիք չի լինի. «Հաշվի առնելով նոր իրավիճակը՝ մենք դրականորեն ենք վերաբերվում Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորմանը: Ես հիմա հատուկ դիրքորոշում չունեմ այդ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Թուրքիան ինքնուրույն կորոշի, թե երբ կարող են բացվել սահմանները, և երբ կկարգավորվեն Հայաստանի հետ հարաբերությունները: Համենայնդեպս, Ադրբեջանի կողմից բացասական կարծիք չի լինի»: Եվ սա այն դեպքում, երբ մինչև Արցախյան երկրորդ պատերազմը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փորձերը կոշտ արձագանքների են հանդիպել պաշտոնական Բաքվում:

5. Պատերազմի ժամանակ Ադրբեջանին ցուցաբերած «քաղաքական և բարոյական օժանդակության» (Թուրքիայի մասնակցությունը Արցախյան երկրորդ պատերազմին հենց այս արտահայտությամբ է բնորոշում նախագահ Իլհամ Ալիևը, իսկ վերջինիս ասածները կրկնում

են քաղաքական վերնախավի բոլոր անդամները) դիմաց ֆինանսական փոխհատուցում՝ Թուրքիայում արտադրվող նոր զինատեսակների ձեռքբերման, շինարարության, կառուցապատման և նոր ճանապարհների կառուցման ոլորտում թուրքական ընկերություններին ավելի ակտիվորեն ներգրավելու տեսքով:

Ռուսաստանի Դաշնություն.

1. Ուժեղ ռազմական ներկայության ապահովում հակամարտության գոտում՝ ի դեմս խաղաղապահ առաքելության:
2. Ադրբեջանում գործող իշխանության վրա ավելի մեծ ազդեցության ձեռքբերում, եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ Ադրբեջանի քաղաքական վերնախավը փաստացի ճանաչում է ՌԴ ռազմական ներկայությունը «իր տարածքում»՝ հայտարարելով Արցախյան հակամարտության էջը փակված և Ադրբեջանական Հանրապետության մաս անվանելով անգամ պատերազմից հետո իր վերահսկողության տակ չանցած արցախյան տարածքները:
3. Հետպատերազմական շրջանում առաջ եկած անվտանգային նոր խնդիրների պատճառով ՀՀ-ում գտնվող սեփական ռազմաբազայի տեղակայման աշխարհագրության ընդլայնում՝ ի հաշիվ ՀՀ ողջ տարածքի և հատկապես հարավային շրջանների:
4. Արցախյան հակամարտության կարգավորման բազմաբևեռ (հանձին ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ դրանում համանախագահության մակարդակով Ֆրանսիայի և ԱՄՆ-ի մասնակցության) ձևաչափի միաբևեռացում, գործընթացից ԱՄՆ-ի և Ֆրանսիայի դուրսմղում և դրա հանդեպ վերահսկողության՝ ՌԴ մենաշնորհի վերածում:
5. Ի հաշիվ ՀՀ տարածքի՝ Վրաստանի տարածքի տարանցիկության մակարդակի իջեցման և հեռանկարում այն ՌԴ ազդեցության գոտի փոխադրելու հնարավորությունների ձեռքբերում:

Թուրքիայի և ՌԴ ուժերի այսպիսի

վերադասավորումը Այսրկովկասում և Արցախյան երկրորդ պատերազմից ունեցած ձեռքբերումներն այդտեղ, լինեն դրանք «մրցակցության» «համագործակցության», թե «մրցակցային համագործակցության» (adversarial collaboration) արդյունք, ինչպես համարում են տեղի և արևմտյան մի շարք մասնագետներ, նոր մարտահրավերներ են ստեղծում այսրկովկասյան բոլոր երեք հանրապետությունների, այդ թվում և՝ Ադրբեջանի համար: Թվում է՝ առաջին խնդիրը, որին բախվում են Ադրբեջանի իշխանությունները, իրենց տարածքի համար ՌԴ-ի հետ բավական ագրեսիվ մրցակցության մեջ մտած Թուրքիայի ազդեցությունը հավասարակշռելու, այդ ճանապարհին սեփական իշխանությունը չկորցնելու, ինչպես նաև տասնամյակներով հայտարարվող դիվերսիֆիկացված, բազմավեկտոր, փոխլրացնող արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունը պահպանելու հրամայականն է: Հետպատերազմական շրջանում ստեղծված իրավիճակում եթե ՌԴ հիմնական հենասյունը Ադրբեջանի գործող իշխանությունն է՝ իր կլանային հենքով և բոնապետական բնույթով, իսկ ազդեցության գործադրման և ՌԴ շահերի առաջմղման հիմնական գործիքը՝ իշխանության տարբեր թևերի և կենտրոնի տնտեսական կապն ու բիզնես շահերը ՌԴ տարածքի հետ, ապա Թուրքիայի դեպքում մասամբ կա և վերջին հանգամանքը, այսինքն՝ իշխանության ներկայացուցիչների բիզնես շահերի և կապիտալի կապը Թուրքիայի տարածքի հետ, բայց կան և, որ ավելի կարևոր են, վերջին պատերազմի շնորհիվ ադրբեջանական հասարակության շրջանում Թուրքիայի հանդեպ վերաբերմունքի շեշտակի փոփոխությունը և այդ պետության ազդեցության աննախադեպ աճը: Ադրբեջանական հասարակության մեծամասնության շրջանում որպես ոչ բարեկամ կամ թշնամի ընկալվող ՌԴ-ի նկատմամբ Թուրքիայի ձեռք բերած ահա այս կարևոր առավելությունը խնդրահարույց է դառնում Ադրբեջանի գործող իշխանությունների համար: Ոչ իշխանական ուժերն ու քաղաքական ճամբարները (թե՛ Ադրբեջանի ներսում, թե՛ դրանից

դուրս գործող), ազատ լինելով ուղիղ քաղաքական պատասխանատվությունից, կարողանում են շատ ազատ համագործակցել Թուրքիայի հետ և հասարակության շրջանում Թուրքիայի հանդեպ առկա համակրանքն ու ՌԴ-ի նկատմամբ հակակրանքը վերածել գործող իշխանությունների դեմ քարոզչական գործիքի՝ վերջինիս արհեստականորեն ներկայացնելով որպես ՌԴ շահերն սպասարկող, «եղբայրական» Թուրքիայի շահերն անտեսող, իսկ իրենց դիրքավորելով հակառակ բարիկադում:

Նշված կենտրոններից ադրբեջանական իշխանություններին տրվող անհարմար, վարկաբեկող և վերջինիս վարկանիշի վրա ազդող հարցերը, որոնք ուղիղ կապ ունեն Թուրքիա-Ադրբեջան մրցակցության հետ, մոտավորապես հետևյալներն են.

1. Ի՞նչ է ստացել Թուրքիան վերջին պատերազմում Ադրբեջանին ցուցաբերած աջակցության դիմաց: Ինչո՞ւ բանակցություններում (օրինակ՝ հունվարին Մոսկվայում տեղի ունեցած) Թուրքիան ներգրավված չէր: Ինչո՞ւ են իշխանությունները բանակցում առանց Թուրքիայի:

2. Ինչո՞ւ Ադրբեջանը չի գնում Թուրքիայի հետ ավելի համապարփակ ռազմական համագործակցության, որը կենթադրի գործող պայմանագրերի վերանայում և Ադրբեջանի տարածքում թուրքական ռազմաբազաների տեղակայում:

3. Ինչո՞ւ Ադրբեջանի իշխանությունները ավարտին չեն հասցրել պատերազմը և ինչո՞ւ են համաձայնել ՌԴ ռազմական ներկայության հաստատմանը «Ադրբեջանի տարածքում» (ակնարկվում է ՌԴ խաղաղապահ զորքերի տեղակայումը Արցախի տարածքում):

4. Ե՞րբ են դուրս բերվելու ռուս խաղաղապահները նշված տարածքներից, և ինչո՞ւ «ՌԴ-ն չի կատարում եռակողմ համաձայնագրով իր ստանձնած պարտավորությունները»:

Դատելով հակամարտության թեմայով ԱՀ հասարակական խոսույթի ընդհանուր բովանդակությունից և նկատվող միտումներից, իշխանության ներկայացուցիչների կողմից արվող և մերձիշխանական շրջանակներից հնչող հայտարարություններից՝ արտաքին ուժերի և դրանց ներքին սպասարկողների միջոցով փորձ է արվում Ադրբեջանում հնարավորինս վարկաբեկելու գործող իշխանություններին, թույլ չտալու «պատերազմում հաղթած իշխանության և նախագահի» կարծրատիպի բյուրեղացում, ներկայացնելու վերջիններիս որպես հանուն սեփական բիզնես շահերի ՌԴ-ին զիջումների գնացած, պատերազմն անավարտ թողած, «Ադրբեջանի տարածքում» ՌԴ զորքերի տեղակայում թույլ տված, պետության ինքնիշխանությունը թուլացրած և այն ամբողջությամբ կասկածի տակ դրած իշխանություն:

Այս ամենի հետևանքում թերևս հենց Թուրքիա-Ռուսաստան մրցակցությունն է, ավելի ճիշտ՝ Թուրքիայի կողմից սեփական առավելությունն իրացնելու և ՌԴ դիրքերն Ադրբեջանում ավելի թուլացնելու փորձ, որի խուլ արձագանքները միայն լսելի են դառնում ԱՀ ոչ իշխանական ճամբարների գործունեության վերլուծությամբ և այն իրողության ընկալմամբ, որ այդ ուժերի և Թուրքիայի շահերը հիմնավորապես համընկնում են. առաջինների դեպքում կա, հանձինս Իլհամ Ալիևի և նրա թիմի, մրցակցին վարկաբեկելու, թուլացնելու և քաղաքական իշխանության հասնելու նպատակ, երկրորդի դեպքում՝ առաջինների միջոցով ՌԴ դիրքերը հնարավորինս սասանելու, նրան հանրային հենարանից բացարձակապես զրկելու և հնարավորության դեպքում նաև առաջինների միջոցով Ադրբեջանում վերջնական վերահսկողություն սահմանելու առավելագույն նպատակ, իսկ որպես նվազագույն ծրագիր՝ ցանկացած պահի ԱՀ գործող իշխանություններից տարատեսակ զիջումներ կորզելու հնարավորությունների ընդլայնում:

Սիրիական հակամարտության 10 տարին. արյունաքամ երկիր, կարգավորման մշուշոտ հեռանկար

Արմեն Պետրոսյան
Արևելագետ, տարածաշրջանային հարցերով փորձագետ

2010 թ. դեկտեմբերից արաբական մի շարք երկրներ ընդգրկած «արաբական գարուն» անվանումն ստացած ներքաղաքական վերափոխումների շղթան 2011 թ. մարտի 15-ից հասավ նաև Սիրիա: Հորդանանին սահմանակից Սիրիայի հարավային Դարաա նահանգի համանուն կենտրոնում մի խումբ դեռահասների գրառումները՝ «Ազատություն, հեռացի՛ր վարչակարգ, քո հերթն է, բժի՛շկ» բովանդակությամբ, հակակառավարական ցույցերն ու դրանց սիրիական իշխանությունների կոշտ ուժային արձագանքն սկիզբ դրեցին 21-րդ դարի ամենաերկարատև և ամենաարյունալի հակամարտությանը: Հիմնախնդիր, որն առկա է արդեն 10 տարի՝ բողոքի տարաբնույթ գործողություններից, ներքին զինված հակամարտությունից (քաղաքացիական պատերազմ) վերաճելով միջազգային ու մարդասիրական լրջագույն ճգնաժամի: Դրա շրջանակներում մեկ անգամ չէ, որ պայթյունավտանգ իրավիճակ է ստեղծվել ամբողջ աշխարհում, իրար դեմ են դուրս եկել համաշխարհային և տարածաշրջանային մրցակից տերություններ, որոնք այս հակամարտության շրջանակներում դիրքավորվել են հակառակ ճամբարներում:

Սիրիական հիմնախնդիրը շարունակում է մնալ մերօրյա աշխարհի ամենախրթին հումանիտար ճգնաժամը: Տարբեր տվյալներով՝ հակամարտության հետևանքով զոհերի թիվը 388–594 հազար է, երկրի բնակչության կեսը՝ շուրջ 12 մլն մարդ, հարկադրաբար լքել է սեփական օրրանը, որից 6,6 միլիոնը, արտագաղթելով երկրից, փախստականի կարգավիճակով ապաստանել է ոչ միայն Սիրիային հարևան, այլև աշխարհի բազմաթիվ այլ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Սիրիայում մնացած բնակչության ավելի քան 90 %-ի կենսամակարդակը մոտ է աղքատության շեմին:

- **Ճգնաժամի ընթացքի համառոտ բնութագիր**

Սիրիական ճգնաժամի տասնամյա ընթացքը կարելի է պայմանականորեն բաժանել առավել ընդհանրացված 4 շրջափուլերի՝

1. 2011 թ. մարտ-2011 թ. նոյեմբեր-դեկտեմբեր՝ ներսիրիական հասարակական հուզումների, բողոքի տարաբնույթ գործողությունների շրջափուլ՝ արտաքին սահմանափակ միջամտությամբ (ֆինանսական, գաղափարական, տեղեկատվական, հոգեբանական՝ հիմնականում տարածաշրջանային և արևմտյան որոշ երկրների կողմից),
2. 2012 թ. հունվար-2014 թ հուլիս՝ հիմնականում արտատարածաշրջանային և մերձավորարևելյան մի շարք դերակատարների գործուն միջամտությամբ (ֆինանսական, մարդկային (զինյալներ), սպառազինություն, լոգիստիկ, քաղաքական, նաև

միջազգային) պայմանավորված՝ ներքաղաքական ճգնաժամի՝ քաղաքացիական պատերազմի վերափոխման շրջափուլ՝ նաև միջազգայնորեն ճանաչված ահաբեկչական խմբավորումների ակտիվ ներգրավմամբ,
3. 2014 թ. օգոստոս-2017 թ. հունվար՝ ահաբեկչական սպառնալիքի աճի և միջազգային հակաահաբեկչական պայքարի քողի ներքո արտաքին դերակատարների ռազմական անմիջական ներգրավման ու Սիրիայի տարբեր հատվածներում ներկայության հաստատման, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական շահերի ակտիվ բախման ժամանակահատված,
4. 2017 թ. հունվարից ցայժմ՝ հակաահաբեկչական պայքարի բուռն շրջանի ավարտի, Սիրիայի հատվածայնացման կամ ազդեցության գոտիների բաժանման, ինչպես նաև հակամարտության հարաբերական կառավարելիության շրջափուլ:

Առաջին 3 շրջափուլերի ընթացքում արձանագրվել են հիմնական հակամարտ դերակատարների միջև պարբերական դիրքային փոփոխություններ, հակամարտության՝ տարբեր աստիճանի թեժացումներ, միջազգային լարվածության աճի տարաբնույթ դրսևորումներ, միջազգային բնույթի հանցագործություններ՝ քիմիական զենքի կիրառման օրինակներ, դաժան և զանգվածային ահաբեկչական գործողություններ և այլն: ***Արդեն երկրորդ-երրորդ շրջափուլերի ընթացքում ուրվագծվեցին Սիրիայի հատվածայնացման առաջին միտումները: Դրանց համար որպես բնական սահմանագիծ էր ծառայում Եփրատ գետը, որից արևելք՝ ԱՄՆ-ի, նրա գլխավորած կոալիցիայի, իսկ ցամաքում նրանց դաշնակից քրդական ուժերի կողմից վերահսկվող և «Իսլամական պետություն» (ԻՊ) ահաբեկչական խմբավորման դեմ ծավալվող ռազմագործողությունների գոտին էր:***

Եփրատ գետից արևմուտք ընկած հատվածում առկա էր դերակատարների շատ ավելի խայտաբղետ կազմ՝ մի կողմից՝ Ռուսաստանի, Իրանի, սիրիական կառավարության, նրա մյուս դաշնակիցների,

մասամբ նաև քրդական ուժերի, մյուս կողմից՝ Թուրքիայի, տարաբնույթ հակակառավարական, նաև ահաբեկչական խմբավորումների ակտիվ ներգրավմամբ:

Անշուշտ, ազդեցության և ռազմագործողությունների գոտիների նման բաժանումը կոնսպանտ չէր, և ոչ հաճախակի պարբերականությամբ արձանագրվել են նաև արտաքին տարբեր դերակատարների կողմից հատկապես օդային գործողություններով պայմանավորված «սահմանանցման» միջադեպեր:

- **Զարգացումները Եփրատ գետից արևմուտք ընկած հատվածում**

Սիրիական ճգնաժամի վերջին շրջափուլի պայմանական մեկնարկը կարելի է համարել 2017 թ. հունվարը, երբ Ղազախստանի դեռևս չանվանափոխված մայրաքաղաք Աստանայում ՄԱԿ-ի հետ համագործակցությամբ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի ուղղակի, ԱՄՆ-ի՝ դիտորդի կարգավիճակով մասնակցությամբ գործարկվեց «Աստանայի ձևաչափը»: Դրա շրջանակներում արդեն նույն տարվա մայիսին անմիջական մասնակից կողմերի միջև պայմանավորվածություններ ձեռք բերվեցին Եփրատ գետից արևմուտք ընկած լարվածությունից զերծ 4 գոտիների ձևավորման շուրջ: *Նշված գործընթացը հանգեցրեց հատկապես Եփրատից արևմուտք ընկած հատվածում իրավիճակի աստիճանական կայունացման և այդտեղ ներգրավված արտաքին դերակատարների միջև ազդեցության գոտիների հստակ բաժանման:*

Ձևավորված դեէսկալացիոն գոտիներն են.

1. Հյուսիսային գոտին, որը ներառում է հյուսիսարևմտյան Իդլիբ նահանգը, Լաթաքիա նահանգի հյուսիսարևելյան, Համա նահանգի հյուսիսային, Հալեպ նահանգի արևմտյան շրջանները: Այս գոտու հիմնական երաշխավորներն էին Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը:
2. Կենտրոնական Հոմս նահանգի հյուսիսային հատվածը, որի երաշխավորները Ռուսաստանը և սիրիական ընդդիմությունն էին:
3. Դամասկոսի Արևելյան Ղուտա շրջանը, որի երաշխավորները դարձյալ վերոնշյալ 3 երկրներն էին:
4. Հարավային և Հարավարևմտյան Դարաա և Կունայտրա նահանգները՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Հորդանանի երաշխավորությամբ:

Անցյալ 4 տարիների ընթացքում, հակաահաբեկչական պայքարին զուգահեռ, լարվածությունից զերծ վերոնշյալ գոտիների մեծ մասը (բացառությամբ Իդլիբ նահանգի) անցել է սիրիական կառավարական ուժերի ամբողջական վերահսկողության տակ՝ ռազմական-բանակցային փոխկապակցված մարտավարության հետևանքով՝ հետևյալ տրամաբանությամբ.

- Վարչակարգի ուժերը և նրանց դաշնակիցները թիրախավորված շրջանն առանց դիմադրության հանձնելու վերջնագիր էին ներկայացնում գոտիներում գործող հակակառավարական խմբավորումներին:



Դե-էսկալացիոն գոտիները

Մերժում ստանալու դեպքում նախաձեռնվում էր կառավարական ՋՈՒ-ի և ՌԴ օդատիեզերական ուժերի համատեղ հուժկու ռազմագործողությունը, որից հետո Թուրքիայի միջնորդությամբ կազմակերպված բանակցությունների հետևանքով ընդդիմադիրները հանձնվում կամ առավելապես լքում էին բնակավայրերը՝ ամրանալով Իդլիբ նահանգում:

- Վերոնշյալի համատեքստում մինչև 2018 թ. երկրորդ կեսը սիրիական կառավարությանը հաջողվեց հիմնականում վերադարձնել բոլոր դեէսկալացիոն գոտիները՝ բացառությամբ Իդլիբ նահանգի, որը վերածվել է ընդդիմադիր և ահաբեկչական տարաբնույթ խմբավորումների վերջնական հանգրվանի:

- 2018 թ. սեպտեմբերի 17-ին Սոչիում կայացած Պուտին-Էրդողան երկկողմ հանդիպման հետևանքով ստորագրված հուշագրով կանգնեցվեց կառավարական ուժերի առաջխաղացումն Իդլիբի ուղղությամբ: Այս փաստաթուղթը լրացվեց նաև 2020 թ. մարտի 5-ին Մոսկվայում տեղի ունեցած ռուս-թուրքական բարձր մակարդակի բավականին բարդ բանակցությունների հետևանքով ստորագրված արձանագրությամբ: Փաստաթուղթը կոչված էր վերջ դնելու 2019 թ. վերջից շրջանում կրկին սրված ռազմական իրադրությանը, որը գագաթնակետին էր հասել 2020 թ. փետրվարի 27-ից մարտի 6-ն Իդլիբ նահանգում Թուրքիայի նախաձեռնած «Գարնանային վահան» կոդային անվանումով ցայժմ վերջին, ընդհանուր չորրորդ ռազմագործողության հետևանքով: Վերջին պայմանավորվածությունների համաձայն Սիրիայում հաստատված հրադադարի հարաբերականորեն կայուն ռեժիմը փաստացի պահպանվում է նաև ներկայումս՝ ձգելով խաղաղ ճանապարհով Իդլիբի հիմնախնդրի կարգավորումը:

«Աստանայի ձևաչափի» գործողության աշխարհագրական արեալից դուրս են մնացել Եփրատից արևմուտք ընկած հատվածի հյուսիսային և արևելյան որոշ շրջաններ, *մասնավորապես Հալեպ նահանգի հյուսիս-արևմուտքում՝ քրդական Աֆրինի շրջանը, սիրիա-թուրքական սահմանին՝ Ազազ-Ջարաբլուս գոտին, որոնք գտնվում են Թուրքիայի և*

նրա հովանավորյալ տարաբնույթ խմբավորումների (դրանք պայմանականորեն միավորված են «Սիրիական ազգային բանակ» կոչվող ընդդիմադիր խմբավորման կազմում) ազդեցության ներքո, ինչպես նաև նույն նահանգի հյուսիս-արևելքում՝ քրդաբնակ Քոբանի կանտոնը, Մանբիջ բնակավայրը:

- **Զարգացումները Եփրատ գետից արևելք ընկած հատվածում**

Վերոնշյալ և Եփրատ գետից արևելք ընկած քրդական շրջանների վերահսկողությունը դեռևս հակամարտության առաջին-երկրորդ շրջափուլերում սիրիական կառավարության և քրդական կառույցների միջև ձեռք բերված համաձայնությամբ անցել էր քրդական «Ժողովրդական ինքնապաշտպանական ջոկատներին»: Դրանց հիման վրա էլ ավելի ուշ ԱՄՆ-ի աջակցությամբ ձևավորվեց «Սիրիական դեմոկրատական ուժեր» (ՍԴՈՒ-SDF) անվանումը ստացած՝ քրդերից, արաբական ցեղերից, քրիստոնյաներից կազմված կառույցը: Ժամանակի ընթացքում այդ կառույցի կառավարման ներքո գտնվող գոտին ընդլայնվեց՝ ընդգրկելով նաև *Եփրատ գետից արևելք ընկած էներգառեսուրսներով հարուստ* Ալ-Ռակկա, Ալ-Հասաքա, մասամբ նաև Դեյր-Զոր նահանգները: Ըստ էության, 2017-18 թթ. Սիրիայի վերոնշյալ շրջաններում ևս ավարտվել էր հակաահաբեկչական պայքարի ակտիվ փուլը: Այս հատվածում հետագա զարգացումներում առանցքային եղան ԱՄՆ-Թուրքիա հակասությունները, որոնք զգալիորեն վատթարացրին նաև Վաշինգտոն-Անկարա հարաբերությունները:

ԱՄՆ նախկին նախագահ Դ. Թրամփի՝ 2019 թ. ընթացքում Սիրիայում ամերիկյան զորակազմի թվաքանակի էականորեն և աստիճանական նվազեցման վերաբերյալ որոշումից հետո՝ նույն թվականի հոկտեմբերի 9-ին, Թուրքիայի ՋՈՒ-ն, հովանավորյալ ընդդիմադիր «Սիրիական ազգային բանակի» ներգրավմամբ, Սիրիայի հյուսիս-արևելքում քրդական ինքնավար կազմավորման դեմ սանձազերծեց թվով երրորդ՝ «Խաղաղության ակունք» ռազմագործողությունը, որով փաստացի «անվտանգության գոտու» քողի ներքո սեփական ռազմական ներկայությունն ապահովեց նաև Եփրատ գետից արևելք ընկած հատվածում: Այդ գործողությունը կարելի է դիտարկել նաև որպես շարունակություն նախ Հալեպի հյուսիսում՝ Ազազ-Ջարաբլուս հատվածում, քրդաբնակ և քրդական ուժերի կողմից վերահսկվող շրջանների դեմ 2016 թ. օգոստոսից 2017 թ. մարտ ամիսներին իրականացված «Եփրատի վահան», ապա նաև 2018 թ. հունվար-մարտ ամիսներին Աֆրինի շրջանում նախաձեռնված «Ձիթենու ճյուղ» ռազմագործողությունների, որոնց նպատակն էր դեռևս 2014 թ. Սիրիայի քրդերի կողմից երկրի հյուսիսում՝ Թուրքիային սահմանակից շրջաններում, հռչակված 3 ինքնավար կանտոնների (շրջան)՝ Աֆրինի, Քոբանիի և Ալ-Ջազիրայի միջև ուղիղ ցամաքային կապի խափանումը:

Հոկտեմբերի 17-ին Անկարայում ամերիկա-թուրքական, ապա հոկտեմբերի 22-ին Սոչիում ռուս-թուրքական համաձայնություններից հետո դադարեցված «Խաղաղության ակունք» ռազմագործողության հետևանքով Թալ Աբյադ-Ռաս ալ-Այն հատվածում Թուրքիան ստացավ ինքնուրույն վերահսկողությամբ 120 կմ երկայնքով և 32 կմ խորությամբ անվտանգության գոտի, իսկ դրանից արևմուտք և արևելք ընկած շրջաններում անվտանգության գոտու խորությունը կազմելու էր միայն 10 կմ՝ Մոսկվայի և Անկարայի համատեղ վերահսկողությամբ:

Վերոնշյալ զարգացումներից հետո Եփրատ գետից արևելք ընկած հատվածում ևս սիրիական կառավարական ուժերն էականորեն բարելավեցին իրենց դիրքերը քրդական կազմավորումների հաշվին:

Ներկայումս ներսիրիական դերակատարների միջև դիրքային հարաբերակցությունը հետևյալ տեսքն ունի. սիրիական կառավարական ուժերը վերահսկում են երկրի տարածքի շուրջ 63,57 %-ը, «Սիրիական ժողովրդավարական ուժերը» (քրդեր)՝ 25,57 %-ը, տարաբնույթ ընդդիմադիր խմբավորումները և Թուրքիան՝ 9,72 %-ը, ԻՊ-ը՝ 1,14 %-ը:

- **Սիրիական ճգնաժամում ներգրավված արտաքին դերակատարները, նրանց շահերն ու ազդեցության գոտիները**

Սիրիական ճգնաժամը ներքին զինված հակամարտության և աշխարհաքաղաքական դիմակայության կարգավիճակի հասավ հիմնախնդրի սկզբնավորման նախնական շրջանից ի վեր, երբ դրան տարբեր ձևաչափերով ներգրավվածություն ցուցաբերեցին մի շարք արտաքին դերակատարներ, որոնց միջամտության դիրքավորումն ու ձևաչափը ժամանակային առումով կրել են որոշակի փոփոխություններ:

1. **Իրանը** միջամտել է հակամարտության սկզբնական շրջափուլից: Պաշտոնապես ներկայացվող ձևաչափը ռազմական հրահանգիչների միջոցով աջակցությունն է սիրիական վարչակարգին: Մինչդեռ Թեհրանի ներգրավվածությունն ավելի լայն շրջանակ է ընդգրկել նրա նախաձեռնությամբ շիայական տարաբնույթ խմբավորումների (տարբեր տվյալներով՝ ընդհանուր մինչև 70 հազար զինյալ), այդ թվում նաև՝ լիբանանյան «Հիզբալլահ» կազմակերպության ռազմական ակտիվ մասնակցությամբ, ինչպես նաև Բաշար ալ-Ասադի կամ ալաուիական վարչակարգին քաղաքական, տնտեսական օժանդակության ցուցաբերմամբ: Իրանի ազդեցության և հետաքրքրության աշխարհագրական արեալն ընդգրկում է հիմնականում Սիրիայի կենտրոնական, արևմտյան՝ Իսրայելին սահմանակից շրջանները, մայրաքաղաք Դամասկոսը, Հալեպը և այլն. ռազմավարական նշանակության խնդիրներից է նաև Թեհրան-Բաղդադ-Դամասկոս-Բեյրութ ցամաքային գիծը վերահսկելու ձգտումը:

2. **Թուրքիայի** ներգրավման հիմնական դրդապատճառներն են սուննիական ուղղվածության առավել թուրքամետ կառավարության ձևավորումը, Սիրիայի քրդաբնակ շրջաններում քրդական ինքնավարության ձգտումների խոչընդոտումը,



«Խաղաղության ակունք» ռազմագործողության արեալը

Թուրքիայում ահաբեկչական ճանաչված «Քրդստանի աշխատավորական կուսակցության» (PKK) և նրա սիրիական ճյուղավորումների ակտիվացման բացառումը, **ինչպես նաև սիրիահայ համայնքի դիրքերի թուլացումը, հայկական ներկայության, պատմամշակութային-եկեղեցական արժեքների ոչնչացումը:** Հակամարտության ընթացքում 2016 թ.-ից, Անկարան փոխել է սկզբնական դիրքավորումը՝ համագործակցելով սիրիական կառավարության արտաքին հովանավորների՝ Մոսկվայի և Թեհրանի հետ: Ազդեցության հիմնական գոտին Իդլիբ նահանգն է, Հալեպ նահանգի՝ Թուրքիային սահմանակից որոշ շրջաններ, Եփրատ գետից արևելք ընկած անվտանգության գոտու հատվածը, որտեղ շարունակում է բնակեցնել իր տարածքում փախստականի կարգավիճակով հաստատված սուննի արաբ, թուրքման բնակչությանը՝ կտրելով կապը Թուրքիայի և Սիրիայի քրդական բնակչության միջև: Հավակնում է նաև ռազմավարական նշանակության Մանբիջ բնակավայրում ազդեցության տարածման:

3. **Պարսից ծոցի արաբական միապետությունների** միջամտության նպատակներն էին սուննիական ուղղվածության կառավարության ձևավորումը, Սիրիայի՝ Իրանի ազդեցության ոլորտից դուրսբերումը, արաբական աշխարհում Դամասկոսի ազդեցության թուլացումը: Ներկայումս այս դերակատարների ազդեցության շրջանակը խիստ սահմանափակվել է երկրի հյուսիսում՝ Իդլիբում, և հարավում՝ Դարաայում, փոքրաթիվ խմբավորումների վրա ներգործելու եղանակով:

4. **Իսրայելի** միջամտության ռազմավարական նպատակը Սիրիա պետության, նրա ռազմաքաղաքական ներուժի թուլացումն է, դեռևս 1967 թ. վեցօրյա պատերազմի ընթացքում այդ երկրից գրավված Գոլանի բարձունքները Դամասկոսին վերադարձնելու հնարավորության բացառումը, Սիրիայում Իրանի և նրա հովանավորյալ խմբավորումների դիրքերի չեզոքացումը: Միջամտության հիմնական ուղղվածությունը տարբեր միջոցներով թիրախային հարձակումների տարբերակն է: 2013 թ.-ից ի վեր Իսրայելն ավելի քան 300 տարաբնույթ հարձակումներ է իրականացրել Սիրիայում կառավարական ուժերի, Իրանի, իրանամետ խմբավորումների և լիբանանյան «Հիզբալլահ» խմբավորման դիրքերի դեմ:

5. **Ռուսաստանի** ներգրավման դրդապատճառներն են Բաշար ալ-Ասադի կառավարությանը համակողմանի աջակցության ցուցաբերումը, հակաահաբեկչական պայքարը, Սիրիայում սեփական դիրքերի ամրապնդումը, Մերձավոր Արևելքում և Միջերկրական ծովի ափին միակ ռազմաբազայի հիմնումն ու ամրապնդումը, աշխարհաքաղաքական ազդեցության, հեղինակության ընդլայնումը: Ազդեցության հիմնական գոտիներն են Սիրիայի առափնյա շրջանները, Հալեպ, Հոմս և Դամասկոս նահանգները, մասամբ նաև արևելյան Դեյր-Զոր նահանգը: 2015 թ. սեպտեմբերի 30-ից Մոսկվայի գործուն միջամտությունը սիրիական հակամարտությանը տրամագծորեն փոխեց դրա հետագա ընթացքը:

6. **ԱՄՆ**-ի միջամտության (2014 թ. սեպտեմբերի 22-ից ԻՊ-ի դեմ ձևավորված միջազգային հակաահաբեկչական կոալիցիայի տեսքով) նպատակներն են Սիրիայում վարչակարգի փոփոխությունը, առավել ամերիկամետ կառավարության ձևավորումը, հակաահաբեկչական պայքարը, Սիրիայում Իրանի և Ռուսաստանի աշխարհաքաղաքական ազդեցության թուլացումը, դաշնակից Իսրայելին սպառնացող վտանգների չեզոքացումը: ԱՄՆ-ի ազդեցության գոտիներն էին Հալեպ նահանգում քրդաբնակ Քոբանի շրջանը, Մանբիջ բնակավայրը, Եփրատ գետից արևելք ընկած Ալ-Ռակկա, Ալ-Հասաքա, մասամբ նաև Դեյր-Զոր նահանգները, սիրիա-հորդանանյան սահմանին՝ Ալ-Թանֆ ռազմաբազան: Ներկայումս Վաշինգտոնը որոշակի ազդեցություն ունի Սիրիայի հյուսիսարևելյան՝ էներգակիրներով հարուստ շրջաններում, ինչպես նաև Ալ-Թանֆում:

7. Եվրոպական դերակատարներից սահմանափակ ներգրավվածություն ունեն **Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան,** որոնց նպատակները հիմնականում համընկնում են ԱՄՆ-ի հետաքրքրություններին, գործողության արեալն ընդգրկում է Մանբիջ շրջանը, Դեյր-Զոր և Ալ-Ռակկա նահանգները:

8. **Հայաստանը** 2019 թ. փետրվարի 8-ից Սիրիայում իրականացնում է մարդասիրական առաքելություն, նպատակը սիրիացի ժողովրդին, հատկապես սիրիահայ համայնքին աջակցությունն է, գործընկեր դերակատարների հետ համագործակցության խորացումը: Առաքելությունը գործում է Հալեպ նահանգում հումանիտար ականազերծողներից, բժիշկներից, ինչպես նաև նրանց անվտանգությունն ապահովող անձնակազմից:

9. Միջազգային ահաբեկչական խմբավորումներից ներկա շրջափուլում առավել ակտիվ է **«Ալ-Կաիդայի»** սիրիական ճյուղավորումը, որը գործում է «**Հայաթ Թահրիր ալ-Շամ**» անվամբ հիմնականում հյուսիսարևմտյան Իդլիբ նահանգում, մասամբ նաև կենտրոնական Համա նահանգի հյուսիսում. նպատակը խալիֆայության ձևավորումն է: Ընդհատակ անցած բջիջների միջոցով մասամբ Ալ-Ռակկա և հատկապես Դեյր-Զոր ու Հոմս նահանգներում շարունակում է որոշակի դերակատարություն ունենալ նաև «**Իսլամական պետություն**» ահաբեկչական խմբավորումը, որը դեռևս 2014 թ. հունիսի 30-ին խալիֆայություն էր հրո-

չակել Իրաքի և Սիրիայի տարածքներում՝ «սրբազան պատերազմ» հայտարարելով բոլոր անհավատների դեմ:

Սիրիական հիմնախնդրի խաղաղ կարգավորման միջազգային հիմնական ձևաչափերն են ՄԱԿ-ի հովանու ներքո 2012 թ. հունիսի 30-ին ձևավորված «**Ժնևի համաժողովը**» և վերոնշյալ «**Աստանայի ձևաչափը**»: Այս հարթակների տրամաբանության շրջանակներում էլ 2019 թ. հոկտեմբերի 30-ին առաջին նիստն է գումարել ընդհանուր առմամբ 150 հոգուց կազմված **Սիրիական սահմանադրական հանձնաժողովը**, որի նպատակն է նոր մայր օրենքի մշակումը և դրա հիման վրա հիմնախնդրի հանգուցալուծումը: Մինչդեռ հանձնաժողովի՝ արդեն թվով 5 նստաշրջաններում դրա մասնակիցներին այդպես էլ չի հաջողվել շոշափելի հաջողություն արձանագրել:

- **Սիրիահայ համայնքի և Հայաստանի դիրքավորումը սիրիական ճգնաժամի շրջանակում**

Ճգնաժամի հետևանքով մարդկային և նյութական զգալի կորուստներ է կրել նաև սիրիահայ համայնքը, որի անդամների թիվը մինչհակամարտային շրջանում հաշվվում էր շուրջ 60-80 հազար: Այն բավականին կազմակերպված և Սիրիայի տնտեսական, հասարակական, մշակութային կյանքում բավականաչափ շոշափելի դիրքերի հասած էթնո-կրոնական խմբերից մեկն էր: Ռազմական գործողությունների հետևանքով սիրիահայերի շրջանում մարդկային կորուստների թիվը հասնում է շուրջ 250-ի: Համայնքի նոսրացման հետևանքով նրա ներկայացուցիչների թիվը ներկայումս հաշվվում է 25-30 հազար, որոնց զգալի մասն ապրում է Հալեպ քաղաքում: Ճգնաժամի ընթացքում սիրիահայերով բնակեցված շրջանները հիմնականում մնացել են կառավարական ուժերի վերահսկողության ներքո, իսկ համայնքի հավաքական դիրքորոշումը դրսևորվել է «դրական չեզոքության» հարթությունում՝ հնարավորինս աջակցելով հիմնախնդրի բացառապես խաղաղ և քաղաքական կարգավորմանը:

Հակամարտության ընթացքում Թուրքիայի դրդմամբ սիրիահայ համայնքը ենթարկվել է նաև թիրախավորված հարձակումների թուրքամետ տարաբնույթ զինյալ խմբերի գործողությունների միջոցով: Այսպես՝ 2014 թ. մարտի 21-ին «Ջաբհաթ ալ-Նուսրա» և «Ջեյշ ալ-Իսլամ» խմբավորումները Թուրքիայի տարածքից հարձակվել են սահմանի մերձակայքում և Լաթաքիայի հյուսիսում գտնվող Քեսաբ հայկական գյուղաքաղաքի վրա՝ ամբողջությամբ հայաթափելով շրջանը, որի նկատմամբ վերահսկողությունը սիրիական կառավարական ուժերը վերականգնել են նույն թվականի հունիսի կեսերին: Նշված միջադեպից ամիսներ անց՝ սեպտեմբերի 21-ին, արդեն ԻՊ զինյալները պայթեցրել են Հայոց ցեղասպանության զոհերի մասունքներն ամփոփող Դեյր-Զորի Սրբոց Նահատակաց եկեղեցին: Համայնքը հոգևոր, նյութական զգալի կորուստներ, կենցաղային, տնտեսական, անվտանգային զրկանքներ է կրել նաև Հալեպում, Դամասկոսում, Հոմսում, Ռակկայում և այլուր:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա սիրիական ճգնաժամի ողջ ընթացքում Երևանը ևս որդեգրել է հիմնականում «դրական չեզոքության» դիրքորոշում՝ պահպանելով շփման հարթակները սիրիական կառավարության և դրանում ներգրավված արտաքին դերակատարների՝ Ռուսաստանի, մասամբ նաև Իրանի, իսկ հակակառավարական խմբավորումների հետ հաղորդակցման անհրաժեշտ մեխանիզմներ ապահովելու համար՝ նաև մի շարք արևմտյան երկրների հետ: Երևանի դիրքորոշման հիմնական դրդապատճառներն են հայ-սիրիական բարեկամական հարաբերությունները, սիրիահայ համայնքի և նրա հոգևոր, մշակութային, պատմական ժառանգության անվտանգության երաշխավորումը և այլն: Հակամարտության անցած 10 տարիներին Հայաստանն ընդունել է ավելի քան 20 հազար սիրիացի ներգաղթյալների, որոնց մեծ մասին տրամադրվել է ՀՀ քաղաքացիություն: Սիրիա են այցելել ՀՀ նախարարական և խորհրդարանական մի շարք պատվիրակություններ, ինչպես նաև ՌԴ-ի հետ համագործակցությամբ Հալեպ քաղաք է առաքվել մարդասիրական օգնության 4 խմբաքանակ: Իսկ ՊՆ մարդասիրական առաքելության գործուղման հետևանքով Երևանի դիրքորոշումը սիրիական ճգնաժամում փոխադրվել է որակապես նոր՝ փաստացի հումանիտար նպատակով «ներգրավման» մակարդակ:

Ամփոփելով կարելի է նշել, որ, չնայած անցած տասնամյակի ընթացքում սիրիական ճգնաժամի շրջանակում տեղ գտած տարբեր մակարդակի ակտիվացումներին, ռազմական ակտիվությանը, երկրին և նրա բնակչությանը հասցված անդառնալի վնասներին և ներկայումս հաստատված հարաբերականորեն վերահսկելի կայունությանը, այնուամենայնիվ, այս հակամարտությունը դեռևս բավականաչափ հեռու է հանգուցալուծման շրջափուլից: Նման իրավիճակի փաստացի հիմնավորումն այն է, որ դրանում ներգրավված ինչպես ներսիրիական, այնպես էլ արտաքին առանցքային դերակատարների որևէ խումբ չի հասել բացարձակ առավելության հակառակորդների նկատմամբ և չի կարող պարտադրել հանգուցալուծում: Սիրիայի տարածքն էլ վերածվել է դրան միջամտած արտաքին դերակատարների համար սակարկությունների հարմարավետ հարթակի, որտեղ որոշակի պայմանական զիջումների միջոցով կարելի է արձանագրել ավելի կարևոր ձեռքբերումներ այլ՝ առավել կենսական շահերի գոտիներում:



Ներկա դիրքային իրավիճակը

Սողոմոն Թեհլիրյան. ծննդյան 125-ամյակի առթիվ

Գոհար Խանումյան
Գիտական հոդվածների հեղինակ. գիտական հետաքրքրության շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության խնդիրները: Զբաղվում է Օսմանյան կայսրությունում որբահավաք աշխատանքների ուսումնասիրությամբ

Սողոմոն Թեհլիրյանը[1] (1896 թ. ապրիլի 2-1960 թ. մայիսի 23) իրավամբ Հատուկ գործի[2] («Նեմեսիս» գործողության) ամենահայտնի դեմքն է: Դա պայմանավորված է ոչ միայն այն բանով, որ նրա թիրախը Հայոց ցեղասպանությունը իրագործած ամենահայտնի ոճրագործն էր՝ Թալեաթը, այլև նրա դատավարության՝ հասարակական լայն հնչեղություն ունենալու փաստով: Հաճախ «Նեմեսիս» գործողությունը հանրության շրջանում անձնավորվում է հենց նրա կերպարով: Ի դեպ, եթե Սփյուռքում դեռ 1920-ական թվականներից Սողոմոն Թեհլիրյանին ճանաչում էին որպես հերոս, ապա Խորհրդային Հայաստանում հասարակության լայն շերտերի համար նրա անունը մինչև 1990-ական թվականների սկիզբը գործնականում անհայտ էր: Միայն նորանկախ Հայաստանում հնարավոր դարձավ լայնորեն վեր հանել «Նեմեսիսի» հանիրավի մոռացված հերոսների անունները: Հենց այս շրջանում տպագրվեց Ս. Թեհլիրյանի դատավարության սղագրությունը[3]: Ի դեպ, այդ հրատարակության մեջ Ս. Թեհլիրյանի ազգանունը սխալ ձևով է գրված՝ **Թեհլերյան**: Թեհլիրյանի ազգանվան գրության ոչ ճիշտ ձևն այսօր էլ շատ տարածված է, հատկապես՝ հանրագիտարաններում, համացանցում, անգամ դասագրքերում: Մինչդեռ դատավարության ռուսերեն թարգմանության մեջ այն ճիշտ է տառադարձված՝ **Тейлирян**[4]: Սողոմոնի ազգանվան սխալ գրությանը հանդիպում ենք ինչպես արևելահայերեն, այնպես էլ արևմտահայերեն գրելաձևերում: Օրինակ՝ Ս. Թեհլիրյանի դատավարությունից մի քանի օր անց «Առաւօտ» թերթը, ազդարարելով գերմանական դատարանի վճիռը, հոդվածում Սողոմոնի ազգանունը գրում է «Թայլէրեան»[5]:

Հարկ է նշել, որ հատկապես ոչ մասնագիտական շրջանակներում, հաճախ շրջանառության մեջ են դրվում Ս. Թեհլիրյանի կենսագրության այնպիսի դրվագներ, որոնք վերցված են նրա դատավարության սղագրական զեկույցից, սակայն չեն համապատասխանում իրականությանը: Օրինակ՝ այն, որ նա իբր ականատես է եղել իր ընտանիքի անդամների սպանությանը, տեղահանվել է հայրենի քաղաքից, բողոքական ընտանիքից է սերում և այլն:

Թեհլիրյանի կենսագրության վաղ շրջանի՝ 1914-1921 թթ. իրադարձությունների ուսումնասիրության լավագույն աղբյուրը Վահան Մինախորյանի[6] գրի առած Ս. Թեհլիրյանի հուշագրությունն է[7]: Ուշագրավ է այն փաստը, որ Վ. Մինախորյանը մահացել է Բելգրադում 1946 թվականին[8], իսկ Թեհլիրյանի՝ նրա կազմած հուշագրությունը հրատարակվել է 1953 թ. Կահիրեում: Այսինքն՝ հուշերը գրի են առնվել

հրատարակությունից առնվազն 7-8 տարի առաջ: Թեև հուշագրությունը հրատարակվել է Թալեաթի մահապատժից 32 տարի անց, այնուամենայնիվ, Թեհլիրյանը չի գաղտնազերծում գործողության որոշ մասնակիցների անունները (երբեմն ստեղծելով կեղծանուններ կամ անվան և ազգանվան տառերից կազմված նոր անուններ, օրինակ՝ Հրաչ (Հրաչ Փափազյան – Գ. Խ.), Հազոր (Հակոբ Զորյան – Գ. Խ.)[9], Վազա (Վահան Զաքարյան – Գ. Խ.)[10]:

Թեհլիրյանի կենսագրության կարևոր դրվագը՝ Բեռլինի բանտում անցկացրած օրերը և մտորումները, ներկայացված են նրա գրառումներում, որոնք կինը՝ Անահիտ Թաթիկյանը, ամուսնու մահից տարիներ անց՝ 1970-ական թվականներին, բերել է Խորհրդային Հայաստան և պահ տվել Ազգային արխիվին[11]:

Նախքան Հատուկ գործի մեջ ներգրավվելը Ս. Թեհլիրյանը, չնայած երիտասարդ տարիքին, անցել էր մարտական հարուստ ուղի՝ դառնալով ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչների՝ Զորավար Անդրանիկի, Սեբաստացի Մուրադի, Կայծակ Առաքելի, Սեպուհի և այլոց զինակից ընկերը: Ընդ որում, մարտական բազմաթիվ գործողություններին մասնակցելուց բացի (որոնցում նույնիսկ վիրավորվում է)[12], Ս. Թեհլիրյանը 1916-1917 թթ. զբաղվել է նաև որբահավաք գործունեությամբ, ինչը տակավին նրա կենսագրության չլուսաբանված և պատշաճ ուշադրության չարժանացած դրվագներից է: 1916 թ. ամռանը նրա ավագ մարտական ընկերը՝ Սեբաստացի Մուրադը, հռչակել էր «մեկ հայ-մեկ ոսկի» կարգախոսը, որը կարճ ժամանակահատվածում վերաճեց համահայկական փրկության ծրագրի[13]: Դրանից ոգեշնչվելով՝ Ս. Թեհլիրյանն իրականացնում է ազգանվեր կարևոր առաքելություն. Երզնկայում 1916 թ. հայտնաբերում է անմարդաբնակ վայրերում՝ քարանձավներում, անտառներում, լքված ու ավերակ տներում թաքնված անապաստան ու ծնողազուրկ

երեխաների և նրանց հանձնում հայկական որբանոցների խնամքին: Նա Երզնկայում հայ կամավորականներից կազմված որոնողական խմբի անդամ էր և ստացել էր «որբեր հավաքողի պաշտոն»[14]: Իր հուշերում, անդրադառնալով որբահավաք աշխատանքներին, Ս. Թեհլիրյանը գրում է. «Ապրիլին ռուսները գրաւեցին Տրապիզոնը, իսկ յուլիսի կէսերին՝ Երզնկան: Էրզրումի դաշտում ամէն տեղ յայտնուում էին ոսկրացած, վայրենական վիճակի մատնուած մանուկներ, որոնց մեծ մասը իր գոյութիւնն էր պահպանել աւերուած հայ գիւղերի փլատակներում: Ձեռք ընկնողները դողում էին աշնան տերևի պէս. մեծ ջանք էր պէտք հասկացնելու, որ իրենց այլևս վտանգ չի սպառնում: Մոռացել էին լեզու, հայութիւն, մարդկութիւն: Խնուսում դրանցից խմբուած էին շուրջ երկու հարիւր հոգի: Ամէն տեղ առաջնակարգ արժէք էր ստացել որբերի գործը. ամէն որբուկ մի նոր աղիւս էր ազգը վերակառուցելու համար»[15]:

Թալեաթին որպես հայերի կոտորածների հիմնական կազմակերպիչ թիրախավորելու և ոչնչացնելու մտահղացումը Ս. Թեհլիրյանի մտքում ծագել է 1916 թ., երբ երիտասարդ կամավորականը, իր զինակից ընկերների հետ մտնելով հայրենի Երզնկա քաղաքը, տեսնում է հայրական տունը դատարկված, թալանված և ավերակ դարձած: Հոգեկան ծանր ապրումներից նա կորցնում է գիտակցությունը և ուսենում սպանված մոր տեսիլքը[16]: Թեհլիրյանը հիշում է. «….Ու իմ առջև դարձեալ պատկերում է Թալէաթի փքուն, ինքնագոհ դէմքը, որ մթութեան մէջ կարծես վեր է հանում բրդոտ թաթը…. Ա՛խ, կտրել այդ ձեռքը ու թողնել, որ արիւնաքամ լինի հրէշը, որ կարող լինի զգալ ու հասկանալ իր կատարած ոճիրի ահաւոր չափերը… Հաւատա՛լ արդեօք, որ մի օր կլինի արդար դատաստան….»[17]: Թալեաթին նա, ինչպես նաև իր ժամանակակիցներից շատերը համարում էին Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ և կոտորածների պատասխանատու: Ի դեպ, մոր տեսիլքը հետագայում դատավարության ժամանակ օգտագործվեց դատապաշտպանների կողմից՝ նրա պաշտպանությունն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Ս. Թեհլիրյանը 1918 թ. վերջին՝ պատերազմի ավարտից անմիջապես հետո, երբ իր կորցրած հարազատներին գտնելու հույսով թերթերում հայտարարություն տալու համար ժամանել էր Կոստանդնուպոլիս, փորձեց գործնական քայլեր անել Թալեաթի սպանությունն իրագործելու ուղղությամբ: Աջակցություն ստանալու նպատակով նա անգամ դիմեց աքսորից Կ. Պոլիս նոր վերադարձած Ջավեն պատրիարքին՝ ստանալով վերջինիս մերժումը[18]: Կ. Պոլսում հենց այս ընթացքում՝ 1919 թ. սկզբին, նա պատահական տեղեկանում է հայ մատնիչ-դավաճան Հարություն Մկրտչյանի[19] հայադավ գործունեության մասին «Ճակատամարտ» թերթի աշխատակից Երանուհի Դանիելյանի միջոցով, ով հետագայում առանցքային դերակատարություն է ունենում Թեհլիրյանին **Հատուկ գործում** ներգրավելու

Թեհլիրյան եղբայրների լուսանկարը. ձախից աջ կանգնած՝ Միսաք (եղբայրը), Սահակ (Սողոմոնի հորեղբորորդին) և Սողոմոն

հարցում[20]: Անդրադառնալով մատնիչի սպանությանը՝ Թեհլիրյանը գրում է, որ նրան մահապատժի ենթարկելը իր սեփական նախաձեռնությունն է եղել. «Երկար ճանապարհին միակ միտքս այդ նոր հրէշն էր՝ մատնիչ Յարությունը. անհրաժեշտ չէ՞ր վրէժխնդրութեան առաքելութիւնս, որ վաղուց դարձել էր գոյութեանս նպատակ, նրանից սկսել….»[21]: Որոշ ժամանակ հետապնդելով իր զոհին, ճշտելով նրա ինքնությունը՝ երիտասարդ վրիժառուն ի վերջո իրագործում է սպանությունը[22]: Թեև Թեհլիրյանը կոնկրետ չի նշում սպանության օրը, սակայն, դատելով նրա կողմից իրադարձությունների շարադրման ընթացքից, կարող ենք եզրակացնել, որ դեպքը տեղի է ունեցել 1919 թ. մարտի վերջին[23]: Այսինքն՝ հայ դավաճանի սպանությունը չի կարող համարվել **Հատուկ գործի** մաս, քանի որ այն ժամանակագրորեն ավելի վաղ է կատարվել, քան գործի է դրվել «Նեմեսիս» գործողությունը: Բացի այդ, հենց Թեհլիրյանի վկայությամբ, այն իր սեփական նախաձեռնությունն է եղել և ոչ թե ուղղորդվել որևէ մեկի կողմից: Սակայն մատնիչի սպանությունը նպաստեց նրան, որ Ս. Թեհլիրյանն ընդգրկվեց Հատուկ գործի մեջ: Հ. Մկրտչյանի սպանությունից հետո Թեհլիրյանը 1919 թ. նոյեմբերին մեկնում է Փարիզ, որտեղ մնալով շուրջ մեկ տարի՝ 1920 թ. հոկտեմբերին ուղևորվում է Բոստոն՝ ստանձնելու հատուկ առաքելությունը՝ Հատուկ գործի առանցքային գործողության՝ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Թալեաթի նկատմամբ մահապատժի իրագործումը:

ՀՅԴ-ի կողմից ստեղծված Հատուկ մարմինն արդեն 1920 թ. կեսերից անցել էր գործուն քայլերի, այն է՝ հետախուզական խմբերի միջոցով հայտնաբերել դատավարությունից խուսափած երիտթուրք

հանցագործներին, որոնք կեղծ անձնագրերով, փոփոխված արտաքինով ծպտյալ բնակություն էին հաստատել հիմնականում եվրոպական երկրներում, և ընտրել նրանց մահապատիժն իրականացնելու համար համապատասխան թեկնածուների: Ինչպես արդեն վերը նշվեց, մատնիչ Հ. Մկրտչյանի սպանությունը նպաստեց, որ Թեհլիրյանն ընդգրկվի Հատուկ գործի կարևոր առաքելության մեջ: Այս կապակցությամբ նա գրում է. «Մատնիչի մահը Պոլսոյ հայութեան մէջ առաջ բերեց ընդհանուր ցնծութիւն: Կուսակցութեան շրջաններում հարց բարձրացաւ հետամուտ լինելու մեծ մարդասպաններին, յարաբերութեան մէջ մտնելու այդ առթիւ Ռուսաստանի, Անդրկովկասի, Բերլինի, Ժընևի կուսակցական մարմինների հետ»[24]: «Նեմեսիս» գործողության մեջ Թեհլիրյանին ներգրավելու հարցում իրենց նպաստն ունեցան նրա վաղեմի ծանոթներ Երանուհի Դանիելյանի և Համոյի (Համազասպ Բարաղամյան)[25] միջնորդությունները, ովքեր Հատուկ գործի մեջ ներգրավված անձինք էին:

1920 թ. հոկտեմբերին ստանալով Համոյի նամակը՝ Թեհլիրյանն ուղևորվում է ԱՄՆ և Բոստոնում հանդիպում Արմեն Գարոյի[26] հետ, որից ստանում է համապատասխան հրահանգներ, Թալեաթի և Բեռլինում գտնվող նրա թուրքական շրջապատի անձանց լուսանկարները: 1920 թ. դեկտեմբերի 3-ին Թեհլիրյանը ժամանում է Բեռլին՝ իբրև ուսանող:

Թալեաթի մահապատիժը

Սողոմոն Թեհլիրյանն անձամբ չէր ճանաչում Թալեաթին, երբևիցե չէր հանդիպել նրան երես առ երես, Բեռլին ժամանելու պահին բացարձակապես չէր տիրապետում գերմաներենին: Նրան վստահված կարևոր առաքելությունն իրագործելու համար Բեռլինում սպասում էր արհեստավարժ թիմը, որն արդեն կատարել էր հետախուզական և կազմակերպչական զգալի աշխատանք: Ձեռք բերված տեղեկություններից պարզ էր դարձել, որ Եվրոպա ճողոպրած ու թուրքական դատարանի վճռից խուսափած երիտթուրքերի շրջանում[27] մեծ ոգևորություն էին առաջացրել Մուստաֆա Քեմալի ռազմական և քաղաքական հաջողությունները Թուրքիայում: Կիլիկիայում մարում էին հայերի ինքնապաշտպանության վերջին օջախները, իսկ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացվել էր. երկրում հաստատվել էր նոր՝ բոլշևիկյան իշխանություն: Ուստի ռազմաքաղաքական նոր շրջադարձը պահանջում էր հնարավորինս արագ և գրագետ գործել: Բեռլինյան գործողության մեջ ներգրավված էր Հրաչը (Հրաչ Փափազյանը)[28], որը, ծնունդով լինելով Բուրսայից (Օսմանյան կայսրություն), փայլուն տիրապետում էր թուրքերենին և մուտք էր գործել Բեռլինում ծպտյալ ապրող երիտթուրքերի շրջանակ, մասնավորապես՝ Տրապիզոնի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմիի որդու «մտերիմ ընկերն էր»: Նա գործում էր Մեհմեդ Ալի կեղծանունով և արժեքավոր տեղեկություններ էր փոխանցում ճողոպրածների գործունեության վերաբերյալ[29]:


Entlassungs-Schein.

Der Student Salomon Tehlirian

war vom 19.3.21 bis 3.6.21

hier in Haft.

Berlin, den 3.6. 1921

Untersuchungsgefängnis

J. A.

Սողոմոն Թեհլիրյանի՝ Բեռլինի բանտից ազատ արձակման կտրոնը

Հետախուզական խմբի մյուս անդամներն էին Վազան (Վահան Ջաքարյանը), Հազորը (Հակոբ Ջորյանը)[30], որն առաջինն էր բացահայտել Թալեաթին Բեռլինում և գերմանական դատարանում դարձավ Ս. Թեհլիրյանի թարգմանիչը[31], Հայկոն, որին հետազոտող Վարդան Մատթեոսյանը նույնացրել է ՀՅԴ անդամ Հայկ Տեր-Օհանյանի հետ[32], և Բեռլինում ՀՀ ներկայացուցիչ, փոխհյուպատոս Լիպարիտ Նազարյանցը:

Թալեաթը Բեռլինում փոխել էր իր անձնական տվյալները և իր կնոջ հետ Ալի Սալիհ բեյ անունով ապրում էր Հարդենբերգ փողոցում վարձակալած ինը սենյականոց շքեղ բնակարանում: Ըստ լեգենդի՝ Ալի Սալիհը սնանկացած նախկին վաճառական էր, ով Բեռլինում արևելյան սրճարան էր աշխատացնում: Բնակարանը նրա և կնոջ համար վարձակալել էր թուրքական դեսպանատունը[33]: Նա փոխել էր նաև արտաքին տեսքը, հագուկապը. իր սիրելի թուրքական ֆեսի փոխարեն կրում էր եվրոպացուն բնորոշ գլխարկ: Թալեաթի նկատմամբ տարվող հետախուզությունն ուղղորդվում էր Բոստոնից, որտեղից պարբերաբար ուղարկվում էին ծածկագրված հեռագրեր: Ս. Թեհլիրյանին հաջողվում է բնակարան վարձել Թալեաթի վարձակալած բնակարանի հարևանությամբ և մի քանի օր շարունակ մոտիկից հետևել նրան:

Թալեաթը բացահայտված էր. մանրակրկիտ ստուգված էր նրա ինքնությունը, քանի որ կարևոր էր, որ գործողության ընթացքում պատահական մարդ չտուժի: 1921 թ. մարտի 15-ին՝ առավոտյան, Բեռլինի Հարդենբերգ փողոցում Ս. Թեհլիրյանն ատրճանակով գնդակահարում է Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուին՝ Թալեաթ փաշային: Այն, որ սպանվածը Թալեաթն էր, այդ պահին գիտեր միայն Սողոմոնը:

Թեհլիրյանը ձերբակալվեց սպանության վայրում և տարվեց ոստիկանություն, որտեղ սկսվեց հարցաքննությունը: Քանի որ նա հարցաքննության պահին գրեթե չէր տիրապետում գերմաներենին[34],

իբրև թուրքահպատակի՝ նրան առաջարկեցին հարցաքննվել թուրքերենով: Սակայն Թեհլիրյանի պահանջով հարցաքննությունը կատարվեց հայ թարգմանչի միջոցով: Նա պնդում էր, որ Թալեաթին սպանել է վրեժից դրդված, գործել է միայնակ և հանցակիցներ չի ունեցել:

«Ալի Սալիհի» դին ճանաչել էր նրա վաղեմի ընկերը՝ Բեհաէդդին Շաքիրը, ով հաստատել էր, որ սպանվածը Թուրքիայի նախկին մեծ վեզիր Թալեաթն է[35]: Թալեաթին հուղարկավորեցին միայն մահվան 5-րդ օրը, քանի որ թուրքական իշխանություններն արգելեցին նրան ամփոփել հայրենիքում: Բեռլինում նախկին դաշնակիցները՝ գերմանացիները, կազմակերպեցին Թալեաթի ճոխ հուղարկավորությունը. բազմաթիվ ծաղկեպսակներ, տարբեր երկրներից ժամանած թուրքեր, հակահայկական ելույթներ և կոչեր…[36]:

Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը և Հատուկ գումարը

Ս. Թեհլիրյանի դատավարությունը դարձավ **Հատուկ գործի** ամենահնչեղ էջը: Այն դարձավ նաև քաղաքական հարթակ՝ հայկական կոտորածների մասին բարձրաձայնելու և միջազգային հանրության ուշադրությունը վերստին այդ հարցի վրա հրավիրելու համար[37]: Անհրաժեշտ էին նյութական զգալի միջոցներ՝ Գերմանիայի լավագույն դատապաշտպաններին վարձելու և Թեհլիրյանի պաշտպանական գործը պատշաճ կազմակերպելու համար: Այդ միջոցները հայթայթվում էին **Հատուկ գումարի** ֆոնդից, որը ստեղծվել էր դեռ 1920 թ.: Շահան Նաթալին այն անվանում էր «Վրեժի ֆոնդ»[38]: **Հատուկ գործի** ֆինանսական պատասխանատու Ահարոն Սաչակլյանի[39] անձնական արխիվում **Հատուկ գումարի** վերաբերյալ հանդիպում ենք ինչպես դրամական նվիրատվությունների մասին նշումների,

Թեհլիրյանի դատավարությունը

Սողոմոն Թեհլիրյանի և Անահիտ Թաթիկյանի հարսանեկան լուսանկարը, 1920 ական թթ.

այնպես էլ կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների[40]: Ինչպես նշում է ամերիկահայ իրավաբան Վարդգես Եղիայանը, համայն հայության կողմից այդ նպատակի համար հանգանակվեց շուրջ 700.000 մարկ: Դրանից բացի՝ այդ օրերին Փարիզում Խաղաղության կոնֆերանսին մասնակցող հայկական պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի կողմից կազմակերպված հանգանակության շնորհիվ հավաքագրվեց շուրջ 300.000 մարկ: Միայն դատավարության ընթացքում ծախսվեց 306.484 մարկ[41]:

Ս. Թեհլիրյանին դատարանում պաշտպանելու էին Գերմանիայի անվանի իրավաբաններ Ադոլֆ ֆոն Գորդոնը՝ իրավական գաղտնի խորհրդական, Յոհաննես Վերթաուերը՝ իրավական խորհրդական, և Նիմայերը՝ Քիլի համալսարանի իրավագիտության բաժնի պրոֆեսոր: Յուրաքանչյուր դատապաշտպանի վճարվեց 75.000[42] մարկ:

Դատապաշտպանները Թալեաթի հանցանքը հիմնավորելու համար օգտագործեցին ժամանակին տրված հայերի բնաջնջման և տեղահանության հրամանների բնօրինակ հեռագրեր, որոնք գերմանական դատարանին էր ներկայացրել Արամ Անտոնյանը: Դատավարության ընթացքում (Բեռլին, 2-3-ը հունիսի 1921 թ.) վկայություններ տվեցին գերմանացի բարձրաստիճան սպա Լիման ֆոն Սանդերսը, հայտնի հասարակական գործիչ, հայասեր Յոհաննես Լեփսիուսը, ցեղասպանությունը վերապրած հայեր, այդ թվում՝ Գրիգորիս Պալաքյանը, որի հետ դատավարության ավարտից հետո Թեհլիրյանը մեկնեց Մանչեստր[43]: Իրավական առումով Թեհլիրյանի պաշտպանությունը հիմնվում էր Գերմանիայի քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի

վրա, որը սահմանում էր. «Պատժելի արարք չկա, եթե արարքը կատարելու պահին հանցագործը գտնվում էր անգիտակից վիճակում կամ հոգեկան գործունեության պաթոլոգիական խախտում ունի, որի պատճառով բացառվում էր նրա կամարտահայտությունը»[44]: 1921 թ. հունիսի 3-ին երդվյալ ատենակալների վճռով Ս. Թեհլիրյանն ազատ արձակվեց և արտաքսվեց երկրից[45]:

Դատավարությանը մասնակցում էր նաև երիտասարդ հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինը, որի կյանքում Թեհլիրյանի դատական գործը ճակատագրական նշանակություն ունեցավ: Տարիներ անց արդեն փորձառու իրավաբանը ստեղծեց «գենոցիդ» եզրույթը, և նրա անմիջական ջանքերով նորաստեղծ Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան 1948 թվականին ընդունեց «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան:

Ս. Թեհլիրյանի դատավարությունը հասարակական-քաղաքական մեծ արձագանք գտավ. այն լայնորեն լուսաբանվեց ինչպես ժամանակի եվրոպական, ամերիկյան ու հայկական մամուլում, այնպես էլ գերմանացի և թուրք լրագրողների կողմից:

Դատավարությունից հետո Ս. Թեհլիրյանը բնակություն է հաստատում նախ Մանչեստրում, ապա՝ Բելգրադում (Սերբիա)՝ իբրև Սարո Մելիքյան[46]: Ունեցել է սեփական բիզնես: Անվան փոփոխությունը կապված էր նրա և իր ընտանիքի անվտանգության հետ: 1953 թ.

Նստած աջից՝ Սեպուհ, աջից կանգնած՝ Սողոմոն Թեհլիրյան, ձախից առաջինը՝ կանգնած Հակոբ Ջորյան, ձախից երկրորդը կանգնած՝ Արշավիր Շիրակյան

տեղափոխվել է Կասաբլանկա (Մարոկկո), այնտեղից էլ 1954 թ.՝ Սան Ֆրանցիսկո (ԱՄՆ), որտեղ էլ մահացել է 1960 թ. մայիսի 23-ին՝ Սողոմոն Մելիքյան անունով: Նրա աճյունը հողին է հանձնվել Ֆրեզնոյում:

Անահիտ Թաթիկյանի հետ ամուսնությունից Ս. Թեհլիրյանն ուներ 2 որդի՝ Ջավենը և Շահենը:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1Ս. Թեհլիրյանի կենսագրությունը տես Խանումյան Գ., Սողոմոն Թեհլիրյան-120 / http://www.genocide-museum.am/arm/soghomon-tehliryan.php (մուտք՝ 30.03.2021):
2Հատուկ գործի մասին տես Խանումյան Գ., Սողոմոն Թեհլիրյանը և «Նեմեսիս» գործողությունը, «ՎԷմ» համահայկական հանդես, Եր., 2019, № 4 (68), էջ 67-84:
3Տես Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը (աղագրություն), Եր., «Արևագուն», 1990:
4Տես Судебный процесс Талаата паши: стенографический отчет. Под редакцией, с предисловием и примечениями доктора исторических наук, профессора Степана Степаняна, Ер., 2007:
5Տես «Առաւօտ», 6 յունիս, 1921, թիւ 11 (63):
6Վահան Մինախորյան (1884 թ., Գանձակ – 1946 թ., Բելգրադ) – քաղաքական գործիչ, էսէռ, 1918-1919 թթ.՝ ՀՀ խորհրդարանի անդամ, 1920 թ. վերջին՝ հանրային կրթության նախարար, Ալեքսանդրապոլի հայ-թուրքական բանակցություններում ՀՀ պատվիրակության անդամ: 1921 թ. մասնակցել է Փետրվարյան ապստամբությանը, անցել Պարսկաստան, այնուհետև՝ Պրահա: 1934-1946 թթ. հաստատվել է Բելգրադում:
7Տես Մինախորեան Վ., Սողոմոն Թեհլիրեան. վերյիշումներ (Թալէաթի ահաբեկումը), Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1953:
8Այդ տարիներին Ս. Թեհլիրյանը նույնպես ապրում էր Բելգրադում:
9Տես Քեշիշյան Մ., Նեմեսիսի զինվորը՝ Հակոբ Ջորյան, «Հայ զինվոր», Եր., 23.05.2013, № 20 (987):
10Մանրամասն տես Մատթէոսեան Վ., ՀԱՅԿՕ. Թալէաթի ահաբեկումին վերջին անծանօթ մասնակիցը, 11«Բանբեր Մատենադարանի», Եր., 2014, № 21, էջ 249-260:
12Տես Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 314, ց. 24, գ. 2:
1918 թ. ապրիլի 6-ին Կարաքուրդի կիրճում՝ Սարիղամիշի մոտ, Թեհլիրյանը հրազեսային վնասվածք է ստանում և ապաքինվելու համար տեղափոխվում Թիֆլիս (տես Մինախորեան Վ., նշվ. աշխ., էջ 140):
13Մանրամասն տես Խանումյան Գ. Վ., Հայոց ցեղասպանության տարիներին «մեկ հայ-մեկ ոսկի» փրկության առաքելության հարցերի շուրջ, «Ցեղասպանագիտական հանդես», Եր., 2017, № 5 (2), էջ 35-47:
14Տես Մինախորեան Վ., նշվ. աշխ., էջ 75:
15 Նույն տեղում, էջ 88:
16Տես նույն տեղում, էջ 95:
17Նույն տեղում, էջ 75:
18 Տես նույն տեղում, էջ 212: Տես նաև նույն տեղում, էջ 222:
19Հարություն (Արթին) Մկրտչյան – թուրքական գաղտնի ոստիկանության աշխատակից, լրտես: Նրա կազմած «սև» ցուցակով սկսվեցին հայ մտավորականության ձերբակալությունները Կ. Պոլսում 1915 թ. ապրիլի 24-ին:
20 Վ., Մինախորեան Վ., Սողոմոն Թեհլիրեան. վերյիշումներ (Թալէաթի ահաբեկումը), Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1953:
նշվ. աշխ., էջ 235:
21Տես նույն տեղում, էջ 190:
22Տես նույն տեղում, էջ 205-206:
23Տես նույն տեղում, էջ 199: Տես նաև Mesrobian MacCurdy M., էջ 136:
24Մինախորեան Վ., Ս. Թեհլիրեան նշվ. աշխ., էջ 207:
25Համազասպ Բարաղամյան – հայ կամավորական, «Հորիզոն» (Երևան) թերթի թղթակից, «Հայրենիք» (Բոստոն) թերթի խմբագրության անդամ, ԱՄՆ-ում ՀՅԴ ԿԿ քարտուղար, հատուկ գործի մեջ ներգրավված անձ:
26Արմեն Գարո (Գարեգին Փաստրմաճյան) (1872 թ., Կարին – 1923 թ., Ժնև) – հայ ականավոր քաղաքական, պետական ու հասարակական գործիչ, ՀՅԴ անդամ:
27Բեռլինում ծպտյալ ապրում էին Թալեաթը կնոջ հետ, Ջեմալ Ազմին ընտանիքի հետ, Պոլսի նախկին ոստիկանապետ Բեդրի բեյը, Իսմայիլ Հագգը բեյը և Բեհաէդդին Շաքիրը:
28Հրաչ Փափազյանի մասին տես Սապոնճեան Զ., Հրաչ Փափազեան. Ցեղափոխական և ազգային մեծ գործիչ (կեանքն ու գործը), Պէյրութ, 1987:
29 Տես Մինախորեան Վ., նշվ. աշխ., էջ 255:
30Տես Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ., էջ 138:
31Տես Քեշիշյան Մ., նշվ. աշխ.:
32 Մանրամասն տես Մատթէոսեան Վ., նշվ. աշխ., էջ 249-260:
33Մինախորեան Վ. Ս. Թեհլիրյան Վերյիշումներ
34Բեռլինում գտնվելու երեք ամիսների ընթացքում նա որոշակի քայլեր արել էր գերմաններին սովորելու ուղղությամբ, սակայն բավականաչափ չէր տիրապետում հաղորդակցվելու համար:
35Տես Մինախորեան Վ., նշվ. աշխ., էջ 335:
36Տես նույն տեղում, էջ 338:
37Ս. Թեհլիրյանի դատավարության մասին մանրամասն տե՛ս Hoffman T., New Aspects of the Talaat Pasha Court case, Armenian Review. Winter, 1989, volume 42, Number 4/168:
38Տես Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ., էջ 129:
39Սիմարոն Սաչակլյան (1879 թ., Մալաթիա, Օսմանյան կայսրություն – 1964 թ., Միրակուզա, ԱՄՆ) – ՀՅԴ գործիչ, «Հայրենիք» թերթի (Բոստոն) աշխատակից, Հատուկ գործի ֆինանսական հարցերով պատասխանատու:
40Տես Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ., էջ 216-219:
41Տես Yeghiayan V., The case of Soghomon Tehlirian, 2-nd edition, «Center for Armenian rememberance (CAR)», Glendale, 2006, էջ xxvii:
42 Տես նույն տեղում:
43Տես Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ., էջ 129:
44https://lexetius.com/StGB/51,4 (մուտք՝ 22.11.2019).
45 Տես Hoffman T., նշվ. աշխ., էջ 47:
46Տես «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, օգոստոս, 1960, № 8, էջ 84: Տես նաև «ՀՅ Դաշնակցութեան թանգարան» հիմնադրամ, ֆոնդ 330 դ:

Ցեղապաշտութեան վտանգաւոր ժահրը

Վրէժ-Արմէն

«Հ. Յ. Դաշնակցութեան ընկերվարական իդէալն է կերտումը հասարակութեան մը, որ մարդը ազատագրուած ըլլայ ցեղային, կրօնական-դասակարգային, ազգային, քաղաքական, ընկերային և տնտեսական ամեն տեսակ խտրականութենէ, կաշկանդումէ, բռնութենէ և շահագործումէ»:

ՀՅԴ ծրագիր, 1998

«Ցեղապաշտութիւնը ժահր մըն է» վերնագրով «Le Devoir» օրաթերթի 4 յունիս 2020-ի թիւին մէջ կարևոր յօդուած մը գրած էր հայիթական ծագումով քեպէգցի գրող Տանի Լաֆեռիեր (Dany Laferrière)՝ անդամ ֆրանսական կաճառի:

Այո՛, ժահր մը, որ կ'ընկերակցի մարդկութեան պատմութեան արշալոյսէն ի վեր: Ժահր մը, որ այսօր ևս կը բռնկի աշխարհի տարբեր ծագերուն, ժահր մը, որուն դէմ պատուաստը տակաւին չէ՛ գտնուած:

Այդ յօդուածը գրուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ 2020-ի ընթացքին սևամորթներու դէմ կատարուած իրերայաջորդ ոճիրներուն և անոնց հետևանքով ծայր տուած ժողովրդական ընդվզումներուն ու ցոյցերուն առթիւ: Այս անգամ՝ 2021-ի առաջին ամիսներուն, զոհերը ասիացի-ամերիկացիներն են:

Նախքան մեծանուն գրողին յօդուածին անդրադառնալս տեսնենք՝ ինչպէս կը սահմանուի ցեղապաշտութիւնը:

«Անհատի մը, համայնքի մը կամ հաստատութեան մը կողմէ նախապաշարում, խտրականութիւն կամ թշնամութիւն՝ ցուցաբերուած անձի մը կամ ժողովուրդի մը դէմ՝ մասնաւորաբար անոնց փոքրամասնական կամ մեկուսացուած որոշ ցեղի մը, կամ ազգութեան մը պատկանելութեան հիման վրայ»,— նշուած է «Օքսֆորտի անգլերէն բառարան»-ի մէջ [2]:

«Վիքիփեդիա» համայնագիտարանը քիչ մը տարբեր ձևով կը սահմանէ ախտը. «Ցեղապաշտութիւնը այն հաւատքն է, թէ մարդկային խումբեր կ'ունենան վարքագծային տարբեր յատկանիշներ՝ համապատասխան ֆիզիքական երևոյթին և կրնան բաժնուիլ ըստ մէկ ցեղի գերադասութեան բաղդատմամբ ուրիշի մը»: «Վիքիփեդիա» նաև կ'աւելցնէ, որ «ցեղապաշտութիւնը համեմատաբար արդի յղացք մըն է, որ ծագած է եւրոպական գաղթատիրութեան դարուն, որուն կը յաջորդեն դրամատիրութեան աճը և յատկապէս ատլանտեան գերեվաճառութիւնը, որոնց գլխաւոր մղիչ ուժը հանդիսացած է ան»[3]:

Լաֆեռիեր իր գրական ոճով կը նշէ, թէ այդ յատուկ ժահրը «պէտք ունի ժահրակիրի մը, որ կը հաւատայ, թէ իրմէ տարբեր ոևէ մէկէն գերադաս է ինք՝ նոյն ատեն մտածելով, որ սևամորթը դասաւորման սանդղակին ամենէն վարը կը գտնուի»[4]:

Համատարած վարակի մը բնոյթը ունի ցեղապաշտութիւնը, զոր կը տեսնենք բոլոր ցամաքամասերուն վրայ, որ կը հարուածէ բազմաթիւ ազգութիւններ, համայնքներ, փոքրամասնութիւններ: Միջազգային մամուլը կ'անդրադառնայ այդ երևոյթներուն, ոչ անպայման պէտք եղած ձևով, քանի որ



այդ մամուլի ալ տէրերը շատ յաճախ իրենք ևս օգտուած են այս բոլոր միջոցներէն՝ սկսեալ գերեվաճառութենէն մինչև ներկայ խտրականութեան տարբեր դրսևորումները՝ իրենց հարստութիւնը կուտակելու համար: Սակայն չեն պակսիր նաև Լաֆեռիերի նման մտաւորականներ, որոնք չեն վարանիր բարձրաձայնելու իրենց ընդվզումն ու ցասումը: Վերոյիշեալ յօդուածէն բերեմ երկու մէջբերում ևս՝ հաստատելու համար այս ըսածս:

Ան կը գրէ. «Դարաշրջանի մտաւորական և կրօնական ընտրանին յանձն առած է ստրուկը համոզել, որ ինքն իր տեղը կը գտնէ գաղթային ընկերութեան կազմակերպութեան մէջ: Այսի՞նքն: Պարզ ապրանք մը, որ կ'ուզենք ծախել առաւելագոյն գինը տուողին: Սև օրինագիրքը, որ կը սահմանէ ստրուկին կեանքի բոլոր երեսները, կը ճշտէ, թէ «սևամորթը շարժական ինչք մըն է»: Կը գտնուինք ճիշտ Լուսաւորութեան դարուն մէջ»: Թէև Ֆրանսական յեղափոխութիւնը պահ մը պիտի փորձէ վերցնել ստրկութիւնը, սակայն դրամը պիտի յաղթանակէ, քանի որ «ամեն մարդ կը ջանար հարստանալ սևամորթներու վաճառքէն», նոյնիսկ Վոլթեր: Ապա քիչ անդին կ'աւելցնէ. «Միացեալ Նահանգներու մէջ Աբրահամ Լինգըլն կը հաւատայ, որ գերեվարութիւնը Նոր Ամերիկայի իր ծրագրին խոտոր կը համեմատի: Քաղաքացիական պատերազմ: Հիւսիսը կը յաղթէ: Սևամորթները զանգուածային կերպով կը տեղափոխուին հիւսիս՝ ռոճիկաւոր դառնալու համար: Չ'ուշանար հիասթափութիւնը: Նախկին ստրուկները, աշխատաւոր դառնալով, աշխատավարձ մը ունէին հիմա, սակայն կ'աշխատէին գրեթէ առաջուան չափ շատ ու ստիպուած էին ապրիլ առնետներով լի խրճիթներու մէջ, որոնց համար ալ թանկ կը վճարէին: Կ'անդրադառնային, թէ աշխատաւորը ստրուկ մըն է, որ ի՛նք կը վճարէ իր հաշուեցոյցները: Բայց իր վիճակը առաջուընէ աւելի լաւ չէ: Խնդիրը կը շարունակէ մնալ

անլոյծ»[5]:

Իր կարգին նոյն օրաթերթի 10 յունիս 2020-ի թիւին մէջ «Համարձակիլ ըսել» վերնագրով յօդուած մըն ալ ստորագրած էր Nelly Marcoux (բնիկ ժողովուրդներու իրաւունքներու մարզին մէջ ծրագրերու պատասխանատու), որ կ'ըսէր. «Խնդիր մը դիմագրաւելու համար պէտք է նախ և առաջ կարենալ զայն անուանել: Շատ նման Միացեալ Նահանգներուն, մեր երկիրը հիմնուած է բնիկներու հողատարածքներուն սեփականազրկման և գրաւման վրայ: Կ'օգտուինք տնտեսական համակարգէ մը, որ կը յաւերժացնէ արտերկրի մէջ բռնութիւնն ու սեփականազրկումը, իր կարգին հարկադրելով բնակչութեան տեղաշարժեր դէպի հիւսիս: Մեր հաստատութիւնները, թէկուզ փոքր առ փոքր վերափոխուելով, միշտ այդ ժառանգութիւնը կը ցոլացնեն: Այս կառուցուածքային ազդակներուն իսկ բերմամբ, ասոնք միայն նշելու համար, համակարգային ցեղապաշտութիւնը առկայ է Քեպէգի մէջ»[6]:

Այս հարցը տագնապայինօրէն այժմէական է նաև մեզի համար: Այսօր: Ինչ որ կը պատահի Հայաստանի ու Արցախի մէջ և շուրջ, մեր արևելեան թէ արևմտեան դրացիներուն կողմէ, այլ բան չէ, քան ցեղապաշտութեան դրսևորումներու շարունակութիւնը: Դարաւոր դրսևորումներու:

Իր անդրանիկ ծրագրի (գրուած 1892-ին) ընդհանուր տեսութեան բաժինին մէջ ահա թէ ինչ կ'ըսէր Հ. Յ. Դաշնակցութիւնը. «Տաճիկները մեր երկրին տիրապետելուց յետոյ ամեն ջանք գործ են դրել մեր ժողովուրդը դարձնել կաստա, որի պարտականութիւնը լինի միմիայն աշխատել, արդիւնաբերել, ուրիշ ոչինչ: Հարկաւոր էր այդ ժողովրդին մշտական հպատակութեան տակ պահել և անարգել կերպով ծծել նրա արիւն-քրտինքով ձեռք բերած աշխատանքը»: Իսկ «Նպատակ» բաժնի երրորդ կէտը կը նշէր «Տարբեր ազգութիւնների և դաւանութիւնների հաւասարութիւն օրէնքի առաջ» : Բան մը, որմէ զրկուած էր հայութիւնը իր սեփական հողին իսկ վրայ: Երկար ժամանակ: Դարերո՛վ:

Կ'արժէ վերյիշման կարգով անգամ մը ևս կարդալ Գ. Գիւզալեանի յօդուածը՝ «Հայոց յեղափոխութիւնից առաջ», ուր ան, ի միջի այլոց, հետևեալ երկու մէջբերումները կ'ընէ, երկուքն ալ՝ քաղուած «Տեղեկագիր Հայկ. գիտ. ակադեմիայի» 1946 թ. թիւ 10-էն[9]:

Ահա առաջինը. «Քուրդ կամ թուրք բէկերը, աղաները կամ դէրէբէյները գիւղացուն շահագործում էին, յափշտակում, նրանից վերցնում էին այնքան, որքան իրենք էին ցանկանում: Գիւղացին ֆէոդալի համար կոռ ու բէկար էր կատարում, տղամարդիկ նրա համար տներ, բերդեր ու ճանապարհներ էին կառուցանում, իսկ կանայք՝ տնային աշխատանք կատարում: Արևմտեան Հայաստանի որոշ մասերում, մասնաւորապէս Մուշի, Բիթլիսի և Վանի գաւառներում, հայ գիւղացիութիւնը գտնւում էր ճորտական վիճակում»:

Ահա և երկրորդը. «1890 թուին, մի խումբ արևմտահայերի կողմից Մակար կաթողիկոսին գրուած նամակում հայերի կացութիւնը պատկերացում էր այսպէս. «Ո՛չ մարդկային լեզուն և ո՛չ ալ նորա գրիչը չեն կարող նկարագրել այն բազմատեսակ ծանր

դժբախտութիւնը, որ կրած ենք և կը կրենք: Մեր հայրենի հողի վրայ մեր կեանքը խաղալիք է դարձած մեր իշխողներու ձեռքին. մեր կեանքը անապահով դրութեանց մատնուած է, մեր ընտանիքը՝ ամօթաբեր բռնութեանց, մեր զաւակները զոհ են դարձած կոպիտ ուժի, մեր՝ դառն քրտինքով վաստակած հացը մեզմէ կորզելու, մեր զաւակները սովամահ կոտորելու ենթարկուած են, մեր եկեղեցիները կը սրբապղծուին և հրոյ ճարակ կը լինին, մեր սրբութիւնները կ'անարգուին, և մեր հաւատը կը հայհոյուի, և հոգևորականութիւնը ենթարկուած է հինգերորդ դարում տեղի ունեցած բոլոր տառապանաց»»:

Շատ տարբեր չէ կացութիւնը այսօր, և սխալած չենք ըլլար, եթէ ենթադրենք, որ ճիշտ նոյնը և աւելին ալ ընելու ամբողջական տրամադրութիւններ ունին մեր զոյգ հարևանները, եթէ հնարաւորութիւնը տրուի իրենց:

Այո՛, ժահրը կը յամենայ ու կը տարածուի տակաւին մեր թէ արար աշխարհի պարագային: Միայն երբ «մարդը ազատագրուած ըլլայ ցեղային, կրօնական-դաւանական, ազգային, քաղաքական, ընկերային և տնտեսական ամեն տեսակ խտրականութենէ, կաշկանդումէ, բռնութենէ և շահագործումէ»), կրնանք յուսալ, որ ցեղապաշտութեան վարակը յաղթահարուած կ'ըլլայ: Կրնանք յուսալ... Իսկ ատիկա կրնայ պատահիլ «միայն հաւաքական ճիգով», կ'եզրակացնէր Տանի Լաֆեռիեր:

Աւելցնեմ, որ այդ հաւաքականը պէտք է ըլլայ բոլո՛ր մակարդակներուն վրայ՝ համայնքային, ազգային թէ միջազգային:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1. Dany Laferrière, Le racisme est un virus, «Le Devoir», 2020-06-10:
2. «Oxford English Dictionary» (համացանցէն):
3. Wikipedia (համացանցէն):
4. Dany Laferrière,
5. Անդ:
6. Nelly Marcoux, Oser dire, «Le Devoir», 2020-06-04:
7. Կաստա – դասակարգ, առանձնացուող խումբ:
8. Ծրագիր Հ. Յ. Դաշնակցութեան 1892, Հ.Յ.Դ. վաթսունամեակ (1890-1950), կազմեց Ս. Վրացեան, Պոսթրն, «Հայրենիք»-ի տպարան, 1950:
9. Գիւզալեան Գ., Հայոց յեղափոխութիւնից առաջ, «ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ Հ. Յ. Դաշնակցութեան (1890-1950)», կազմեց Ս. Վրացեան, Բոստոն, «Հայրենիք»-ի տպարան, 1950:
10. Կոռ ու բէկար (բեգար) – հարկադիր ձրի աշխատանք:
11. Հայ յեղափոխական դաշնակցութիւն, ԾՐԱԳԻՐ, հաստատուած ԻԷ. (արտակարգ) Ընդհ. Ժողովին կողմէ, 1998:

Ռոստոմի նամակը՝ Սիմոն Վրացյանին

Դուք՝ ամերիկացիներդ, իզուր եք կարծում, թե մենք խրվել ենք դպրոցական գործի մեջ և ինքնապաշտպանության համար ոչինչ չենք անում: Բացարձակ կերպով սխալ է այդ: Դպրոցը՝ իր հերթին, բայց մեր գլխավոր մտահոգությունը հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանությունն է: Գիտե՞ս՝ ինչ օրեր ենք ապրում: Պոլսահայերը տարված են բարենորոգումների հույսով և պարլամենտարիզմով: Երանի հավատացողներին...

Այդ բոլորը՝ լավ, բայց մեր հույսը պետք է մեր վրա դնենք: Ամերիկայի ընկերները թող վստահ լինեն, որ մենք էլ իրենց պես ենք մտածում, և եթե կարող են օգնել ինքնապաշտպանության գործին, թող փող չխնայեն: Դրոն՝ Բայազեդում, Արամը՝ Վանում, Փիլոսը և մի քանի ընկերներ այդ գործին են լծված: Ցավալին այն է, որ միջոցները պակաս են. մեր հարուստները գրպանները պինդ փակել են, իսկ աղքատ ժողովուրդը... Ի՞նչ կարող է անել: Հայ հարուստը հոգին կտա, բայց փող չի տա. չեն մտածում, որ վաղը թշնամին հոգին էլ կառնի, փողն էլ...

1914, ապրիլի 2


Ապրիլի 7-ը Մայրության և գեղեցկության օրն է
Հայրենիքին վերածնունդ, հայ մայրերին երջանկություն
ԴՐՕՇԱԿ
Գործ՝ Հայկ Արամեի